Azg
Ազգ
21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007 ՈՒՐԲԱԹ 172 (3824)

Հայաստանի Ազգային Գրադարան

Ցեղասպանության զոհերի հուշարձան Մեծ Բրիտանիայում

Մեծ Բրիտանիայի Ուելս քաղաքի «Խաղաղության» տաճարի բակում նոյեմբերի 3-ին տեղի կունենա Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի բացման արարողությունը: Թեմակալ առաջնորդի՝ Նաթան եպս. Հովհաննիսյանի ձեռամբ կկատարվի հուշարձանի օծման արարողությունը, որից հետո տաճարի ներսում ընդունելություն կկազմակերպվի: Հուշարձանը կառուցվել է Ուելսի հայ համայնքի եւ Ջոն Թորոսյանի հովանավորությամբ:

Ցույց «Ակօս»-ի խմբագրատան մոտ

Թուրքիայի մի շարք հասարակական կազմակերպություններ եւ արվեստագետներ Հրանտ Դինքի սպանությունը գովաբանող երգի խոսքերի հեղինակի եւ կատարողի դեմ բողոքի ցույց են անցկացրել թերթի խմբագրատան առջեւ: Ցուցարարները պահանջել են դատել ոճրագործությունը գովաբանող ազգայնամոլներին

Ստեղծե՞լ ենք մեր երազած պետությունը...

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսօր մենք նշում ենք Հայաստանի անկախության 16-րդ տարեդարձը: 16 տարին թերեւս բավարար ժամանակ է, որպեսզի Հայաստանն այլեւս չկոչենք նորանկախ: Բարեբախտաբար վերջերս այդ արտահայտությունն ասիճանաբար դուրս է մղվում է մեր բառապաշարից: Բարեբախտաբար, անկախ երկրում ապրելը դառնում է բնականոն երեւույթ եւ արդեն դադարում ենք զարմանալ, որ Հայաստանն այլեւս անկախ է: Մի բան, որ 20 տարի առաջ ուղղակի անհերեւակայելի կթվար: Որ յուրաքանչյուր ժողովրդի բնական վիճակը սեփական անկախ պետության մեջ ապրելն է, ապացուցված ճշմարտություն է եւ հավելյալ ապացուցման կարիք չունի: Սակայն դա պետք է լինի մեկ գլխավոր պայմանի առկայությամբ՝ անկախ պետություն ստեղծելը ոչ թե ինքնանպատակ պետք է լինի, այլ միջոց՝ տվյալ ազգի զարգացման եւ բարգավաճման, խաղաղ ու բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Պետության բոլոր քաղաքացիները պետք է զգան, որ դա իրենց պետությունն է, որ իրենք են այդ պետության անմիջական կերտողները, այդ պետության տերն ու ծառան: Այլապես անկախությունը կարող է բարեկեցություն բերել միայն իշխանությանը մոտ կանգնած այս կամ այն խմբին, բնակչության

գերակշիռ մասին թողնելով համաստարած թշվառության մեջ: Արդյոք մենք կառուցե՞լ ենք այնպիսի երկիր, որը դարձել է բնակչության համար երանելի ազգային պետություն, թե՞ այդպիսին է լոկ իշխանական շրջանակների համար:

Միանշանակ չի կարելի պատասխանել այս հարցին: Նախ դիտարկենք 16 տարվա մեր անցած ճանապարհը: Անշուշտ, այդ ճանապարհի սկզբին բազում էին ծանր զրկանքներն ու զոհողությունները: Դրանց մեջ զգալի մաս էին կազմում օբյեկտիվ, մեր կամքից անկախ դժվարությունները: Բայց մի՞թե դրանք չէին կարող ավելի թեթեւ լինել, մի՞թե հնարավոր չէր մարդկանց ապացուցել, որ այդ դժվարությունները կիսում են բոլորը՝ սկսած երկրի առաջին դեմքից մինչեւ յուրաքանչյուր շարքային քաղաքացի: Մարդիկ ավելի շատ դժգոհում էին ոչ թե դժվարություններից, գրից ու մթից, այլ անարդարություններից, իր կողմից իսկապես ժողովրդավարական ճանապարհով ընտրված (1990-1991) իշխանություններից: Իշխանություններ եւ իշխանավորներ, որոնք դժբախտաբար քարտանդ արեցին ժողովրդական վստահության այն մեծ պաշարը, որ տրվել էր նրանց: Մինչդեռ ինչե՞ր կարելի էր անել այդ վստահության պաշարով:

Տես էջ 2

ԼՍՎՈՈՏ

Պուտինը աջակցում է

«Վալդայ» միջազգային բանավեճի ակումբում Ռուսաստանի նախագահը հայտարարել է, որ դեկտեմբերյան խորհրդարանական ընտրություններում աջակցելու է «Միացյալ Ռուսաստան» կուսակցությանը: Միաժամանակ Պուտինը նշել է, որ «Արդար Ռուսաստան» կուսակցությունը, որի հիմնադիրը Սենատի նախագահ Սերգեյ Միրոնովն է, նույնպես կստանա իր աջակցությունը:

Սուգ Բեյրութում

«Ազդակ» թերթը Բեյրութից հաղորդում է, որ Բեյրութում սպանված պատգամավոր Անտուան Ղանեմի կուսակիցները «Փաղանգավորներ» կուսակցությունից, որոնում են ընդունել սուգ հայտարարել եւ գործադուլի կոչ են արել: Վայրագ սպանությունը դատապարտել են Լիբանանի բոլոր քաղաքական ուժերը, կրոնական եւ էթնիկ համայնքները:

Նոր նշանակում

ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի որոշմամբ Արամ Մելիքոնյանն ազատվել է կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի տեղակալի պաշտոնից: Այդ պաշտոնին նշանակվել է Ջաջավան Նուրիջանյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի ուղերձը Անկախության օրվա առթիվ

Սիրելի հայրենակիցներ

Ուրախ եմ շնորհավորում եմ ձեզ Անկախության օրվա առթիվ: Նվիրական այս օրը մաղթում եմ ձեզ քաջառողջություն, ընտանեկան երջանկություն եւ հաջողություններ ձեր ախտանշում:

Մեր սերնդի ջանքերի շնորհիվ իրական բովանդակություն է ստանում հայ ժողովրդի հարյուրամյակների երազանքը՝ հայոց անկախ պետությունը: Արդեն 16 տարի մենք միասին ամրապնդում ենք այն, հիմքեր ենք գցում մեր հասարակության հետագա բարգավաճ ու բարեկեցիկ կյանքի համար: Անկախ պետության կերտման գործընթացում մեր սերունդը տվել է թե՛ հերոս ռազմիկներ, թե նշանավոր արվեստագետներ ու գիտնականներ, թե՛ ախտարհաճոյակ մարզիկներ, թե՛ ստեղծագործ ախտանշի նվիրյալներ:

Համոզված եմ, որ տոնական այս օրը մեր ընտանիքներում խորհում են հայոց պետության հարատեւման, բարգավաճման, երեխաների երջանիկ ապագայի մասին:

Մաղթում եմ բոլորիդ նվիրական իղձերի իրականացում:

ԳԱԳԻԿ ՇԱՌՈՒԿՅԱՆ
Բարգավաճ Հայաստան
կուսակցության նախագահ

ԼՂՀ-ն պատրաստվում է ՏԻՄ ընտրությունների

Հոկտեմբերի 14-ը ԼՂՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրն է: Ընտրություններ են անցկացվելու հանրապետության 162 համայնքներում, որի կապակցությամբ, ըստ ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական տվյալների, արդեն առաջադրվել են 293 թեկնածուներ: Հնարավոր է՝ նրանց թիվն առաջիկա օրերին նվազի, որովհետեւ թեկնածուների գրանցումը շարունակվելու է մինչեւ սեպտեմբերի 24-ը:

Միեւնույն ժամանակ, 218 համայնքներում տեղի կունենան ավագանու անդամների ընտրություններ: Դարձյալ ըստ ԿԸՀ-ի՝ ավագանու համար առաջադրվել են 1447 թեկնածուներ:

Ի տարբերություն ամռանը կայացած նախագահական ընտրությունների, ՏԻՄ ընտրությունները ընտրապայքարի մեծ ակտիվությամբ հագիվ թե առանձնանան: Համենայն դեպս, հանրապետությունում ամենամեծ համայնքը համարվող մայրաքաղաք Ստեփանակերտում, որտեղ քաղաքապետի պաշտոնի համար նախապես մեկ տասնյակից ավելի անուն էր շրջանառվում, առաջադրվել է ընդամենը երկու թեկնածու, ընդ որում՝ բավականին տարբեր քաղաքական կարգերով:

Ստեփանակերտի համայնքի ավագանու 15 անդամների տեղերը զբաղեցնելու համար առաջադրվել են 38 թեկնածուներ, որն այնքան էլ մեծ թիվ չէ հավակնությունների «փուրան» թեժ պահելու համար:

Համաձայն ԼՂՀ սահմանադրության՝ համայնքների ղեկավարներն ընտրվելու են ոչ թե 3 տարի, ինչպես նախկինում էր, այլ 4 տարի ժամկետով:

ԿԻՄ ՂԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Երեւանն ու Նիցցան քույր քաղաքներ

Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը եւ Ֆրանսիայի Նիցցայի քաղաքապետ Ժաք Պեյրայի միջեւ երեկ ստորագրվեց երկու քաղաքները քույր քաղաքներ հռչակելու համաձայնագիր: Կարեւորելով այս պայմանագրի ստորագրումը, Երվանդ Զախարյանը նշեց, որ այն ավելի կամրապնդի հայ-ֆրանսիական ջերմ հարաբերությունները: Իսկ Ժաք Պեյրան իր հերթին կարեւորեց հայկական համայնքի նշանակալի ազդեցությունը Նիցցայում, նշելով, որ հայերի նախնիներից շատերն այս քաղաքում են հաստատվել 1915-ի եղեռնից հետո:

Ա. Մ.

Աբխազիա գնալը՝ պատժելի, իսկ ներդրումներն այնտեղ՝ անօրինական

Վրաստանը կենթարկի պատասխանատվության Զավախքում պատերազմի կոչ անողներին, եթե այդպիսիք, իհարկե, կան

«Ազգի» սեպտեմբերի 20-ի համարում տեղեկացրել ենք, որ Հայաստանում Վրաստանի դեսպանատան տարածած պաշտոնական հաղորդագրության համաձայն, Վրաստանի իշխանությունները զգուշացնում են «Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջաններում ներդրումների կատարման անօրինականության մասին: Այս եւ մի քանի այլ հարցերի առնչությամբ «Ազգին» պարզաբանումներ է տվել Հայաստանում Վրաստանի դեսպան Ռեւազ Գաչեչիլադզեն: Հանդիպմանը ներկա էր նաեւ Վրաստանի հյուպատոս Գիվի Շարանգիան, որ մեկնաբանեց Վրաստանում ՀՀ քաղաքացիների ձերբակալությունների խնդիրը:

-Պրն դեսպան, «Ազգը» հրապարակել է դեսպանատան հաղորդագրությունը: Ինչո՞վ է պայմանավորված նման հաղորդագրության ի հայտ գալը եւ ինչո՞ւ այս օրերին:

- Օգտվելով առիթից, նախ շնորհավորում եմ հայ ժողովրդին եւ Հայաստանին անկախության օրվա կապակցությամբ՝ ցանկանալով բարգավաճում, տնտեսական զարգացում եւ աճ, երջանկություն ու խաղաղություն: Ինչ վերաբերում է հարցին, ապա բազմաթիվ տեղեկություններ են ի հայտ եկել, թե 1993-ին Աբխազիայի տարածից բռնի հեռացվածների սեփականությունը վաճառվում է: «Ֆորբս» ամսագրի ռուսական հրատարակչությունը հրատարակել է մեծածավալ գովազդ, որտեղ թվարկված էին օբյեկտներ, մասնավոր տներ, որ վաճառվում են Աբխազիայի տարածքում: Հասկանալի է, որ դա ռուսաստանյան քաղաքացիների համար է,



բայց մենք ցանկանում ենք զգուշացնել բոլորին, այդ թվում՝ հայերին, որ նրանք անօրինական կերպով սեփականություն ձեռք չբերեն այնտեղ, քանի որ այդ սեփականությունն իրականում, այսպես կոչված, «ավար» է, որը ենթակա է վերադարձման իրական սեփականատերերին այն ժամանակ, երբ այնտեղ կվերականգնվի Վրաստանի պետական ինքնիշխանությունը: Իսկ վաղ թե ուշ դա տեղի կունենա: Ուստի այն մարդիկ, ում մենք չենք զգուշացրել, հետո կհայտնվեն ծանր վիճակում եւ ոչ մի դատարան նրանց չի կարող պաշտպանել, քանի որ մենք այս հայտարարությունը ուղարկել ենք նաեւ միջազգային կառույցներին: Բացի այդ, իրականացվում է Վրաստանի նախագահի հատուկ ծրագիր, որով արբանյակային միջոցներով դիտարկվում է Աբխազիան, եւ ողջ սեփականությունը գույքագրված է, նշվում են սեփականատերերը: Երբ որեւէ մեկն իր սեփականությունն է այնտեղ վաճառում, դա այլ հարց է: Բայց եթե վաճառում են տեղահանվածների տները, այդ դեպքում առնվազն այդ սեփականությունը հետ կվերցվի: Մենք այդ առումով էլ զգուշացնում ենք մեր քաղաքացիներին, որ սադրանքի չենթարկվեն:

Տես էջ 5

«Վիասֆեր» տեխնոպարկը լավագույնն է տարածաշրջանում

«SS ամիսը» դառնում է ավանդական՝ որակական լրացումներով

Այս տարի «Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ամիսը» նախորդ տարվա ամսից ավելի երկար կտևի, ընդ որում, մեկնարկն արդեն տրվել է սեպտեմբերի 13-ին՝ մինչեւ հոկտեմբերի վերջ: Վարչապետի հովանավորությամբ անցկացվող այս միջոցառման համատեսում, ըստ վարչապետին կից SS զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի, փորձ է արվում մեծացնելու ոլորտության դերն ու աջակցությունը:

Կազմակերպիչների թվում են ՀՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը, Հայաստանի Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամը, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը, Հայաստանի SS ձեռնարկությունների միությունը, ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպությունը (UNIDO), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագիրը, «Synopsys», «Microsoft» եւ «SUN Microsystems» ընկերությունները:

Արդեն անցկացվել են «Էլեկտրատեխնիկայի եւ ռադիոէլեկտրոնիկայի ճարտարագիտական միջազգային ինստիտուտի Արեւելք-Արեւմուտք. Նախագծում եւ թեստ» 5-րդ միջազգային սիմպոզիումը, «Microsoft» ընկերության «Windows»-ի իրական առավելությունը» նախաձեռնության շնորհանդեսը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի եւ ամերիկյան «National Instruments» ընկերության միջեւ ստորագրվել է կրթական ծրագիր իրականացնելու համաձայնագիր: Այս օրերին անցկացվում են «ECAbit 2007» ինովացիոն միջազգային համաժողովը (սեպտեմբերի 17-21) եւ Համակարգչային գիտության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների 6-րդ միջազգային համաժողովը:

Բավականին շատ եւ բովանդակալից միջոցառումների շարք ունեցող «SS ամիս»-ը կեզրափակվի «DigiTech 2007» ավանդական միջազգային ցուցահանդեսով (հոկտեմբերի 26-28): Ամսվա ընթացքում կանցկացվի նաեւ երիտասարդ ծրագրավորողների «Imagine Cup-Armenia» համաշխարհային մրցույթը:

«Synopsys-Armenia» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ռիչ Գոլդմանի կարծիքով, SS ոլորտը Հայաստանի առագաստ է, որտեղ Հայաստանը գերազանցություն կարող է ցուցաբերել, թեեւ դրա համար անելիքները դեռ շատ են:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանի խոսքերով, այս տարի ոչ միայն քանակական, այլեւ որակական աճ է արձանագրվել: Առաջին անգամ Հայաստան է բերվել տարածաշրջանի ինովացիոն խթանման միջազգային կոնֆերանսը, Հայաստանում այն անցկացնելու խթաններից էլ Ենգիբարյանն առանձնացնում է «Վիասֆերի» եւ ինկուբատոր հիմնադրամի առկայությունը, որտեղ տարածաշրջանի համար ներկայացվում են որոշ հաջողության պատմություն:

«Վիասֆեր» տեխնոպարկի գլխավոր տնօրեն Արամ Վարդանյանի ներկայացմամբ, այսօր տեխնոպարկում տեղակայված են 30-ից ավելի ընկերություններ, կառույցներ, ծառայություններ, իսկ «Սինոփսիս» ընկերության մուտքով ընդհանուր աշխատողների թիվը հասել է 800-ի: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների, «Վիասֆերը» տարածաշրջանի լավագույն բարձր տեխնոլոգիական պարկն է: Դա է վկայում նաեւ այն իրողությունը, որ տեխնոպարկին հրավիրել են սանձնելու Մոլդովայում Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հիմնած SS պարկի կառավարումը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Զարմանահրաշ ձեռքբերումներ

«Նոր ժամանակներ» կուսակցության լրատվական ծառայությունը տարածել է հաղորդագրություն, որում նշվում է, որ Արամ Կարապետյանը ձեռք է բերել «Զարուտի» հրատարակչական տան բաժնետոմսերի 25 տոկոսի կառավարման իրավունքը: Նշենք, որ այս ընկերությունն է հրատարակում «Արգումենտի ի Ֆակտի», «Կոմսոմոլսկայա պրավդա» նաեւ «Իսկական իրավունք» թերթերը: Այս գործարքի մեջ զարմանալին այն է, որ փաստորեն Կարապետյանը փորձում է վերահսկողություն սահմանել «Իսկական իրավունք» թերթի նկատմամբ, որը պատկանում է Հայկ Բաբուխանյանին, իսկ հայտնի է, որ երկու այդ գործիչների հարաբերությունները, շատ մեղմ ասած, լավ չեն: Արդյոք սա նշանակո՞ւմ է, որ նրանք հարաբերությունների ինչ-որ ընդհանուր եզրեր են գտել, թե՞ ուղղակի խոսքը գնում է լրատվամիջոցներ ձեռք բերելու փորձի մասին: Ըստ **«Ազգ»-ի** աղբյուրների «Զարուտի» ՍՊԸ-ի հիմնական բաժնետերերն են Հայկ Բաբուխանյանը, Գեղամ Գրիգորյանը, Հովհաննես Գալաջյանը եւ Վիգեն Հակոբյանը: Հայտնի է, որ այս խառնակից Վիգեն Հակոբյանն է մոտ հարաբերությունների մեջ եղել Արամ Կարապետյանի հետ եւ խորհրդարանական ընտրություններում եղել է 5-րդ «Նոր ժամանակներ» կուսակցության ցուցակում: Բացառված չէ, որ այս գործարքից հետո, Արամ Կարապետյանը փորձի ձեռք բերել մնացած բաժնետոմսերը:

Ստեղծե՞լ ենք մեր երազած պետությունը...

1-ին էջից

Հաղթահարեցինք 90-ականների դաժան տարիները եւ այդ ժամանակվա իշխանություններին: Հաղթահարեցինք, պետության հանդեպ զարթնած հավատի մեծ կորուստով: Իշխանությունները փոխվեցին: 1998-ից մինչ օրս իշխանության ղեկին, ըստ էության, նույն ուժն է: Սպասելիները գործող իշխանություններից այլեւս մեծ չէին: Հավատը իշխանության նկատմամբ կոտրվել էր երկար ժամանակով: Ցավալին այն է, որ դա հավատի կորուստ էր նաեւ պետության նկատմամբ: Արդարացրի՞ն նոր իշխանությունները թեկուզ արդեն ոչ մեծ վստահությունը: Ժխտել այն, ինչ տեղի ունեցավ մեր երկրի տնտեսական կյանքում վերջին 6-7 տարիներին, անհնար է: Համատարած աղքատությունը էապես նվազեց, տնտեսությունը զարգացավ եւ մենք այսօր ունենք բոլորովին այլ իրավիճակ, քան ասենք 1997-ին:

Սակայն գործող իշխանությունները եւս մնացին նախկին իշխանությունների ստեղծած համակարգի շրջանակներում: Անարդարությունները չվերացան, զարգացող տնտեսության մեջ սկսեցին ազդեցիկ դիրքեր զբաղեցնել երկրի ղեկավարներին մոտ կանգնած մենաշնորհատեր գործարարները, դեռեւս մոտ 1 մլն մարդ համարվում է աղքատ, մարդիկ իրավացիորեն դեռ չեն հավատում պետական պատասխանատուներին, իսկ վերին իշխանություններն էլ դեռ գտնվում են նաեւ օրենքից վեր: Ուրեմն կարո՞ղ ենք ասել, որ ստեղծել ենք մեր երազած Հայաստան պետությունը, թե՞ ձախողել ենք այդ գործում:

Թերեւս կարող ենք ասել, որ շատ ճանապարհ ենք անցել ժողովրդավարական եւ բարեկեցիկ երկիր ստեղծելու ուղղությամբ, բայց դեռ ավելի շատն էլ պետք է անցնենք: Ուստի մաղթենք մեզ բոլորիս այդ ճանապարհն անցնել հնարավորինս արագ եւ նվազ զրկանքներով, որպեսզի շուտ հասնենք այն պահին, երբ սեպտեմբերի 21-ը միմյանց շնորհավորենք առանց թաքնված կամ անթաքույց երգիծանքի, հպարտությա՛ն զգացումով:

Անհրաժեշտ է պատվաստվել կարմրուկի եւ կարմրախտի դեմ

Երեկ ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչությունում կայացած ասուլիսը մեր երկրում հոկտեմբերի 1-13-ը անցկացվող կարմրուկի եւ կարմրախտի դեմ պատվաստումներին էր վերաբերում: Նախարարության իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար Գայանե Սահակյանը ներկայացրեց, թե ինչ նախապատրաստական աշխատանքներն են իրականացվել հանրապետության ողջ տարածքում, բացվել են ժամանակավոր պատվաստման կետեր: Մեր հանրապետությունում կարմրուկը եւ կարմրախտը եւս շարունակում են մնալ հանրային առողջապահության գերակա խնդիրների շարքում: 2004-2005-ին արձանագրվել է կարմրուկի 4064 դեպք, որը վկայում է, որ դեռեւս առկա է հիվանդության փոխանցման ռիսկը: Եվ, որպեսզի մինչեւ 2010-ը կարմրուկի եւ կարմրախտի տեղական շտամներով հարուցված հիվանդացման դեպքերը վերացվեն, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ՄԱԿ-ը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ 1,5 միլիոն պատվաստանյութ են տրամադրել առողջապահության նախարարությանը լրացուցիչ պատվաստումներ անցկացնելու համար: Առողջապահության նախարարությունը կոչ է անում ռիսկային տարիքի անձանց պարտադիր ենթարկվել պատվաստման իրենց բուժկետերում, ամբուլատորիաներում, բուժարաններում, դպրոցներում կամ ժամանակավոր բուժկետերում:

ՄԱՐԻՆԵՍԻ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Հայտնաբերվել է դիակ

Սեպտեմբերի 19-ին, ժամը 16.10-ին տեղեկություն է ստացվել, որ Գյումրիի Վարդ Բաղ ջրավազանում հայտնաբերվել է նույն քաղաքի Գոգոլի փողոցի թիվ 8 տան բնակիչ՝ 1958-ին ծնված Իվա Գյուլջյանի դին, որը ջրից դուրս են բերել ջրավազանի աշխատակիցները:

Մ. Մ.

Մետրոպոլիտենի աշխատանքի տեւողությունը կերկարացվի

Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա միջոցառումների կապակցությամբ, Երեւանի քաղաքապետի կարգադրությամբ Երեւանի մետրոպոլիտենը սեպտեմբերի 21-ին կաշխատի երկարացված ռեժիմով, մինչեւ ուշ գիշեր՝ սեպտեմբերի 22-ի ժամը 2-ը:

Ա. Մ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՍՈՒՄ

«Հայաստանը կապահովի Ադրբեջանի շախմատիստների անվտանգությունը»

Թեեւ այդ երկիրը մասնակցության հայտ դեռ չի ներկայացրել

Կառավարությունը երեկ պահուստային ֆոնդից 12 մլն դրամ է հատկացրել սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությանը՝ մինչեւ 20 տարեկան պատանիների եւ աղջիկների շախմատի աշխարհի առաջնության կազմակերպչական հարցերին աջակցելու համար: Անդրադառնալով այդ որոշմանը, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար **Արմեն Գրիգորյանը** հայտնեց, որ այս տարվա հոկտեմբերի 2-17-ին Երեւանում անցկացվելիք աշխարհի առաջնության կազմակերպման համար կառավարությունն արդեն տրամադրել էր շուրջ 80 մլն դրամ: Նա նաեւ հույս հայտնեց, որ մեր պատանի շախմատիստները հաջող հանդես կգան, ինչպես նախորդ անգամ, երբ Ջավեն Անդրեասյանը դարձավ չեմպիոն: Ներկայումս, ըստ նախարարի, մասնակից երկրների կողմից հայտեր են ներկայացվում աշխարհի առաջնությանը մասնակցելու համար:

Պատասխանելով այն հարցին, թե նման հայտ ներկայացրե՞լ է Ադրբեջանը, Արմեն Գրիգորյանը տեղեկացրեց, որ դեռեւս նման հայտ չի ստացվել, բայց նշեց, որ Հայաստանի իշխանությունները միանշանակ կապահովեն ադրբեջանական պատվիրակության անվտանգությունը մեր երկրում:

Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարն իր գոհունակությունը հայտնեց Հայաստանը ներկայացնող գերծանր քաշային ըմբշամարտիկի Բարվում ունեցած հաջող ելույթով եւ նվաճած բրոնզե մեդալով, որի պատվին բարձրացվեց հայոց եռագույնը:

Ա. Մ.

«Տնտեսական աճը հունվար-օգոստոսին աննախադեպ է եղել»

Հավաստիացնում է ազգային վիճակագրական ծառայության պետը

Կառավարության նիստի ժամանակ երեկ ազգային վիճակագրական ծառայության պետ **Ստեփան Մնացականյանը** ներկայացրել է այս տարվա հունվար-օգոստոս ամիսներին արձանագրված մակրոտնտեսական ցուցանիշները: Համաձայն դրանց, այս ժամանակահատվածում տնտեսական աճը Հայաստանում կազմել է 13,6 տոկոս: Նման ցուցանիշ, ըստ Ստեփան Մնացականյանի, աննախադեպ է: Ըստ ոլորտների, պատկերը հետեւյալն է: Արդյունաբերության աճը կազմել է 1,7 տոկոս, առանց էներգետիկայի արդյունաբերության աճը եղել է 0,9 տոկոս, առանց ադամանդի արտադրության՝ 8,2 տոկոս: Գյուղատնտեսության աճը կազմել է 7 տոկոս: Ինչպես վերջին տարիներին սովորաբար լինում է, ամենամեծ աճն արձանագրվել է շինարարության եւ ծառայությունների ոլորտներում: Առաջինում կազմել է 19,6 տոկոս, երկրորդում՝ 19,7 տոկոս: Մանրածախ առեւտրաշրջանառության աճը կազմել է 10,9 տոկոս:

Այս տարվա առաջին ութ ամիսներին արձանագրվել է 0,8 տոկոս գնաճ: Պատասխանելով այն հարցին, թե հացի, կարագի, ձեթի թանկացումների ֆոնի վրա ինչպե՞ս հասկանալ գնաճի ցուցանիշը, Ստեփան Մնացականյանն ասաց, որ այդ թանկացումների տվյալները կարտացոլվեն, երբ ներառվեն այս՝ սեպտեմբեր ամսվա տվյալները: Հարկ է նշել, որ օգոստոս ամսին հունիսի նկատմամբ գնաճը կազմել է 1,5 տոկոս, ինչն էլ ազդել է գնաճի ընդհանուր ցուցանիշի վրա:

Միջին ամսական աշխատավարձը կազմել է 73,6 հազար դրամ եւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 21,5 տոկոսով: Բյուջետային ոլորտի աշխատողների միջին աշխատավարձը կազմել է մոտ 54 հազար դրամ, ոչ բյուջետայիններինը՝ 91,8 հազար դրամ:

Արտաքին առեւտրաշրջանառությունը աճել է 51,4 տոկոս եւ կազմել 2 մլրդ 659 մլն դոլար: Արտահանումն աճել է 23,2 տոկոսով եւ կազմել 733 մլն դոլար, ներմուծումն աճել է 46,7 տոկոսով եւ կազմել 1,9 մլրդ դոլար: Փաստորեն, ըստ ազգային վիճակագրական ծառայության ներկայացրած տվյալների, արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը շարունակվել է խորանալ: Այն այժմ կազմում է մոտ 1,2 մլրդ դոլար:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 78 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լուրերի սենյակ / հեռ. 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահաւաք ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարչային շարասենյակ
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Հերխմխկան

«Ի՞նչ է, Ձեր հորեղբա՞յրն է դոլարը»

Վարդան Բոսանջյանը աշխարհում ոչինչ չի բացառում

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Վարդան Բոսանջյանը ԲՀԿ-ի խորհրդարանական նորամուտը ակտիվության եւ կարգադրելիության առումով լավ է գնահատում՝ դեռ սկիզբն է, իր հունը դեռ խմբակցությունը կգտնի:

Վերջին շաբաթվա ընթացքում նախագահ Քոչարյանը իր կամքը հայտնեց իրավահաջորդի վերաբերյալ, ՀՅԴ-ն հայտնի դարձրեց, թե սեփական թեկնածուով է գնալու նախագահական ընտրությունների: Վերջինիս առումով ԲՀԿ-ականներից մեկ-երկուսի բացասական վերաբերմունքը ԶԼՄ-ներում երեւակվել է, սակայն անձամբ Վ. Բոսանջյանը նորմալ է համարում այդ փաստը, քանի որ ՀՅԴ-ն մինչ այդ էլ ասել էր սեփական թեկնածուով հանդես գալու մասին. «Իսկ Դաշնակցության թեկնածուները գոնե այս պահի դրությամբ ուժեղ թեկնածուներ են, Ռուսամյանը, Հովհաննիսյանը բարձր մակարդակի անձնավորություններ են, բայց բոլոր դեպքերում ես չեմ կարծում, որ իրենք դեռեւս կարողանան մեծ մրցակցության մեջ մտնել կոալիցիայի միասնական թեկնածուի հետ», նկատեց նա: Իսկ մրցակցությունն, ըստ Բոսանջյանի, պետք է լինի քաղաքակիրթ:

Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջադրման մասին նա դեռ ձեռնպահ է մնում կարծիք հայտնելուց՝ քանի դեռ վերջինս որեւէ բան չի հայտնել, պարզապես անհեռանկարային է այդ ուղղությամբ վերլուծություն անելը. «Մենք ունենք ընտրական օրենսգիրք, բոլոր քաղաքացիներն էլ իրավունք ունեն ընտրելու եւ ընտրվելու, իսկ հասարակության կարծիքը արձանագրվում է գործընթացի վերջում»: ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանի ասածը, այն է՝ քաղաքական ուժ չկա Տեր-Պետրոսյանի թիկունքում, Վ. Բոսանջյանը չկիսեց. «Քաղաքական ուժ» հասկացությունը կարելի է նաեւ չօգտագործել այս դեպքում, քանի որ պատմությունը բազմիցս ցույց է տվել՝ գործերը կարող են ընթանալ մի ձեւով, որը երբեք ոչ ոք չէր կանխագուշակել. տեղավորվենք այս նախադասության մեջ՝ աշխարհում ոչինչ հնարավոր չէ բացառել», իմաստնացավ Վ. Բոսանջյանը:

Ըստ նրա՝ հազիվ թե մի առարկայական ընդդիմադիր միավորում հանդես գա, ԼՂՀ ճանաչման վերաբերյալ «Ժառանգության» նախաձեռնությունը ժամանակավրեպ է:

Դրամ-դոլար տատանումների վերաբերյալ լրագրողական հետաքրքրությանը պատասխանում է «Ոսկե հորքի» բառերով. «Ինչ է, Ձեր հորեղբա՞յրն է դոլարը. ՀՀ-ում օրենքով ամրագրված է, որ ազգային արժույթն այստեղ դրամն է, եւ հավատացնում եմ ձեզ, որ ազգային արժույթը դոլարը չէ, թեեւ երկիրն այս պահին սուբյեկտիվ եւ օբյեկտիվ պատճառներով դոլարիզացված է, երկիրը եթե երկիր է ուզում դառնալ՝ պետք է հարգի իր սեփական արժույթը»: Ուրեմն եւ կոտրի ներկա փոփոխությունը մեր դրամի արժեվորման արդյունք է:

Մամուլից վերցված մեր մեջբերմանը, թե կուրսը բարձրացվել է, քանի որ տնտեսվարողներից մեկին արագ մեծ քանակի դոլար է պետք, որոշել են նրան թանկ դոլար վաճառել՝ պատասխանեց. «Մեր հանրությունը պետք է վեր կանգնի ամենատարբեր ֆոբիային-համբարային խոսակցություններից: Մի՞թե ակնհայտ չէ, որ դա իրականության հետ գրեթե կապ չի կարող ունենալ»:

Փոխարժեքի կարգավորման ԿԲ լողացող կուրսը միաժամանակ նա հակված է հայաստանի նման փոքր երկրի համար ճիշտ չհամարել, որովհետեւ փոքր հանրապետության համար դրամային իշխանությունների կողմից կառավարելն առանց լողացող կուրսի ավելի մատչելի եւ հնարավոր է. «Ինձանից ավելի խորը մասնագետներ կան, որոնք, սակայն բերում են հիմնավորումներ, ըստ որի լողացող կուրսը մեր տնտեսական զարգացման համար մնում է կարեւոր գործոններից մեկը»:

Խոսքը եկամ-հասամ բարեւարությանն ու հարկերից խուսափելուն:

Այո, սվերային տնտեսությունը բավականաչափ մեծ տոկոս է կազմում, իշխանությունն էլ դա ընդունում է, համաձայնեց Վ. Բոսանջյանը. «2,5 միլիարդ դոլարի բյուջե, որ պիտի ունենանք՝ դա այն դեպքում է լինելու, երբ հարկային դրույքաչափերը չեն փոխվելու, վարչարարությունը չասաց, բայց դա նշանակում է սվերային կրճատում: Կա վճռականություն, եւ համոզված եմ, որ արդեն ժամանակն է կրճատել սվերը. համարում եմ, որ շատ բնականոն գործընթաց է: Բայց հայերս մաքսիմալիստ ենք եւ ուզում ենք, որ հենց վաղը կամ վաղը չէ մյուս օրը ամեն ինչ լավ լինի»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ալբերտ Բազեյանը կղեկավարի կուսակցությունը մինչեւ առաջիկա համագումարը

Հակառակ ներկուսակցական միջադեպերին

«Երկու տարի առաջ կուսակցության քաղխորհրդի անդամները անլուծելի խնդիրներ էին առաջադրում, իսկ հունիսին կայացած մեր քաղխորհրդի նիստում նորից պահանջներ, առաջարկներ, պնդումներ եղան: Ես էլ ասացի՝ եթե կա մեկը, որ կարող է լուծել այդ խնդիրները, ես պատրաստ եմ վայր դնել լիազորություններս: Ոչ ոք չցանկացավ վերցնել այդ պատասխանատվությունը», «Ազգային վերածնունդ» կուսակցության շուրջը ստեղծված խոսակցություններին անդրադառնալիս երեկ «Հայաքար» ակումբում ասաց կուսակցության ղեկավար Ալբերտ Բազեյանը: Հիշեցնենք, որ նախօրեին «Ազգային վերածնունդ» կուսակցության տարածքային մի քանի կառույցների ղեկավարներ հայտարարություն էին տարածել, որում դատապարտել էին «Դաշինքի» եւ ՀՌԱԿ-ի հետ միավորվելու Ալբերտ Բազեյանի քաղաքականությունը՝ մեղադրելով կուղեկավարին կուսակցությանը անգործության մատնելու մեջ:

Ալբերտ Բազեյանի խոսքով, նախ հայտարարության հեղինակները ոչ թե կուսակցության տարածքային մի շարք կառույցների ղեկավարներ են եղել, այլ ընդամենը Ավտարակի կառույցի ղեկավար Սիմոն Գրիգորյանը, է, մի երկու տասնյակ կուսակցական էջմիածնից եւ մեկ հոգի Գյումրիից: «Իսկ մեր կուսակցության շուրջ երկու երրորդը Երեւանից է, եւ ոչ մեկը չի ստորագրել այդ հայտարարության տակ: Ես ո՞րն ընտրեմ հիմա՝ մի քանի տասնյակի՞ն, թե՞ կուսակցության գերակշիռ մասին: Եթե ես կուսակցության ղեկավար չեմ, ինչո՞ւ են ինձնից ակնկալում ակտիվություն, պահանջում խորհրդի նիստ հրավիրել», հարցնում է Ալբերտ Բազեյանը:



«Ազգային վերածնունդ» կուսակցության ղեկավարը հայտնեց, որ մինչեւ տարեվերջ ինքը կղեկավարի կուսակցությունը, իսկ տարեվերջին կայանալիք համագումարը կորոշի եւ՛ ղեկավարի, եւ՛ նախագահական ընտրություններին կուսակցության մասնակցության հարցերը: Ամենայն հավանականությամբ, Ալբերտ Բազեյանը չի մասնակցի նախագահական ընտրություններին. «Ես դեմ եմ մեկ թեկնածուով ընտրություններին մասնակցելու գաղափարին, ես չեմ առաջադրվի, եթե Սիմոն Գրիգորյանն (կուսակցության Ավտարակի տարածքային կառույցի ղեկավարն է ու այս աղմուկի հեղինակը, ում կուսակցությունը պատրաստվում է անվստահություն հայտնել- Գ. Գ.) ուզում է, թող առաջադրվի», ասաց Բազեյանը: Նա մտահոգ է, թե ինչու եւ ինչպես է մամուլում այդպես տարածվում մի քանիսի աղմուկը, բայց ոչ մի արձագանք չի գտնում այն հանգամանքը, որ իրենց կուսակցության մի քանի անդամներ հանդիպումներ են ունենում ռուսամետ գործիչների հետ:

Կուսակցությունում եղած տարաձայնությունների մասին խոսելիս կուսղեկավարն ընդգծեց, որ դժգոհություն ունեցողները կարող էին դիմել եւ խնդրել քննարկել իրենց հուզող հարցերը եւ ոչ թե միանձնյա որոշումներ կայացնեին: ՀՌԱԿ-ի եւ «Դաշինքի» հետ միավորվելու հարցը քննարկման փուլում է, եւ Բազեյանի մեկնաբանմամբ, այդ միավորումը լավագույն ձեւն է կուսակցությունը փրկելու, որն առանց այդ էլ ծանր կացության մեջ է. «Թե չէ ինչ պիտի տանենք մենք առաջիկա 4-5 տարիներին»: Նրա խոսքով, այս ամենն ինքը պետք է բացատրի իր կուսակցականներին, բայց այդ բացատրությունների կարիքը զգում են նաեւ ՀՌԱԿ-ի եւ «Դաշինքի» որոշ շարքեր: Այդտեղից, կուղեկավարի խոսքից նկատվեց, որ նախանշվող միավորմանը երեք կողմերից էլ դեմ մարդիկ կան:

«Ազգային վերածնունդ» կուսակցությունում ստեղծված իրավիճակը ինչ-որ առումներով հիշեցնում է ՍԻՄ-ի պատմությունը, երբ նախընտրական գործընթացների շեմին կուսակցությունը քայքայվեց եւ մինչեւ հիմա էլ դեռ երկուսթեք (երկու թեւերի ՍԻՄ-ականների միջեւ՝ խաչատրյանական եւ բաբուխանյանական թեւերի միջեւ) վեճերը շարունակվում են: Մեր այս տրավորությունն ավելի ամրապնդվեց, երբ «Ազգային վերածնունդ» պառակտման գործում դրսի ուժերին կասկածելու հարցի վերաբերյալ Բազեյանը հայտարարեց. «Չեմ կարող բացառել, որ կա որոշակի ազդեցություն դրսից, եթե աղմուկ են բարձրացրել լրատվամիջոցներով»:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱԿ-ը տվեց ու չանցավ

Հինգ տարեկան Միավորված ազխտանքային կուսակցության խորհրդարանական ընտրություններում ունեցած անհաջողությունը, կուսակցության առաջնորդ Գուրգեն Արսենյանի փաստմամբ, պարզեւեց ամենից շատ ձայներ՝ 4,4 տոկոս, սացած արտախորհրդարանական ուժ կոչվելու իրավունքը, ինչը արդյունք է մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրություններին աննախադեպ մեծ մասնակցությամբ եւ քարոզարշավում ՄԱԿ-ի դրսեւորած պարկեշտությամբ, որ նաեւ դաշնակցային պարտավորություններին հավատարիմ մնալ էր նշանակում: ՄԱԿ-ի մուտքը խորհրդարան թույլ չտալու իշխանության վարագծից ՄԱԿ-ն, ըստ բանախոսի, չի նեղացել, քանի որ ամենից հետը իշխանությունից, հասարակությունից, սեփական կուսակցությունից նեղանալն է, բայց ՄԱԿ մոտեցումն այլ է՝ կուսակցության առաջնորդը պատասխանատու համարում է իրեն եւ անհաջողության պատճառներն էլ գտել է կուսակցության աշխատանքում: Կեսկատակ փաստելով, որ ՄԱԿ-ը խորհրդարան չանցավ, որովհետեւ չհավաքեց անհրաժեշտ 5 տոկոսը, քանի որ նաեւ պատրաստ է տալ, եթե խնդրեն, նկատի ունենալով չբավականացրած 0,6 տոկոսը: Գուրգեն Արսենյանը հայտարարեց, թե կարեւորագույնը խորհրդարանում ներկայություն ունենալը չէր եւ շարունակելու է ընտրած ընթացքը՝ 2012 թվականին խորհրդարանական ընտրություններում մասնակցություն եւ հաղթանակ ունենալու: 2008 թվականին ՏԻՄ ընտրություններում սեփական դիրքերն ամրապնդելու նպատակ ունի ՄԱԿ-ը եւ նախագահի ընտրությունում սեփական թեկնածու չի ներկայացնի, առաջադրվողներից որեւէ մեկին պաշտպանելու հարցն էլ կուսակցությունը կորոշի: Արդեն գիտեն, որ պաշտպանելու են ազատական գաղափարների կրող ուժի ներկայացուցչին, իսկ սոցիալիստական գաղափարախոսության կրողները չեն սպանա ՄԱԿ աջակցությունը: Վերջինի հասցեատերը թերեւ ՀՅԴ-ն է, որն ըստ բանախոսի, Հայաստանի ամենաընդդիմադիր ուժն է. «Հայաստանի ներկա իշխող կուսակցությունն ազատական գաղափարախոսության կրող հանրապետականն է: Պետք է անել համապատասխան հետեւություններ՝ չի կարող քաղաքական կառույցը, որի ծրագրի հիմքում են սոցիալական, սոցիալիստական արժեքներ, բացահայտ կամ թաքնված ընդդիմադիր չլինել այն քաղաքական ուժերի գործունեությանը, ովքեր իրականացնում են ազատական բարեփոխումների քաղաքականություն»:

Բաց թողնելով Սերժ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանելու հարցը, ՄԱԿ ղեկավարը չարժանացրեց հստակ պատասխանի. «Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի վաղաժամ մահից հետո ՄԱԿ-ը վարչապետի պաշտոնում սատարել է Սերժ Սարգսյանին, բայց նախագահի պաշտոնում որեւէ մեկին սատարելու մասին դեռեւս չեմ հայտնի»: Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածության առաջադրումը հենց իր՝ Տեր-Պետրոսյանի գործը համարեց ՄԱԿ առաջնորդը եւ որպես սեփական համակրանքի դրսեւորում հայտնեց. «Լեւոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ ես ունեմ խոր հարգանքի եւ ակնածանքի զգացում, որպես երկրի առաջին նախագահի, որպես մեծ մտածողի եւ այդ ժամանակների՝ նորագույն պատմության պետական գործչի: Բայց քաղաքական գնահատականներն ու որոշումները կուսակցությունն է կայացնում, որովհետեւ Գուրգեն Արսենյանի անձնական համակրանքները Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Սերժ Սարգսյանի հանդեպ դեռ փիչ են, որ կուսակցությունը որոշում կայացնի, թե ում է պաշտպանում»:

Նախագահի թեկնածուների ծրագրերի իրականացմանը ՄԱԿ-ի մասնակցության հնարավոր հեռանկարի մասին հարցին ի պատասխան Գուրգեն Արսենյանը հայտարարեց, որ գաղափարական համընկնումների դեպքում ցանկալի կլինի իր եւ իր թիմի մասնակցությունը. «Սակայն քաղաքական իրավիճակը եւ քաղաքական իրողություններն այնպիսին են, որ բացառված չէ, որ, ասենք, լինի մեզ համար նախընտրելի ծրագիր, բայց մենք մասնակցություն չունենանք այդ ծրագրի իրականացմանը անմիջական առումով: Որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, որպես Հայաստանում գործող քաղաքական ուժ, մենք այսպես թե այնպես մասնակից ենք: Բայց կա ուղղակի եւ անուղղակի մասնակցություն: Մեզ համար ցանկալի կլինի ուղղակի մասնակցությունը»:

«Վերջին չորս-հինգ տարվա ընթացքում ես կարող եմ իմ առնվազն տասը ելույթ ձեզ հիշեցնել, երբ ես գործարարներին ինքս եմ դիմել, որպեսզի իրենց գործունեությունը չներկայացնեն որպես մանանա հայ ժողովրդին: Գործարարությունը, որպես այդպիսին, ի սկզբանե բարեգործական նպատակներ չունեցող գործունեություն է», մեկնաբանելով «Ազգի» խմբագրին վարչապետի տված հեռուսահարցազրույցում գործարարներին հղած ուղերձը հայտարարել է ՄԱԿ նախագահը եւ հավելել, որ այն ուղղված չէր գործարարությանը: «Չի կարող վարչապետը գործարարությանն ուղերձ հղել, որովհետեւ գործարարությունը գործունեության ձեւ է: Վարչապետն ուղերձ է հղել այն մարդկանց, ովքեր զբաղվում են գործարարության դաշտում, սուբյեկտներին, ովքեր ունեն սխալ պատկերացումներ այն մասին, թե ինչպես պահեն իրենց հասարակության մեջ: Վարչապետի ուղերձը ուղղված է նրանց: Համակրանք ստանալու նպատակով ինչ-որ ռեսուրս ծախսել, որեւէ՝ հանրային, պետական կամ քաղաքացիական, խնդիր չի լուծում: Քաղաքացիական, հանրային, պետական խնդիր լուծվում է այն դեպքում, երբ գործարարն իր հարկային վճարումների ռեժիմով ապահովում է պետության կենսագործունեությունը: Նորագույն Հայաստանում, մեր հասարակության մեջ, չգիտես ինչու, ձեւավորվել է թյուր կարծիք, որ կարելի է ստանալ համակրանք, այդ կեղծ բարեգործության հաշվին, որովհետեւ չի կարող լինել բարեգործություն, եթե դու հարկերդ չես մուծում, ուրեմն այդ կեղծ բարեգործության հաշվին ստացած համակրանքը չի կարելի ներկայացնել որպես հանրային արժեք», խուսափելով հստակորեն անուններ ներկայացնելուց կարծիք հայտնեց Գուրգեն Արսենյանը:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

Ժամը 10:00-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Աշոտ Երկաթ» սրահում տեղի կունենա մամուլի ասուլիսը՝ «Հայներարտբանկի» ձեռքբերման վերաբերյալ:

Ժամը 12.00-ին «Հայաքար» ակումբի հյուրն է լինելու Արթուր Աղաբեկյանը:

Նույն ժամին «Տեսակետ» ակումբը կհյուրընկալի Պարույր Հայրիկյանին:

Նույն ակումբում ժամը 13.00-ին կբանավիճեն Արշակ Սադոյանը եւ Արմեն Մազմանյանը:

Իսկ ժամը 14:00-ին ակումբի հերթական հյուրը կլինի Շավարշ Քոչարյանը:

Ժամը 10:30-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը կայցելի Եռաբլուր:

Ժամը 11.30-ին «Հաղթանակ» զբոսայգու մուտքին չհասած՝ Սարալանջի խճուղու մոտ, քաղաքացիներ Երվանդ Զախարյանի մասնակցությամբ էսպակադայի բացման արարողությունը:

Վաղը

Ժամը 11.00-ին «Հայելի» ակումբի հյուրերն են Եվրոպական պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լյուցեմբերգերը եւ Հայաստանի փոխարտգործնախարար Արմեն Բայբուրտյանը:

Ալբերտ Բազեյանը կղեկավարի կուսակցությունը մինչեւ առաջիկա համագումարը

Հակառակ ներկուսակցական միջադեպերին

«Երկու տարի առաջ կուսակցության քաղխորհրդի անդամները անլուծելի խնդիրներ էին առաջադրում, իսկ հունիսին կայացած մեր քաղխորհրդի նիստում նորից պահանջներ, առաջարկներ, պնդումներ եղան: Ես էլ ասացի՝ եթե կա մեկը, որ կարող է լուծել այդ խնդիրները, ես պատրաստ եմ վայր դնել լիազորություններս: Ոչ ոք չցանկացավ վերցնել այդ պատասխանատվությունը», «Ազգային վերածնունդ» կուսակցության շուրջը ստեղծված խոսակցություններին անդրադառնալիս երեկ «Հայաքար» ակումբում ասաց կուսակցության ղեկավար Ալբերտ Բազեյանը: Հիշեցնենք, որ նախօրեին «Ազգային վերածնունդ» կուսակցության տարածքային մի քանի կառույցների ղեկավարներ հայտարարություն էին տարածել, որում դատապարտել էին «Դաշինքի» եւ ՀՌԱԿ-ի հետ միավորվելու Ալբերտ Բազեյանի քաղաքականությունը՝ մեղադրելով կուղեկավարին կուսակցությանը անգործության մատնելու մեջ:

Ալբերտ Բազեյանի խոսքով, նախ հայտարարության հեղինակները ոչ թե կուսակցության տարածքային մի շարք կառույցների ղեկավարներ են եղել, այլ ընդամենը Ավտարակի կառույցի ղեկավար Սիմոն Գրիգորյանը, է, մի երկու տասնյակ կուսակցական էջմիածնից եւ մեկ հոգի Գյումրիից: «Իսկ մեր կուսակցության շուրջ երկու երրորդը Երեւանից է, եւ ոչ մեկը չի ստորագրել այդ հայտարարության տակ: Ես ո՞րն ընտրեմ հիմա՝ մի քանի տասնյակի՞ն, թե՞ կուսակցության գերակշիռ մասին: Եթե ես կուսակցության ղեկավար չեմ, ինչո՞ւ են ինձնից ակնկալում ակտիվություն, պահանջում խորհրդի նիստ հրավիրել», հարցնում է Ալբերտ Բազեյանը:

«Ազգային վերածնունդ» կուսակցության ղեկավարը հայտնեց, որ մինչեւ տարեվերջ ինքը կղեկավարի կուսակցությունը, իսկ տարեվերջին կայանալիք համագումարը կորոշի եւ՛ ղեկավարի, եւ՛ նախագահական ընտրություններին կուսակցության մասնակցության հարցերը: Ամենայն հավանականությամբ, Ալբերտ Բազեյանը չի մասնակցի նախագահական ընտրություններին. «Ես դեմ եմ մեկ թեկնածուով ընտրություններին մասնակցելու գաղափարին, ես չեմ առաջադրվի, եթե Սիմոն Գրիգորյանն (կուսակցության Ավտարակի տարածքային կառույցի ղեկավարն է ու այս աղմուկի հեղինակը, ում կուսակցությունը պատրաստվում է անվստահություն հայտնել- Գ. Գ.) ուզում է, թող առաջադրվի», ասաց Բազեյանը: Նա մտահոգ է, թե ինչու եւ ինչպես է մամուլում այդպես տարածվում մի քանիսի աղմուկը, բայց ոչ մի արձագանք չի գտնում այն հանգամանքը, որ իրենց կուսակցության մի քանի անդամներ հանդիպումներ են ունենում ռուսամետ գործիչների հետ:

Կուսակցությունում եղած տարաձայնությունների մասին խոսելիս կուսղեկավարն ընդգծեց, որ դժգոհություն ունեցողները կարող էին դիմել եւ խնդրել քննարկել իրենց հուզող հարցերը եւ ոչ թե միանձնյա որոշումներ կայացնեին: ՀՌԱԿ-ի եւ «Դաշինքի» հետ միավորվելու հարցը քննարկման փուլում է, եւ Բազեյանի մեկնաբանմամբ, այդ միավորումը լավագույն ձեւն է կուսակցությունը փրկելու, որն առանց այդ էլ ծանր կացության մեջ է. «Թե չէ ինչ պիտի տանենք մենք առաջիկա 4-5 տարիներին»: Նրա խոսքով, այս ամենն ինքը պետք է բացատրի իր կուսակցականներին, բայց այդ բացատրությունների կարիքը զգում են նաեւ ՀՌԱԿ-ի եւ «Դաշինքի» որոշ շարքեր: Այդտեղից, կուղեկավարի խոսքից նկատվեց, որ նախանշվող միավորմանը երեք կողմերից էլ դեմ մարդիկ կան:

«Ազգային վերածնունդ» կուսակցությունում ստեղծված իրավիճակը ինչ-որ առումներով հիշեցնում է ՍԻՄ-ի պատմությունը, երբ նախընտրական գործընթացների շեմին կուսակցությունը քայքայվեց եւ մինչեւ հիմա էլ դեռ երկուսթեք (երկու թեւերի ՍԻՄ-ականների միջեւ՝ խաչատրյանական եւ բաբուխանյանական թեւերի միջեւ) վեճերը շարունակվում են: Մեր այս տրավորությունն ավելի ամրապնդվեց, երբ «Ազգային վերածնունդ» պառակտման գործում դրսի ուժերին կասկածելու հարցի վերաբերյալ Բազեյանը հայտարարեց. «Չեմ կարող բացառել, որ կա որոշակի ազդեցություն դրսից, եթե աղմուկ են բարձրացրել լրատվամիջոցներով»:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տառապանքի ճամփաներով

«Որքի հայրենիք, ողբի հայրենիք», գրում էր մեծն Թումանյանը 1915-ին: Եվ իրոք, Մեծ եղեռնից եւ հայաբնակ տարածքում դրան հետեւած ահեղ ցնցումներից հետո, Հայաստանում, ըստ որոշ տվյալների, հավաքվել էին շուրջ 300 հազար որբեր: Նրանց այն մասը, որն այդ դաժան տարիներին սովին, հիվանդություններին դիմացավ եւ մի կերպ գոյատեւեց, դարձավ ազգաբնակչության ողնաշարը ու հետագայում Նոր Հայաստանի կերտողը: Դժվարին կյանք ապրած, ժամանակից շուտ հասունացած այդ սերունդը հայրենակերտման առաջամարտիկը դարձավ, առանց որի անհնար է պատկերացնել հայկական պետականությունը: Որբերի այդ սերնդից է մեր մեծավաստակ գիտնական ճարտարապետը՝ Վարազդատ Հարությունյանը, որի հոդվածը հաճույքով տպագրում ենք Հայաստանի անկախության 16-րդ տարեդարձի առթիվ:

Թիֆլիսի Ծիրանավոր վանքի որբանոցի ընդհանուր լուսանկարը (1916)

Այն երկարակյացներից եմ (կանգնած 99 տարվա շեմին), որ ժամանակակիցը եղա իմ հարազատ ժողովրդի կյանքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների: 1915-ի հոկտեմբերին թողեցինք մեր տունն ու այգին Վանի Այգեստանում, դուրս եկանք գաղթի մահաբեր ճամփան, ուղղություն վերցնելով դեպի ավերյալ երկիր՝ Արեւելյան Հայաստան: Վանեցիները ողջ թուրքահայության հետ տեղահանվելով, ցրվեցին աշխարհով մեկ, այս ու այն երկրներում հիմնեցին մեծ ու փոքր համայնքներ, կազմակերպվեց այսպես կոչված, սփյուռքը:

Թեեւ վեց տարեկան էի, հիշողությանս մեջ են մնացել թուրքերի ու քրդերի հարձակումները Բանդի մահու կամրջով ու Բերկրիի կիրճով անցնելիս: Շատ ավելի կլիներ զոհերի թիվը, եթե գաղթականներին չուղեկցեին ռուսական նահանջող զորամասերը: Ճանապարհին մահացած հիվանդներին ու ծերերին թաղում էին հարշտաղ փորած գերեզմաններում...[1]

Երբ հոգնաբեկ ու սոված հասանք Իգդիր, Հայկական բարեգործական ընկերությունն այնտեղ կազմակերպել էր գաղթականների խնամքն ու կերակրումը, գլխավորությամբ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի:

Երբ Արաքս գետի վրա ձգված կամրջով անցանք ձախ ափ ու Արարատյան դաշտով քայլելով հասանք Սուրբ Էջմիածնի տաճարի բակը, տեսածս սրտումս մնաց որպես անբուժելի վերք...

Բազմահազար գաղթականներով լեցուն էին բակը, լճի ափամերձ ու արհեստական անտառի տարածները: Սոլեգնում էին տիֆն ու խոլերան... Դիակները սայլերով փոխադրվում էին դաշտերն ու թաղվում:

Երբ Արաքս գետի վրա ձգված կամրջով անցանք ձախ ափ ու Արարատյան դաշտով քայլելով հասանք Սուրբ Էջմիածնի տաճարի բակը, տեսածս սրտումս մնաց որպես անբուժելի վերք...

Բազմահազար գաղթականներով լեցուն էին բակը, լճի ափամերձ ու արհեստական անտառի տարածները: Սոլեգնում էին տիֆն ու խոլերան... Դիակները սայլերով փոխադրվում էին դաշտերն ու թաղվում:

Երեք եղբայրներով. ձախից աջ՝ Աղասին, Արծրունը (հետագայում ՀՀ ժողովրդական դերասան) եւ Վարազդատը (երկուսս որբանոցի հագուստներով)

Եղբայրս՝ Գուրգենը եւ ես նույնպես հիվանդ էինք տիֆով, ես պառկած էի Գետրգյան ճեմարանի կլոր դահլիճի հատակին, Գուրգենը որպես ծանր հիվանդ պառկած էր մասնավոր տներից մեկի սենյակում:

Ամեն այցելությանը Գուրգենը խնդրում էր.

- Շուտ-շուտ եկեք, կարոտում եմ...

Իմ հերթական այցելության ժամանակ, երբ մտնելու էի հիվանդասենյակ, սանիտարները սավանի մեջ փաթաթած ինչ-որ ծանրոց էին դուրս տանում հիվանդասենյակից: Նայեցի Գուրգենի մահճակալի կողմը, դատարկ էր...

- Մի՞թե իմ Քուրթեն եղբայրը,- լացակումած հառաչեցի:

- Եղբորդ նոր տարան սանիտարները,- պատասխանեցին:

Վազեցի սանիտարների հետեւից, որոնք եղբորս տարան տան նկուղը: Սարսափահար եղա տեսնելով այնտեղի դիակները, հոնգուր-հոնգուր լացելով դուրս փախա:

Ահա այսպես մեր գաղթական ընտանիքը տվեց իր առաջին զոհը...

Տեղյակ չեմ, կա՞ արդյոք թեկուզ մոտավոր տվյալ գաղթից հետո նոր ափերը հասած ու մահացած գաղթականների մասին: Եթե կա, ուրեմն պիտի գումարվի մեկ եւ կես միլիոնին:

Հայրս՝ թարգի[2] Մարտիրոսը, նախազգալով, որ նույն ճակատագիրն է ունենալու իր ընտանիքը Էջմիածնում, որոշեց մեզ փոխադրել Թիֆլիս, որտեղ ազգականներ ունեինք, Վանում 1885-96 թվականներին տեղի ունեցած առաջին կոտորածից փրկվածներից:

Ընտանիքով Թիֆլիս հասանք, ուր մեր Տեր-Հարությունյանի տոհմից ապրում էին երեք ընտանիքներ՝ մանրավաճառ Նշան աղան, գեղեցկադեմ ուսուցչուհի Վիկտորյան, հորեղբորս որդին՝ նավթավաճառ Միհրդատը եւ կվասավաճառ հորեղբայրս՝ Մաթեւոսը: Թեեւ ողջունեցին մեր գալը, սակայն միայն ավագ քույրս՝ Արախին, որը առողջ էր, հյուրընկալվեց մեկի տանը: Մնացածներին տեղավորեցին հիվանդանոցներում, մեծ եղբորս՝ Աղասուն, Գերմանական, իսկ հորս, մորս, եղբորս՝ Արծրունին, կրտսեր քրոջս՝ Սիրանուշին ու ինձ՝ Առամյանցի հիվանդանոցում: Բուժվում էինք, լավ սնվում, թվում էր, թե ամեն ինչ բարեհաջող է, սակայն այդպես չեղավ...

Մի անգամ, երբ մայրս հերթական այց էր կատարել հիվանդանոցի տղամարդկանց բաժինը, վերադարձավ հոնգուր-հոնգուր լալով...

Ասել էին, որ Մարտիրոս Տեր-Հայրապետյանը մահացել է, նրան թաղել են Թիֆլիսի հայկական՝ խոջիվանքի գերեզմանատանը:

Ժողովրդական ասացվածք կա՝ կարկուտը ծեծած տեղն է ծեծում: Նորից հարազատի կորուստ, այն էլ կերակրող...

Որբ N 204, Վարազդատ Տեր-Հայրապետյան, Վանից, 7 տարեկան: Այդպես եմ գրանցվել 1916-ին Թիֆլիսում հրատարակված «Համբավաբեր» տեղեկագրում, որի կազմողն ու խմբագիրը վանեցի գրող, լրագրող Ծերուն Թորգոմյանն էր, հետագայում հայոց լեզվի ու գրականության իմ ուսուցիչը: Որբանոցում հյուրընկալվեցինք եղբայրս՝ Արծրունը, քույրս՝ Սիրանուշը եւ ես:

Որբանոցում անցկացրինք շուրջ երեք տարի: Դա նոր ու անծանոթ միջավայր էր: Որբանոցը Թիֆլիսի Օրթաքալա կոչվող թաղամասից 6-7 կմ էր հեռու, Ծիրանավորի վանքի բակում: Եռահարկ շենքն իր արեւակողմյան կողմով նայում էր ընդարձակ բակին, իսկ լուսամուտներով՝ շրջապատի կիրճին: Սնվում էինք, ինչպես ասում է ասում՝ «вдоволь», մանավանդ երբ ուխտավորները որբանոցին էին նվիրում գառներ, ոչխարներ, նույնիսկ հորթեր:

Առվում է որբերի ու դաստիարակների խմբանկարը: Ես ու եղբայրս՝ որբանոցի շենքի առաջ:

Որբանոցի գլխավոր «շեֆն» էր Ամենայն հայոց ամենահաս բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Հիշողությանս մեջ են մնացել որբանոցի պատշգամբում (որը նաեւ մեր ճաշարանն էր) կազմակերպվող գրական-գեղարվեստական միջոցառումները, որոնց սովորաբար մասնակցում էր մեծ լոռեցին իր ուղեկիցների հետ: Մի անգամ ինձ էլ բաժին ընկավ, աթոռին կանգնած սկսեցի արտասանել.

- Գորտը գորտին կանչում է:

- Քերին մեռել է, ֆերին մեռել է...

Մնացածը մոռացել էի, լացակումած իջա աթոռից:

- Ոչինչ,- ասաց ժպտադեմ բանաստեղծը,- մյուս անգամ կկիրես...

Ելույթ ունեցավ որբանոցի «ծայնավոր» Հայրիկ Մուտաֆյանը.

Թողել եմ ու եկել մըլմերս ու այգիս,
Քանի որ ախ կանեմ, կը խաղվի հոգիս,
Կռունկ, պահ մի կացիր, ծայնիկդ ի հոգիս,
Կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս...

Արտասանությամբ ելույթ ունեցավ սասունցի Վաղարշակ Երիցյանը (հետագայում՝ Նորենց): Հավարս հերթական հանդիպման, որբերից ավագ Նորայր Դաբաղյանը խորին շնորհակալություն հայտնեց հյուրերին այցելության, որբերի նկատմամբ ստանձնած խնամակալության համար: Տեղյակ էինք, որ բանաստեղծն ամեն ջանք գործադրել է թոխախավոր որբ Միհրան Թութունյանի բուժման համար եւ մասնակցել է նրա հուղարկավորությանը:

Ծիրանավոր վանքն ուներ «Ծիրանավորաբա» տն: Այդ օրը վանքի բակն ու շրջակա ձորերը լցվում էին ուխտավորներով, ամենուրեք հնչում էին երգ ու երաժշտություն, նույնիսկ կրակոցներ.. Որբանոցի կառավարչուհի տիկին Եվգինե Զաքարյանը մեզ կարգադրում էր իսկույն մտնել շենք ու դռները փակում էր:

Կիրճի կողմը ուղղված լուսամուտներից դիտում էինք այնտեղի իրադարձությունները: Հարբած ուխտավորների միջեւ տեղի էին ունենում կատաղի կռիվներ: Միմյանց վրա էին հարձակվում մահակներով, դաշույններով, նույնիսկ ատրճանակներով:

- Էս էլ Ծիրանավորաբան, գոչեց որբանոցի պահակ Գեորգին,- տարի չի լինում, որ արյունով չվերջանա...

1916-17 թվականներին երկրի վիճակը վատթարացավ: Որբերս դա զգացինք մեր սեղանի ուտեստեղենի նվազմամբ: Չնայած դրան, երանի տվեցինք Ծիրանավորի վանքի մեր որբանոցին, երբ մեզ փոխադրեցին Հավլաբարի թաղում գտնվող մի այլ որբանոց, որտեղ կատարյալ սով էր: Թերասնման պատճառով որբերից շատերը սկսեցին տառապել «հավկուրություն» կոչվող հիվանդությամբ:

Այլեւս այնտեղ մնալն անհնար էր: Ես, եղբայրս՝ Արծրունը եւ քույրս՝ Սիրանուշը թույլտվություն ստացանք մեր հարազատներին այցելելու, սակայն մտադրվել էինք այլեւս չվերադառնալ որբանոց:

Մեծ խաղաղի մի ծայրից հեստոն մյուս ծայրը հասանք, տրան-նրան հարցնելով դժվարությամբ գտանք Արթեն (Հարություն) աղային, որը հանդիպանել էր իր որդու՝ Միհրդատի հետ:

- Այ բալամ, ինչի՞ եք եկել, վո՞ւմ պիտի ձեզ պախի,- գոչեց հորեղբայրս:

- Ես կպախեմ իմ որբերին, Արթեն աղա, քեզ նեղություն չենք տա,- ասաց մայրս: Ու պահեց, վստակելով տա-նրա տներում լվացք անելով...

Թիֆլիսը լեցուն էր գաղթականներով, անուններս կնվեցին գաղթականներ: Հայկական բարեգործական կազմակերպության ջանքերով Մանթաշովի անվամբ կոչվող նախկին քարվանսարայի շենքում տեղավորված «ճաշարանից» մինչեւ տուն էինք վերադառնում, նորից սովածանում էինք:

Մայրս, եղբայրս ու ես ապրում էինք Պասսերովսկայա թ.8 տան բակում մեզ տրամադրված կիսամութ ու փոքրաչափ մի սենյակում:

Вода, вода, родниковая, холодная... Գոչում էինք քայլելով Գոլովինսկայա (այժմ՝ Ռուսթավելու անվան) պողոտայով: Մի օր ոտիս ինչ-որ բան կպավ: Կռացա, վերցրի պտղունդ իրը: Թվաց, թե արժեքավոր բան է: Իսկույն կուժս դատարկեցի ու հարշտաղ տուն հասա, գտածս ցույց տվի մորս: Տարավ իմ հորեղբոր որդուն, ոսկերիչ Միհրանին: Ուրախությամբ վերադարձավ գոչելով.

- Գտածդ ոսկի պատյանի մեջ մատիտ...

Տարիներ շարունակ ապրեցինք կարիքավոր կյանքով, հանդգնում էի մորս, որ վաճառի, ապրանք ունենանք:

- Չէ,- պատասխանում էր մայրս,- էսա կպախեմ, երբ տյու իսոր արժանի լինես, քեզ կվերադարձնեմ: Վերադարձրեց 1964-ին, երբ ճարտարապետության դոկտորի աստիճանով վերադարձա Լենինգրադից: Նույն տարին սիրասուն մայրս հրաժեշտ տվեց իր տանջալից կյանքին:

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

---

1. Ավելի մանրամասն տես իմ «Կյանքիս խոհուղիներում» Երեւան, գիրք Ա 1999, էջ 10-14:
2. Թարգի- դերձակ:

21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007 ԷՋ Ա

ՀԱՅԿԵԼԿԱԾ ՄԱՄՈՒՏՅՈՒՆ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 18(37)

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՏԱՐԱԲԱԽՏ ՆԿԱՐԻՉ ՄԱՐԿՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ

1979-ին Սփյուռքահայության հետ մշակութային կառի կոմիտեի նախագահ ընկ. Վարդգես Համազասպյանի (Վարդգես Եղիշեիչի) հետ ինձ էլ բախտ էր վիճակվել ներկա գտնվելու մեծագույն նկարիչ Գառզուի (Գառնիկ Զուլումյանի) Ֆրանսիական ակադեմիայի (Academie Francaise) անդամ օծվելու արարողությանը: Գառզուն Սովետական Հայաստանից երեք հոգու էր հրավիրել այդ առիթով, իր անձնական իյուրեր մասնակցելու Զոչարը, ընկ. Համազասպյանը եւ ձեր խոնարհ ծառան: Մասնակցումն մինչ այդ դժբախտաբար մահացավ (կարծեմ 43 տարի անց առիթը պիտի ունենար իր միակ կառուցած Փարիզը նորից այցելելու, բայց բախտը չժպտաց մեր վարպետին): Կարծեմ կրնամ ըսել, որ պարտիան ազատվել էր մեկ գլխացավանքից: Գալով ինձի՝ ես, ճիշտը ասած, տեղյակ չէի: Մելգոնյանական դպրոցական ընկերս՝ Եսային, որ կոմիտեում էր աշխատում, ինձ մի օր ասաց, որ՝ վաղ խաբար չկա, մի քանի ամիս է կոմիտեում ինկած հրավեր ունիս Գառզուեն, մասնակցելու Վարդգես Համազասպյանին ընկերանալու համար: Որ իմանայի՝ ինձի ինչ օգուտ: Վերջը՝ Վարդգես Եղիշեիչը ինձի հանդեպ համակրանք ուներ, միշտ ջերմ էր վերաբերվում, չեմ գիտեր ինչու, եւ իր համակրանքը չէր թաքցնում: Ամենայն դեպս ախպար էի, եւ անշուշտ Կենտկոմը պիտի նախընտրեր, որ իր մաֆիայեն մեկը ըլլար հրավիրողը: Ադեն ուրիշ մաֆիա չկար: Նույն ատեն, անշուշտ, Գառզուին մերժելը փասնորեն հետս պիտի չըլլար: Երեւի դրին-վերցուցին, մասնակցությունը Զոչարը ադեն չկար, եւ ինձ չթույլատրելը գտան, որ որեւէ մեկուն օգուտ չունի, թույլ տվին, որ Փարիզ երթամ:

Մեր խումբից Գառզուին առաջին ծանոթը անշուշտ Զոչարն էր, որ երեսունական թվականներուն Փարիզում էր ապրում եւ ստեղծագործում, ցուցադրում էր արդեն իր Peinture dans l'espasse («Տարածության մեջ նկարչություն») նկարները, որոնք Փարիզի արվեստասերներու ուշադրությանն էին արժանանում: Անդամ էր «Անի» հայ նկարիչներու միության: Գառզուն այդ տարիներուն երիտասարդ ստեղծագործող էր եւ հավանաբար տպավորված էր մասնակցի անձեն: Տարիներ անց, 60-ական թվականներուն, երբ Գառզուն այցելեց Սովետական Հայաստան՝ իբրեւ իյուր Սփյուռքահայության հետ մշակութային կառի կոմիտեին (նախագահ՝ Վարդգես Համազասպյան), չէր մոռացել մասնակցի Զոչարին եւ փնտրել էր, եւ շատ բարձր էր գնահատում վարպետի արվեստը: Ես էլ Գառզուի մասին գիտեի, երբ Եգիպտոսում էի ապրում եւ բախտը ունեցա տեսնելու Գառզուի ցուցահանդեսը 1950-ին Կահիրեում բացված, որ ինձ շատ տպավորեց, նաեւ իր անձը, որ շատ գրավիչ էր: Այն ատեն չէի իմանում, որ մի քանի տարի անց Փարիզում իրեն պիտի հանդիպեի եւ բախտը պիտի ունենայի տեսնելու իր ստեղծագործությունները: 1952-1954 թվականները Գառզուի միջազգային ճանաչման տարիներն էին սկսում: Այս առիթով, ֆիմացողներուն ասեմ, որ Գառնիկ Զուլումյանը, որ ծնած է Սուրիո Հալեպ քաղաքում, մանկության՝ իր ծնողներից զրկվելով, իր քրոջ հետ պատսպանություն էր գտել Եգիպտոսում ապրող իր քեռու տանը: Եվ 18 տարեկանին շրջանավարտ ըլլալե վերջ Կահիրեի նշանավոր Գալուստյան վարժարանեն, մի քանի ուրիշ շնորհալի հայ պատանիներու հետ Եգիպտահայ գաղութի կրթաթոշակով բարձրագույն կրթություն ստանալու համար ուղարկվել էր Ֆրանսիա եւ ուսանել ճարտարապետություն: Եվ հաստատվել էր Փարիզում: Ես ալ 1952-1954 թվականներուն նույնպես եգիպտահայ գաղութի սահմանած կրթաթոշակով բախտը ունեցա երկու տարի սովորելու Փարիզում: Այդ տարիներուն առիթը ունեցա մոտենալու Գառզուներու ընտանիքին, թեեւ համարձակ չէի: Երբ վաքսունական թվականներուն, ինչպես ըսի, Գառզուն եւ տիկին Գառզուն՝ Նանը, այցելեցին Հայաստան, մի խումբ նկարիչներ վազեցին Գառզուն շրջապատելու, ես ալ իրենց հետ: Երբ մոտեցա Գառզուին, տիկին Գառզուն հարցուց, որ՝ ասիկա այն սեփական Գառզուն հարցուց, որ՝ ասիկա այն սեփական Գառզուն հարցուց, որ՝ ասիկա այն սեփական

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Բարեր

Տարեդարձները կը նշուին սովորաբար ուրախ առիթներու՝ ծննդեան, ամուսնութեան, յաջողութեան եւ կեանքի նման հանգրուաններու, իսկ տխուր դէպքերու տարեդարձները աւելի կ՚առաջնորդեն խոկումի եւ անդրադարձումներու:

Այս գրութեան շարժառիթը վերջերս կայացած խօսակցութիւն մըն է Լաթաֆիայի մեր թաղի վաղեմի տղոցմէ՝ Գրիգոր Շէնեանի հետ: Այն ատեն դեռ Գրիգորը Կէօվշենեան էր, սակայն քանի իր կեանքը շէնցաւ՝ Կէօվը թողուց օվկիանոսէն անդին ու Շէնը առած իր ուսերուն՝ դարձաւ այսօրուան յայտնի հրապարակագիրը՝ Գրիգոր Շէնեան1:

Մեր զրոյցը տարեդարձի մը մասին էր: Այո, այս տարի կը լրանար տասնամեակը իր վրայ կատարուած մահափորձին: Արդարեւ, տխուր տարեդարձ մը, որ միեւնոյն ատեն ունի նաեւ իր լուսաւոր կողմը՝ հարա՞մ եթէ յաջողէին ոճրագործները իրենց նպատակին մէջ, այսօր շատ աւելի տխուր տարելից մը պիտի նշէինք: Այս օրուանը, ուրեմն, վերադրումի տասնամեակ մըն է. զոհը վերադրելով այդ պատահարէն՝ տասը տարի եւս իր կեանքէն ընծայեց հայ մամուլին:

Իբրեւ ճակատագրակից՝ չէի կրնար անտարբեր մնալ մանկութեան ընկերոջ մը այս տխուր փորձութեան, ինչպէս նաեւ՝ վերադրումի բերկրանքին նկատմամբ: Գրիչն ու բռունցքը կարծէք զուգահեռ կ՚ընթանան մամուլի պատմութեան մէջ եւ այդ զուգադիպութենէն անմասն չէ մնացած նաեւ հայ մամուլը:

Թէ ինչո՞ւ յաճախ բռունցքը կը ցցուի գրիչին դիմաց՝ դժուար չէ բացատրել. ատիկա խօսքին ուժն է, որուն դիմաց յաճախ կ՚անճարկին անիրաւներ եւ ուրիշ միջոց չգտնելով՝ կը դիմեն բիրտ ուժին, լռեցնելու համար լրագրողը:

Լրագրողին համոզումը իր հոգեկան վահանն է, որ զինք կը պաշտպանէ բիրտ ուժին դիմաց. նոյնիսկ եթէ մամուլի աշխատողը ընկրկի, երկիւղներ ունենայ իր համոզումներու գործադրութեան մէջ, իր համոզումներն ու իր հաւատը կը վազեն իրմէ առաջ եւ նոյնիսկ երբեմն ակամայ կը պարտադրեն, որ լրագրողը յայտնաբերէ ճշմարտութիւնը, աչք առնելով անոր հետեւանքները:

Գրիգոր Շէնեան զոհն էր իր համոզումներուն, ինչպէս ամէն լրագրող, որ արժանացած է միեւնոյն ճակատագրին: Այդպիսի հրապարակագիրներու կարգին է այս տողերը գրողը, որ երբեմ չէ երկնչած իր գաղափարները պարզելու, նոյնիսկ դիմակալելէ ետ բիրտ ուժի եւ խոշտանգման դէպքերը: Երբ կը դիմագրաւէք բռունցքի հարուածները, միայն այդ պահուն կ՚անդրադառնաք խօսքի զօրութեան, թէ ան ինչպիսի թաքուն ուժեր եւ զայրոյթ կրնայ շղթայազերծել անզօր մարդոց մօտ, որոնք հնարքն ու շնորհը չունին խօսքին ուժը օգտագործելով հակադարձելու: Երբ մէկ առ մէկ անդրադառնաք բոլոր հրապարակագիրներու ու գրողներու կեանքին, որոնք սպաննուած կամ տուժած են ահաբեկիչներու կողմէ, կը տեսնէք, թէ անոնք ամէնէն ուժեղ անհատականութիւնը ունեցող մամուլի ծառայողները հանդիսացած են: Բարի, խելօք, անդիմագիծ եւ անողնաշար գրողները ոչ ոքի զայրոյթը կը յառաջացնեն, ոչ ոքի կը դպին կամ կը վնասեն, ինչպէս ոչ ոքի ալ օգուտ մը կ՚ընծայեն: Ընթերցողին ու հասարակութեան անտարբերութիւնը գրողի մը անձին ու գաղափարներուն նկատմամբ ամէնէն սպաննիչ զէնքն է:

Անցեալ դարու սկիզբին զգեստաւորեցաւ հայ հրապարակագրութեան ամէնէն հզօր տիտաններէն Արփիար Արփիարեանը: Առաջին ահաբեկումը չէր խլած անոր կեանքը. ան շարունակեց իր խրախուս գործունէութիւնը, որ զինք հասցուց իր ճակատագրական վախճանին: Արդարեւ, 1908-ին Աղեքսանդրիոյ մէկ փողոցին մէջ ան զոհ գնաց ոճրագործի մը գնդակին, իր կեանքի գինով վճարելով իր համոզումներուն դիմաց:

Նման ահաբեկչութեան ենթարկուած է նաեւ անմահ բանաստեղծ Վահան Թէքէեան, նոյնպէս Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ, որ այդ շրջանին հայ աշխարհի ամէնէն եռուն ազգային օջախներէն մէկն էր: Թէքէեանի պարագան ոմանք կանգիտանան, իսկ ուրիշներ ալ, կլայակելու լրջուն փորձերով կը ջանան զայն ներկայացնել իբրեւ կուսակցական վէճերու արդիւնք. կարծէք Թէքէեան զգվոտուքի բռնուած ըլլար եւ վնասուած ըլլար այդ հաւասար բախումէն:

Մինչ Արփիարեանը զոհն էր իր գաղափարակից հնչակեաններուն, Թէքէեան՝ իր գաղափարի հակառակորդ դաշնակցականներուն: Արփիարեան Տամատեանի եւ քանի մը ընկերներու հետ բաժնուած էր Հնչակեան կուսակցութենէն, հիմնելով Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը, որ յետագային միանալով պիտի դառնար բաղկացուցիչ տարրերէն մէկը Ռամկավար ազատական կուսակցութեան:

Վահան Թէքէեան 1915-ին Միքայէլ Կիւրճեանի եւ Միհրան Տամատեանի հետ կը հիմնէր «Արեւ» օրգանը, որ սկզբնական շրջանին երկօրեայ էր: Թէքէեան հանդիսացած է «Արեւ»ի առաջին խմբագիրը: 1916-ին կը պատահի դէպք մը. ակումբի մը վարչական ընտրութեան ընթացքին դաշնակցականները կը կորսնցնեն քուէն, սակայն աթոռ-սեղաններու հարուածներու ուժով կը պարտադրեն իրենց կամքը: Թէքէեան, զայրացած, «Արեւի» մէջ կը գրէ խմբագրական յօդուած մը «Լե՞ռն ենք, ո՞ր ենք...» վերնագրով եւ այդ յօդուածը կը վճռէ իր ճակատագիրը: Քանի մը օր վերջ, երբ գիշերուան մութին տուն կը վերադառնար, մայթին երկու կողմերէն կը պաշարուի խումբ մը ահաբեկիչներու կողմէ, մինչ մայթին քովէն կ՚անցնէր կարասի կրող կառք մը, փակելով ամէն անցք:

Ահաբեկիչները զինուորական գօտներու մեսաղեայ օղակներով կը խոշտանգեն բանաստեղծը, որ ուշակորոյս կ՚ինկնայ մայթին վրայ. ահաբեկիչները մահացած կարծելով բանաստեղծը՝ կը լքեն ոճիրին վայրը ու կը հեռանան:

Հիւանդանոցին մէջ երբ ուշի կու գայ Թէքէեան եւ կ՚մանայ բժիշկէն, որ առ յաւէտ կորսնցուցած է մէկ աչքին լոյսը, կը պաղատի բժիշկին, որ վերջ տայ իր կեանքին, չուզելով ապրիլ իբրեւ միականի. Թէքէեան այնքան ուշադիր էր իր հագուածքին, պահուածքին եւ ընդհանրապէս իր արտաքինին: Բանաստեղծին վրայ կատարուած ահաբեկումի այս արարքը իր արձագանգը գտած է Թէքէեանի արձակ մէկ գործին մէջ, պատմուածք մը, որուն վերնագիրն էր «Մարք Ֆուրքունի արկածը»: Սակայն հետզհետէ Թէքէեան կը հաշտուի դառն իրողութեան հետ ու կը շարունակէ ապրիլ, միշտ տխրութեան քանձր սուլերով մը իր հոգիին վրայ: Թէ ան ինչպիսի յուզումներէ եւ խոկումներէ կ՚անցնի իր կորսնցուցած աչքին համար՝ կը պարզուի եսքէն, երբ կը գրէ իր «Մէկ հաչիկս» անզուգական էջերուածը:

Իմ մէկ հաչիկս հիմա, որ կը դիտես զիս վիաս,

Հայելիին ջրհորէն,

Քեզի նման ու քեզմով կը նայիմ ես ալ վրադ

Երկարտէն, ծանրտէն...

Ե՞ն արդեօք քեզ, թէ դուն զիս կը մեղմանաս աւելի

Երբ իրար լուռ կը դիտենք...

Իմ մէկ հաչիկս... օհ, ինչպէս սիրտս վրադ կը դողայ,

Երբ կը տեսնեմ քեզմով քեզ,

Քու արցունքովդ քեզի կը պաղատիմ ես հիմա՝

Որ դուն ալ զիս չլքես...

Գրական գոհար մը, արդարեւ: Սակայն կ՚արժէ՞ր մէկ աչքը վրայ տալ այսպիսի գլուխգործոց մը յօրինելու համար: Թող մեր գրականութեան պատմութիւնը տայ իր վճիռը այդ մասին:

Թէքէեանի մասին հետաքրքրական խօսակցութիւն մը ունեցած եմ գրականագէտ եւ հրապարակագիր Մինաս Թէօլէլեանի2 հետ, երբ ան կը պատրաստուէր վերահրատարակել իր «Դար մը գրականութիւն» գործին առաջին հատորը:

Հարց տուի իրեն, թէ պիտի պահէ՞ր 2-րդ տպագրութեան մէջ Վահան Թէքէեանի մասին ըրած իր մէկ անհարկի նկատողութիւնը:

- Պրն Թէօլէօլեան, դուք գրած էք, թէ «Թէքէեան երբեմն ունէր քաղաքական միականի դատումներ»: Նախ որեւէ ազնիւ բան է գրականագէտի մը համար հեգնել բանաստեղծի մը գաղափարները՝ վեր առնելով անոր ֆիզիկական մէկ թերութիւնը: Իսկ եթէ միականի ըլլալը յանցանք մըն է, ատոր ալ պատասխանատու դուք էք, դաշնակցականնե՛ր, որ կուտացուցիք մարդուն մէկ աչքը:

Այդ նկատողութեան վրայ Թէօլէօլեան ազնուութիւնը ունեցաւ 2-րդ տպագրութեան մէջ զանց առնելու այդ հատուածը:

▼▼▼

Թէքէեանի ճակատագրակից մը դարձաւ նաեւ Շահան Շահնուր 1930-ական թուականներուն, Փարիզի մէջ: «Քու տառօսիդ պիտի հասնէի վրայ տալով մէկ աչքս», կը գրէ Շահնուր, Թէքէեանին ուղղեալ անձնական նամակի մը մէջ:

Շահնուր կուտէր տարալող բուռն տաղանդ մըն էր, որ շատերու անհանդուրժողութեան արժանացած էր. յիշենք միայն Վազգէն Շուշանեանի պարսաւագիրը անոր դէմ, որուն մօտաւոր վերնագիրն է՝ «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգիին մէջ»:

Այս անգամ սակայն, Շահնուրի բախումը նահատակ գրագէտ Ռուբէն Զարդարեանի ընտանիքին հետ էր. ան ննադատութեան ենթարկած էր Զարդարեանի «Գամբռը» վերնագրեալ գործը: Զարդարեանի երկու որդիները, Փարիզի «Ֆլորիա» ճաշարանին մէջ, ետեւէն մօտենալով Շահնուրին, կը յարձակին անոր վրայ, ջարդելով անոր ակնոցները: Բայց Շահնուր համեմատաբար անվնաս դուրս կու գայ այդ յարձակումէն:

Լրագրական ասպարէզի մէջ ես ալ տուած եմ իմ արեան տուրքը անզօր բռունցքներու: Սակայն, ատկէ առաջ եւ ատկէ աւելի զիս խոցած է իմ մեծդորիս, հայ մամուլի առիւծին՝ Գերսամ Ահարոնեանի դէմ սարքուած դատադրութիւնը: Արդարեւ, Ռամկավար ազատական կուսակցութիւնը ներսէն տարալելու առաքելութեան կոչուած վարձկաններ, քանի մը զինեալ մարտականներ կը դրկեն «Զարթօնք»ի խմբագրատունը ու զինք պատին դիմաց կանգնեցնելով կը սպառնան անոր3: Չեմ կարծեր որ կը յաջողին ընկրկումի ենթարկել զայն, որովհետեւ հոգեկան արիութեան տէր անձ մըն էր ան: Ես ականատես վկան եղած եմ ուրիշ դէպքի մը, որմէ կրած վախս ու նաեւ հպարտութիւնս պիտի մնան առ յաւէտ իմ մէջ: Լիբանանի 1958-ի քաղաքացիական կռիւներուն ընթացքին, բոլոր կուսակցութիւններն ալ ունէին իրենց զինեալները, որոնք երբեմն իրենց զէնքերուն սպառնալիքը կ՚ուղղէին իրենց իսկ մեծերուն դէմ: Օր մը, միջօրէին, երբ Գերսամ Ահարոնեան իր գրասեղանին առջեւ կեդրոնացած կ՚աշխատէր խմբագրականի մը վրայ, յանկարծ մեր զինեալ տղոցմէ մէկը մօտեցաւ անոր եւ ատրճանակը դէմին ուղղելով 100 լիբանանեան ոսկի պահանջեց: Գերսամ իր խաժ աչքերը սեւեռելով անոթոյ երիտասարդին վրայ, կարծես տեղն ու տեղը շանթահարեց զայն հրահանգելով՝ «վար դիր այդ զէնքդ». երիտասարդը մոկ կտրած հեռացաւ խմբագրատունէն:

▼▼▼

Տարեքիւերը կարծէք կախարդական բան մը ունին իրենց մէջ: 1916-ին Վահան Թէքէեան խոշտանգուեցաւ, երբ կը խմբագրէր «Արեւ» թերթը: Թուականները շրջելով, երբ կը հասնինք 1961-ին, «Արեւ»ի ուրիշ մէկ խմբագիրը կ՚ենթարկուէր միեւնոյն ճակատագրին:

Արդարեւ, 1959-ին ինծի շնորհուեցաւ բացառիկ պատիւը՝ հրատիրուելու Գահիրէ եւ գրաւելու Վահան Թէքէեանի խմբագրական աթոռը: Բնականաբար շոյուած էր ինքնասիրութիւնս, որ 24-25 տարեկանիս այդպիսի անհաւասալի պատիւ մը կ՚ընծայուէր ինծի, եւ ամէն ճիգ կը թափէի արժանանալու այդ պատիւին: Սակայն դեռ չէի գիտեր, որ այդ պատիւին հետ Թէքէեանի գլխուն եկած փորձանքն ալ վերադարձած էր ինծի:

Ապրիլ ամսուն էր, առաւօտ մը, երբ տունէն քալելով աշխատանքի կ՚երթայի, անզուգական ընկերոջս՝ Վաթերթին խմբագիրը՝ Անդրանիկ Ծառուկեանը, բանախօսելու: Այս վերջինը նոր հեռացած ըլլալով Դաշնակցութեան շարքերէն, դարձած էր կուսակցութեան Bête noire-ը: Հետեւաբար, ան մատնուած էր եգիպտական կառավարութեան իբրեւ «համայնավար խռովարար»:

Ծառուկեան Գահիրէ հասնելով 24 ժամ վար դրուեցաւ օդակայանին մէջ, եւ համայնքը վերջին պահուն փոխարինող բանախօս մը ճարեց ոգեկոչման համար:

Յաջորդ օր, Արեւ»ի զայրալից մէկ գրութիւնը կ՚ըսէր, թէ «Միայն թուրքերը պիտի ուզէին խափանել Եղեռնի ոգեկոչումը...»: Խոշտանգումին օրը, երեկոյեան, որուան էր ընտրական միթինկ, որուն գլխաւոր բանախօսն էի ես: Հիւանդանոցէն դուրս գալով, վիրակապերով բարձրացայ բեմ ու կը յիշեմ իմ ճառախօսութիւնս սկսած ըլլալ Գնէլ սրբազանի6 մէկ արտայայտութեան կրկնութեամբ:

- Այնպէս, ինչպէս շիկացած երկաթը ջուրի մէջ թաթխուելով պողպատ կը դառնայ, մենք ալ արեան մէջ թաթխուելով կարծրացանք:

Ինչ խօսք, որ երեք օր վերջ, էջմիածնի հաւատարիմ ճակատը տարաւ ամբողջական յաղթանակ:

... Երեսունհինգ տարիներ վերջ, երբ արդէն Դիտորդ էի հաստատուած՝ հեռախօսային զանգ մը ստացայ Թէքէեանէն.

- Ես Նազարէթ Գալուստեանն եմ, կը յիշէ՞ք զիս:

Բռունցքն ու գրիչը հայ հրապարակագրութեան մէջ

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

- Այո, կը յիշեմ, բայց ոչ հաճելի պայմաններու տակ:

- Կը հեռաձայնեմ նախ ներողութիւն խնդրելու ձեզմէ:

- Թէեւ ինչ մը ուշացած էք, բայց ոչինչ, կը ներեմ:

- Ես հիմա հրաժարած եմ անցեալի այդ խենդ խնդիրներէն եւ նուիրուած եմ հայ նոր սերունդին դաստիարակութեան: Սերունդները ձեռքէ կ՚երթան, դիտ եւ մենք ձեռ-ձեռքի տալ պէտք է աղաղակելու անոնց հայեցի դաստիարակութիւնը: Ես հիմա Հիւրքնի էջմիածնական եկեղեցւոյ հայ դպրոցին մէջ հայերէն կ՚ուսուցանեմ նոր սերունդին. կը խնդրեմ որ մեր դպրոցը աղաղակէք համակարգիչով մը:

Համակարգիչը շատ կերպով որկուեցաւ Թեքսաս:

- Խոշտանգումի դիմաց՝ համակարգիչ... ի խնդիր նոր սերունդի հայեցի դաստիակութեան:

▼▼▼

«Զարթօնք» օրաթերթի նախկին խմբագիր Յակոբ Աւետիքեան Հայաստանի անկախութենէն վերջ գնաց հաստատուելու Երեւան, սկսաւ հրատարակել «Ազգ» օրաթերթը: Իբրեւ հեղինակատոր գրիչի տէր խմբագիր՝ ան եւս ենթարկուեցաւ խոշտանգումի7: Հետեւաբար մամուլի այս բարքը յատուկ չեն միայն սփիւռքին: Այսօր «Ազգ» օրաթերթը հայրենական մամուլի ամէնէն հեղինակատոր հրատարակութիւններէն մէկն է՝ հաստատելով անոր խմբագրին... խոշտանգումի «արժանի ըլլալու պատիւը»:

▼▼▼

Վերադառնալով Շէնեանի հետ ունեցած իմ հեռախօսազրոյցին՝ ատիկա վերջ գտաւ զուարթ տոնով մը: Զինք շնորհաւորեցի այս յիշատակելի տասնամեակին առիթով, ոչ անոթայման խոշտանգուած ըլլալուն համար, այլ՝ վերադարձած ըլլալուն համար: Վերադրումի տասնամեակ:

Երկուքս ալ ծիծաղով համաձայնեցանք, որ թէեւ հաճելի չէր այդ փորձառութիւնը, սակայն, այդ կերպով... անցած էինք անմահներու դասուն:

Գեղրոյր, ԱՄՆ

Ծանոթագրությունները՝ տես էջ 8

«ԿԱՐՄԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ, ՎԵՄ»
ԿԱՄ ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ԼՈՒՅՍԸ

«Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զբաղբ...»

Մեծարենց

ՅՈՒՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տրենտիուս Մավրի՝ այլեւս թեւավոր դարձած հայտնի խոսքը դդում է մտածելու ոչ միայն գրի ու գրքերի, այլեւ գրական ստեղծագործության ու իր հեղինակի ճակատագրի մասին. ի՞նչ է պատահում, որ գրողի ճակատագրի թեւի սվերը խաչի պես ընկնում է գրի ու ստեղծագործության վրա: Եվ կամ՝ հակառակը:

...Կարմիս Սուրենյանը ստեղծագործական սխրանք է գործել, ամբողջացնելով եւ հրատարակելով շուրջ 1600 էջ կազմող իր նոր գիրքը երկու հատորով, որ կրում է **«Օրագիր. 1943-2001»** խորագիրը: Իրապես սխրանք է Կարմիս Սուրենյանի առածը, մեզանում իր նախադեպը չունեցող իրողություն:

Հետաքրքրական է գրի, ավելի ճիշտ՝ գործի ստեղծման պատմությունը: Կարմիս Սուրենյանը ծնվել է Աթենքում, նախակրթարանից հետո կրթությունը ստացել է Կիպրոսի Մելգոնյան նշանավոր վարժարանում: **«Մելգոնյան կրթ. հասատության դասարանակարգը սկսվում էր չորրորդից, ութերորդը համապատասխանում էր միջնակարգի ավարտականին, իններորդը եւ տասներորդը մասնագիտական էին համարվում, կիսաբարձրագույն»:** Եվ այստեղ էլ, Մելգոնյան նշանավոր դպրոցում էլ պատանի Սուրենյանը ձեւավորվում է իբրեւ էություն, իբրեւ բնավորություն ու նկարագիր, իբրեւ մտածող ու զգացող անհատ: Մելգոնյան կրթական հաստատությունը իր պատմության մի շրջանում հայկական եզակի այն կրթօջախներից մեկն էր, ուր սովորողը կարող էր ձեւավորվել իբրեւ անհատ, իբրեւ մարդ եւ քաղաքացի: Հավանաբար, բազմաթիվ հանգամանքների բարենպաստ հանդուրմար է անհրաժեշտ նման կրթական հաստատության ծնունդի եւ գոյության համար: Եվ ահա Մելգոնյանում ուսանելու տարիներից սկսած, իր ողջ կյանքի ընթացքում, թեեւ որոշ ընդհատումներով, դդրոցի աշակերտ Կարմիս Սարկավագյանը, հետագայում՝ արդեն գող Կարմիս Սուրենյանը օրագիր է պահել: Սա ինքնին արդեն եզակի երեւույթ է: Թվում է՝ անցել են էմիսդյար գրականության ժամանակները եւ անցել են շատ վաղուց. օրագիրն ու նամականին ոչ միայն իբրեւ գրական ժանր, այլեւ առօրյա կենսական իրողություն, թվում է, այլեւս պատկանում են պատմություն դարձած հեռավոր ժամանակների եւ իրականության:

Բայց անգլիացի գրողն ասում է, որ բոլոր իսկական գրողները միշտ խոսում են, միշտ ասելիք ունեն: Եվ եթե նույնիսկ ունկնդիր չկա, խոսում են իրենք իրենց հետ: Ահա, պատճառներից մեկը սա է, կարծում եմ, որ Կարմիս Սուրենյանը օրագիր է պահել՝ ինքը դառնալով իր զուցակիցը, խոսելով ինքն իր հետ, գրելով միայն ի՛ր համար... Հայտնի եւ անհայտ օրագրությունների առաջին եւ ամենամեծ հատկությունը պետք է լինի անկեղծությունը: Հավատում ենք, որ այդպես են գրված նշանավոր մտածողների ու գրողների հայտնի երկերը՝ Ավգուստինոս Ավրելիուսի «Խոստովանություն»-ից մինչեւ Ժան-Ժակ Ռուսսոյի «Խոստովանությունը», Տոլստոյի «Խոստովանանք»-ից մինչեւ Մահաթմա Գանդիի «Իմ կյանքը»... Բայց դարձյալ մի, եթե չասեմ տարակուսելի, ապա պիտի ասեմ երկբայական բան ունեն իրենց մեջ. դարձյալ բոլորը հասցեագրված են ընթերցողին, մանավանդ նոր ժամանակների հեղինակների գործերը, որոնք գրված են տպագրության համար... Մելգոնյան վարժարանում սովորող դդրոցականի մտքով անգամ չէր անցնի, որ իր գրառումները մի օր տպագրվելու են:

Հետո գալիս են հայաստանյան կյանքի տարիները, որոնք փաստորեն հոգեկան դիմակայության եւ դիմադարձության, իսկ ընդհանուր առմամբ՝ պարզապես դիմանալու տարիներ ու տասնամյակներ են եղել, ուրեմն՝ այստեղ էլ խոսք չէր կարող լինել տպագրվելու մասին: Այսինքն՝ կասկածել անգամ անկարելի է Կարմիս Սուրենյանի օրագրային գրառումների անկեղծությանը եւ շիտակությանը, մանավանդ որ օրագրողը, դրսի իրականությունից շփոթահար ու անօգնական կամ թե խոցված ու վիրավորված, առավելեալ է սրիտակ թղթի մարությանը: Ես ճանիցս առիթներ եմ ունեցել տեսնելու ձեռագրերի այդ վիթխարի դեզը, այդ անչափելի ծավալը: Այդ գրառումները արված են եւ՝ ընդհանուր կոչվող տեսրերում, եւ՝ զանազան առանձին թղթերի վրա, եւ՝ հաստատական մասյաններ նմանվող «դավթարներում», եւ՝ աշակերտական վանդակավոր սովորական տետրերում՝ Մելգոնյան հասատության բաժանած դդրոցական տետրակներում... 1993 թ 1994 թվականներին դանցից ամբողջական հատվածներ տպագրվեցին «Վարուժան»-ում: Այնքան հատուն էին դրանք իբրեւ գրական գործ, իբրեւ գրական մտածողություն, այնքան բարձր ու ամբողջական, որ ընթերցողի հնարավոր տարակուսները ցրելու համար որոշեցի իր աշակերտական տետրի մի հատվածը, ձեռագրով հանդերձ, տպագրել թերթում...

Գրողի օրագրությունը սկիզբ է առնում Մելգոնյանում եւ շարունակվում է իր հետագա ողջ կյանքի ընթացքում: Ինչպես արդեն ասացի, սա զարմանալի եւ աննախադեպ երեւույթ է, որովհետեւ եղել են տարիներ, երբ գրողը խիստ ծանրաբեռնված է եղել ստեղծագործական աշխատանքով՝ իր գրքերը գրելով եւ իր հոյակապ թարգմանություններն անելով: Եվ թե՛ իր գրքերն են ծավալում եւ թե՛ մանավանդ իր թարգմանությունները... Այդքանից հետո եւ այդքանի հետ ե՞րբ է հասցրել գրողը թղթին հանձնել հազարավոր էջեր կազմող իր մտածումներն ու խորհրդածությունները, դժվար է պատկերացնել... Եվ դեռ մտաբերենք այն կյանքն ու կենցաղը, որով ապրել է Կարմիս Սուրենյանը, տարիներ շարունակ իր ապրուստը հոգալով իբրեւ երգչախմբի երգիչ:

Ես պատահական բառ չասացի՝ իրոք հազարավոր էջեր են կազմում իր օրագրությունները: Իրոք այդպես է: Եվ երբ մի քանի տարի առաջ միտք է հղանում դարձյալ առանձին գրքով հրատարակելու (այդ մասին նա մանրամասնաբար պատմում է «Նախաբան»-ում), հեղինակը դժվարության առաջ է կանգնում, որի մասին նա պատմում է իր կրտսեր բարեկամներին. ինչ անել, պահե՞լ օրերի ու ամիսների անունները, ինչպես որ գրվել է օրագիրը, թե՞ գնալ ընդհանրացումների եւ կրճատումների ճանապարհով: Գրողը ընտրում է վերջին տարբերակը: Եվ սկսվում է մի ծանր, իրոք տառապալից աշխատանք՝ կարգի բերելու, երբեմն պարզապես վերծանելու արագորեն գրի առնված, հաճախորեն թղթին հանձնված անմիջական ապրումների ու տպավորությունների պատմությունները... Ձեռագրերը խունացած էին, երբեմն մատիտով գրված եւ գրեթե անընթեռնելի... Կարմիս Սուրենյանը հաղթահարեց այդ վիթխարի աշխատանքը՝ ի մի բերելով, միասնական գրողական հայացքի ներքո ամբողջացնելով իր կյանքի պատմությունը, որն, ըստ իս, իր կյանքի մեծագույն գործը եղավ... Թերեւս իր ոչ մի գրքում Կարմիս Սուրենյանը այնքան ամբողջական, կատարյալ ու հստակ չէ, որքան այս գրքում:

Այս գրքի ժանրային ընկալման վերաբերյալ ես իմ մտածումներն ունեմ: Մտածումս հստակելու համար մի օրինակ պիտի բերեմ ֆրանսիական գրականությունից: Ֆրանսիացի հանրահայտ գրողն ու բանաստեղծը մի գիրք է գրել խանձորդ դարի մեծ նկարիչներից մեկի մասին: Ավելի ճիշտ՝ ոչ թե գրել է, այլ գրելով կազմել-կառուցել-ստեղծել է: Շատ անսովոր գիրք է: Գիրքը նշանավոր գրողի ու բանաստեղծի՝ տասնյակ տարիների ընթացքում նկարչի մասին գրված տասնյակ հոդվածներն են, նրան նվիրված բանաստեղծությունները, հիշողությունները, հուշերը, գրողի մտածումները, դատողություններն ու տեսական վերլուծումները... Եվ այս բոլորը մի անսովոր, գրեթե գաղտնական կառույցի մեջ-կառույցի տեսքով: Եվ այդ տեսքով գիրքը զարմանալի միասնականություն եւ ամբողջականություն ունի եւ թվում է, թե հատկապես այդպես է հղացված ու ստեղծված, այդպես գրված է մի շնչով: Հեղինակը իր գիրքը համարում է վեպ: Ասվելին, ընդելով գրքի ժանրային ընկալման վրա, կարծես թե կանխելով ընթերցողին եւ գրելով նրա տարակուսները, հեղինակը ժանրի անվանումը դարձել է գրքի խորագրի մաս: Եվ գիրքը հենց այդպես էլ կոչվում է՝ «Անրի Մատիսս, վեպ»: Դառնամ իմ բուն ասելիքին: Թեպետեւ գործը վերնագրված է «Օրագիր» եւ գրված է իբրեւ օրագրություն, սակայն այն ամենը, ինչը այսօր գրքի տեսք է ստացել, ամենեւին էլ օրագիր չէ սովորական առումով: Իմ ընկալմամբ, Կարմիս Սուրենյանի այս գիրքը վեպ է, յուրատեսակ մի վեպ, որ իր մեջ ամփոփում է իրոք օրագրության, հուշագրության, փաստագրական պատումի բնորոշ գծեր, պատկերում է իրական մարդկանց ու իրական անձնավորությունների, ներկայացնում է իրական կյանքի իրական ժամանակ, այնուամենայնիվ այս գիրքը վեպ է, գեղարվեստական վեպ: Վեպ է, որովհետեւ իրական դեպքերը, երեւույթները, մարդիկ նկարագրված են գեղարվեստական միասնական-ամբողջական հյուսվածքի մեջ, գեղարվեստական խոսքի հարթության վրա, վիպական արձակի լեզվի տիրույթում: Եվ իրական մարդիկ իրոք դառնում են գեղարվեստական հերոսներ: Վեպի գլխավոր հերոսը ինքնին ինքը հեղինակն է, Կարմիս Սուրենյանը: Բայց, ի պատիվ գրողի, տեղնուտեղը պետք է արձանագրեմ, որ լինելով անձնական-անհատական կյանքի եղելությունների ու իրողությունների վրա կառուցված ստեղծագործություն, մեկ մարդու մասին պատմող գործ, այս գիրքը ամենեւին էլ սոսկ մի անհատի կյանքի պատմություն չէ, այլ իրոք գեղարվեստական մեծ ընդհանրացումների ու ընդգրկումների հասած, հրաշալի կերպարներ, ճշմարտացիորեն պատկերված կյանք եւ անցյալից հստակորեն կորզված-որսված ժամանակ ներկայացնող ստեղծագործություն: Վեպի գլխավոր հերոսը մեր աչքերի առջեւ մանրամասնորեն բացում է ոչ միայն իր կյանքն ու ներաշխարհը, այլեւ մեզ ուղեկից դարձած քայլում է մեզ հետ ժամանակների միջով՝ մեզ հստակ դարձնելով այդ ժամանակների հարուստ, երբեմն՝ շատ խառն ու խրթին բովանդակությանը, կյանքի այն իրողություններին, որոնց ականատեսն ու մասնակիցն է եղել ինքը եւ որոնք երբեմ էլ գրականության նյութ ու թեմա չդարձան մեր երկրի քաղաքական ռեժիմի, կյանքի ու հանրության կազմակերպման խորհրդային ձեւի պատճառով, երեւույթներ, կյանք, իրականություն, որոնց մասին չէր կարելի խոսել, առավել եւս՝ ճշմարիտ խոսք ասել կամ դատողություն անել Կարմիս Սուրենյանի այս գործը, ինչպես որ իր նախորդ գրքերը, մեզ համար, մեր գրականության եւ մանավանդ մեր գրականագիտության համար մի տեսակ «անսովոր» գրականություն են: Հեղինակը իր անձնական-անհատական ընկալումներով ու մտորումներով դառնում է կենսորնական դեմք, գլխավոր հերոս, բայց խոսում է հիմնականում կյանքի ու ժամանակի մասին: Ինչ է սա, գեղարվեստական գրականությո՞ւն, թե՞ մի այլ բան... Կարմիս Սուրենյանը դա անվանում է խոհագրություն, մի տեսակ միջին մի ժանր էսսեի եւ գեղարվեստական գործի միջեւ, փորձելով միեւնույն ժամանակ բացատրել թե արդարացնել իր գրականությունը: Իզո՞ւր: Դա զուտ գեղարվեստական գրականություն է, որ շատ բնորոշ է 20-րդ դարին: Եվրոպա չհասնելու համար բավական է վկայակոչել ռուս ընտիր գրողների գործերը՝ Բորիս Պիլնյակ, Յուրի Օլեշա, Կոնստանտին Պաուստովսկի, ուրիշներ... Բայց ինչու հասա մինչեւ ռուսները, երբ մենք՝ ինքներս, փառահեղ օրինակներ ունենք այդօրինակ գրականության՝ Եղիա Տեմիրճիպաշյան, Տիրան Չրաքյան (Ինտրա), Կոստան Զարյան... Ուղղակի տասնամյակներ շարունակ մենք սովորել ենք - մեզ սովորեցրել-ընտելացրել են «Հացավանի» կարգի հակագրական գրականության:

Եվ իբրեւ վեպ, Կարմիս Սուրենյանի այս գործը ունի կառուցվածքային, գեղագիտական եւ գեղարվեստական իր յուրահատկություններն ու արժանիքները, որոնց մասին խոսք կլինի ստորեւ:

Գիրքը բաղկացած է չորս մասից, որոնցից յուրաքանչյուրը առանձնանում է ոչ միայն թեմայով ու բովանդակությամբ, այլեւ նյութի պատկերմամբ ու մատուցմամբ, գրողական մոտեցումով ու գեղարվեստական հյուսվածքով: Մասերից յուրաքանչյուրը այնքան ամբողջական է, որ կարող էր առանձին վեպ կոչվել ու համարվել եւ ամբողջ գիրքը կընկալվեր իբրեւ մի էպոպեա, ասք, ժամանակների, կյանքի ու մարդկանց մասին՝ գրված վեպերի շարքի ձեւով: Ինչեւէ, առանց վիպական անվանումների էլ Կարմիս Սուրենյանի վեպը մի պատկերավոր գեղարվեստական պատմություն է հինգ-վեց տասնամյակների մեր կյանքի մասին (մեր սփյուռքն էլ մեր կյանքն է)՝ մեր անկումներով ու մեր վերելքներով, մեր հավատով ու մեր հույսերով, մեր սրտաբուռներով ու մեր տագնապներով, վերջապես՝ մեր կյանքի ներքին դրամատիզմով եւ իրականությամբ:

Դառնամ բուն գործին:

▼▼▼

Գրքի առաջին մասը կարելի է կոչել «Տենչահույզ սրտի խոստովանանք՝ երաժշտությամբ եւ գրականությամբ»: Այս առաջին մասում պատանի Սարկավագյանի կյանքի պատմությունն է՝ Մելգոնյան դդրոցի Թ դասարանից մինչեւ 1947 թվականը, երբ մի տարի է, ինչ Սարկավագյան ընտանիքը Հունաստանից՝ Աթենքից ներգաղթել է Հայաստան: Բնականաբար, այս առաջին մասում մեծ տեղ են զբաղեցնում Մելգոնյան կրթական հաստատության կյանքին ու ժամանակին վերաբերող էջերը: Զանազան հանգամանքների բերումով պատանի Սարկավագյանը, դեռեւս տղեկ, պետք է բաժանվի,- եւ բաժանվում է,- ծնողներից եւ ընտանիքից եւ հասնի այս կղզին՝ Կիպրոս, ուր պիտի ապրի գիշերթիկ սաների հետ բարեգործական դդրոցում: Այն տարիում, երբ երեխան երեւի թե առավել կարիք ունի ծնողների եւ ընտանիքի ներկայության, ընտանեկան տաք ու ջերմ միջավայրի, խանդաղատանքի ու սիրո, ահա այդ տարիքում դեռահաս պատանին զրկվում է այս բոլորից եւ հայտնվում է գիշերթիկ դդրոցում: Եվ դդրոցն էլ բնակավայրից այդքա՜ն հեռու փակ հաստատություն է, իր խիստ կարգուկանոնով, խստակյաց կյանքով: Ի՞նչ պետք է անի դդրոցում հայտնված դեռահասը. կա՛մ պիտի հարմարվի դդրոցական կյանքին, պարտադրված ապրելակերպին, կա՛մ վաղաժամ պիտի թողնի-հեռանա, ինչպես շատերը, ինչպես գեղանկարիչ Հակոբ Հակոբյանը, կա՛մ պետք է որեւէ այլ ձեւով փախուստ տա այդ իրականությունից... Կարմիս Սուրենյանը ընտրում է վերջին տարբերակը եւ փախուստով է փրկվում Մելգոնյան հաստատության պարտադրված իրականությունից: Բայց նրա փախուստը սովորական փախուստ չէ, ուղղակի իմաստով փախուստ չէ: Դա փախուստ էր դեպի իր ներսը, դեպի մտածող ու զգացող մարդու նուրբ ու լքին ներաշխարհը (ահա, վերջապես հայտնվեց Ինտրան), փախուստ դեպի գրականություն եւ արվեստ: Սա թեեւ բնականոն չէ ամեն դեռահասի համար, բայց իբրեւ բացառություն հասկանալի է եւ բացատրելի: Այս եղանակով պատանի Սարկավագյանը Մելգոնյան դդրոցում ապրում է երջանիկ առանձնության մեջ, մի ներփակ աշխարհում, որ լեցուն է հմայիով ու գեղեցկությամբ, երանությամբ եւ անդորրով, այլ խոսքով՝ բնության գեղեցկությամբ ու մաքրությամբ, գրականության տված հարստությամբ եւ երաժշտության տված ներդաշնակությամբ եւ անդորրով: Առհասարակ ամենամեծ փախուստներից մեկը ընթերցանությունն է, գիրքը, կարդալը: Սեփական իրականությունից անբավական լինելն է, որ ստիպում է փակել աչքերը իրականության դեմ, գիրքը բացել այնպես, ինչպես ուրիշ մի, կանչող, հեքիաթային աշխարհի դուռն են բացում, եւ մտնել մի այլ, շուրջը եղած իրականությունից տարբեր իրականություն:

Գրքի այս առաջին մասում գլխավոր հերոսը ինքն է՝ պատանի Սարկավագյանը եւ ամբողջ Մելգոնյան դդրոցը: Ինչ խոսք, հրաշալի է պատկերված դեռահասի մուտքը դդրոց, նրա կյանքը դդրոցում եւ դդրոցական միջավայրում, դեռահասի մեջ օր-օրի կատարվող փոփոխությունները, այն ընթացքը, որ դեռահաս պատանուն տանում է դեպի մեծ, նոր միայն հայտնագործվող, բոլորովին նոր հարաբերությունների աշխարհը, հասակ առած ու կյանք մտած մարդկանց աշխարհը՝ մանկության երազ աշխարհից եւ պատանեկան գունագեղ իրականությունից բոլորովին տարբեր մի իրականություն: Այս տարիներին, երբ դեռահասը նոր-նոր միայն հայտնագործում է շրջապատող առարկայական աշխարհն ու մարդկային հարաբերությունների անճանաչելի ոլորտները, բնականաբար, առաջանում են հարցեր, որոնք տարակուսներ են ծնում եւ տվայտանքներ պատճառում մեծ կյանքի շեմին հայտնված դեռահաս պատանուն: Դարձյալ հարցեր են, որոնք բնորոշում-բնութագրում են մարդ-արարածին իր գոյության անհիշելի ժամանակներից ի վեր,

Տես էջ 9

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Գիրք եւ ժամանակ

9 էջից

թվում են առեղծվածային, ուղեկցում են մտածող ու զգացող ամեն մի անհատի եւ ոչ միայն անհատի, այլեւ միմյանց հաջորդող սերունդների, տեւում են մարդկային կյանքի հետ եւ պատասխան են հայցում ու պահանջում մարդու գոյությունը, նրա գոյության առեղծվածը հասկանալու, այդ գոյությունը իմաստավորելու համար: Եվ դեռ կա «**հարցերուն հարցը. արդեօ՞ մարդ էակն ալ ընդհանրապէս, գոյելով ժամանակ-տարածութեան առեղծուածին մէջ, հին ատեններէ ի վեր խարխափումներով, վայրիվերումներով բարձրացած է այդ նախնական բնազդական ապրումէն այս ներզգացման խորհուրդին, ու ներզգացման մէջ զարմանքի ու հիացիկ երկիւղի պահին չէ արդեօ՞, որ խորըմբռնած է համընդհանուր ոգեկան նոյնութեան Գերագոյն Ճշմարտութիւնը, զոր իր սիրտին եւ միտքին հարազատեցնելով կոչած է Աստուած կամ Արարիչ կամ Պրահման կամ Դաօ, եւ կամ, աղագային, թերեւս ուրիշ անուններով ալ պիտի կոչէ՝ չեմ գիտեր Ինչ...**»:

Ինչպես նկատեցիք, ինչպես այս մեջբերումից երեւաց, գրքի առաջին մասը գրված է արեւմտահայերեն եւ դասական ուղղագրությամբ, այսինքն՝ ճիշտ ու ճիշտ այնպես, տառացի հարազատությամբ այնպես, ինչպես որ իր աշակերտական տետրակների էջերին գրի է առել Մելգոնյան դպրոցի սան պատանի Սարկավագյանը: Ուղղագրությունը՝ դեռ մի կողմ: Նկատեցի՞ք նաեւ, որ գրքերի ու իր օրագրի վրա հակված դեռահասի թիկունքում երեւում է մի այլ դեռահասի սվեր՝ Դոստոեւսկու Այրոտա Կարամազովը:

Աշխարհում, իհարկե, գրքեր կան, որ կարող են մարդու ճակատագիր փոխել, առհասարակ փոխել մարդու կյանքի ուղին: Կարպիս Սուրենյանի համար թերեւս այդպիսի հեղինակ է եղել Դոստոեւսկին, որին նա «հայտնագործել է» վաղ պատանության տարիներին, եւ իր համար թերեւս այդպիսի գիրք է եղել «Կարամազով եղբայրներ» վեպը: Որքա՞ն հարցեր եւ որքա՞ն պատասխաններ կան այդ վեպում: Գիրքը գտել էր իր իսկական, ճշմարիտ ընթերցողին: Սարկավագյանի հետագա ողջ կյանքը անցնելու է այլեւս Դոստոեւսկու ասողի ներքո, նրա հուզավառ եւ տեսանող հերոսների թելադրիչ ներկայությամբ:

Պատանի Սարկավագյանը ընթերցողի առջեւ խոստովանանքային անկեղծությամբ բացում է իր ներաշխարհի բոլոր անկյունները, բոլոր ոլորտները, ընթերցողին է պարզում իրեն տանջող բոլոր տեսակի հարցերը՝ հոգեբանական, բնազանցական, ճանաչողական, խոստովանում է իր տարակույսներն ու տվայտանքները, իր պատանեկան վերելքներն ու անկումները: Օր-օրի նա փոխվում է մեր աչքերի առջեւ, հասունանում-ձեւավորվում է իբրեւ հայ մարդ, իբրեւ անհատ, իբրեւ ստեղծագործական բնավորություն: Անկեղծությունը խոսքին տալիս է հավաստիություն, ճշգրտություն եւ համոզչություն: Շատ հետաքրքիր է ներկայանում պատանի Սարկավագյանը դպրոցական կյանքի ու հարաբերությունների մեջ: Առհասարակ, դպրոցը բարդ եւ դժվար ճանաչելի մարմին է, դժվար բնութագրելի երեւույթ, որովհետեւ այն, ի վերջո, անընդհատ՝ ամեն օր, ամեն ժամ փոփոխվող աշխարհ է, հարյուրավոր անվերջ փոփոխականների դժվար ու բարդ միասնություն: Այս առաջին մասում իբրեւ հերոս Սարկավագյանը ամենեւին էլ միայնակ չէ. իր գրառումներում հայտնվում են իր դասընկերներն ու ընկերները, իրենից տարբեր, բայց եւ իրեն նման պատանիներ: Եվ, իհարկե, իր ուսուցիչները, որոնցից երկուսը վստահաբար մանկավարժ են, իսկական ուսուցիչ՝ պրոֆեսիոնալ մանկավարժ եւ հոգեբան Պողոս Գետրգյանը եւ գող ու թարգմանիչ Հովհաննես Շյոհմելյանը: Նրանք մեծ ազդեցություն են թողել պատանի Սարկավագյանի նկարագրի ձեւավորման վրա, եւ աշակերտ Սարկավագյանը հրաշալի է պատկերել նրանց: Հրաշալի ներկայություն է դպրոցում Գեւորգ Ահարոնյանը, աղագա նշանավոր խմբագիրն ու հանրային գործիչը: Այս մարդկանց կողքին կար նաեւ պրն. Սարգիս Աղտայանը, մասնագիտությամբ՝ բնագետ, բայց առավել հայտնի իբրեւ բանաստեղծ Վահե-Վահյան: Նրան էլ է հրաշալի պատկերել Սարկավագյանը, իր գրառումներում նրան առանձնակի տեղ է հատկացրել: Ինչ առած, նման դասատուներ մեր դպրոցներում միշտ եղել են, կան ու կլինեն:

Ըստ պատանի Սարկավագյանի գրառումների, Մելգոնյան դպրոցի աշխարհը եղել է մի թովիչ ու գրավիչ միջավայր, որ ամենեւին նման չէ նույն դպրոցի սան Հակոբ Հակոբյանի հիշողության մեջ մնացած Մելգոնյան դպրոցին: Ըստ ամենայնի, Մելգոնյանը եղել է իրական կյանքից ու սոցիալական միջավայրից առանձնացած, իր ներքին կյանքով ապրող կրթական փակ հաստատություն: Բայց այնուամենայնիվ պատանի դպրոցականի գրառումների մեջ անուղղակիորեն թափանցում են սփյուռքի հայկական կյանքի ողջ դրամատիզմն ու բարդությունները, համայնքային ներքին հակասություններն ու ջլատումները, որոնք արթնացնում են պատանու հոգում նիրհած կամ իր ժամին սպասող հանրային անհատին-գրողին-մտածողին:

Պատանի Սարկավագյանը իր միայնության մեջ ապավինում է նախ եւ առաջ բնությանը: Բնության նախնականությունը տրամադրում է պատանուն հայեցողական ընկալումների եւ մտածումների, որոնք նրան հասցնում են, իր խոսքով ասած, Բնությունից մինչեւ Բնություն: Սահմանելի հաստվածներ կան գրքում արեւածագը, առավոտը, տիվանդարը, իրիկունը կամ գիշերը պատկերող, առարկայական աշխարհի՝ ծառերի, խոտերի, թփերի եւ այլնի, զարմանահրաշ նրբերանգային կերպափոխություններով, որոնք ուղղակիորեն առնչվում-հարակցվում են հերոսի հոգեկան ապրումներին, թարգմանում-նկարագրում-բացատրում իր հոգեկան վիճակներն ու ապրումները:

Իր երկրորդ ուղեկիցը երաժշտությունն է: Հին չինացիներն ասում էին՝ եթե ուզում եք մարդուն կրթել, մարդ դաստիարակել, նրան երաժշտություն սովորեցրեք: Երաժշտությունը իր մեջ միավորում է մաթեմատիկական ճշգրտությունը բարձրագույն վերացարկման հետ եւ բնության կատարյալ ներդաշնակության, բնության խորհրդավոր ու գրավիչ բազմաձայնության լավագույն թարգմանիչն է: Իր կարդացած գրականությունը կարծես այդ նույն երաժշտության, ավելի ճիշտ՝ աշխարհի երաժշտական ընկալման եւ երաժշտական մտածողության շարունակությունն է: Մտահայեցողական կենսակերպը, աշխարհի հին փիլիսոփայություններից մինչեւ Հերբերթ Սփենսը եւ մյուսները իրենց մտածողությամբ եւ աշխարհընկալումով միավորվում են աղագա գրողի մեջ՝ դառնալու հետագայում գրողական նրա աշխարհի նախահիմքը:

Իր գրքի առաջին մասը կարելի է ասել գովք եւ փառաբանություն է Մելգոնյան կրթական հաստատության: Կարպիս Սարկավագյանը փաստորեն օրագրել է Մելգոնյան դպրոցի մի շրջանի գեղարվեստական պատմությունը: Եվ առավել հուզիչ է, որ այդ պատմությունը գրողը տասնվեց-տասնյոթամյա սանն է այդ դպրոցի: Իր գրքով Կարպիս Սուրենյանը անհայտությունից եւ մոռացումից տառացիորեն «փրկել է» Մելգոնյան հաստատության մի քանի սերունդների հիշատակը: Եվ, թվում է, նախախնամության ձեռքը կա այս ամենի մեջ. այն ժամանակներում, երբ դպրոցը վաղուց արդեն կորցրել էր իր երբեմնի փառքը, կրթական հոյակապ հաստատության իր ուժն ու կարողությունը եւ հասավ օրը, երբ այդ դպրոցի զանգը հնչեց վերջին անգամ, ընթերցողի սեղանին դրվեց Կարպիս Սուրենյանի գրքի առաջին հատորը իբրեւ գովք եւ ջատագովություն Մելգոնյան դպրոցի. այդ դպրոցը եւ այսու, միշտ դռները բաց, գործելու է այս գրքի էջերում եւ այս գրքի էջերում միշտ ապրելու են եւ՝ դպրոցը իր զույգ շենքերով ու մոտակա անտառով, եւ՝ գիշերապահը «**իր քարիտի լամբ**»-ով, եւ՝ աշակերտները՝ իրենց տարբեր զբաղումներով, եւ՝ ուսուցիչները՝ իրենց գործով ու հոգսերով, եւ՝ Կիլիկյան դիտարանը, եւ՝ Սուրբ Մակարա վանքը, եւ՝ Մխիթարա բլուրը... Ամեն-ամենը, ինչ Կարպիս Սուրենյանի Մելգոնյանն է...

Կարպիս Սուրենյանի «**Օրագիր. 1943-2001**» գրքի այս առաջին մասը, փաստորեն, ինչպես ասում են, «**խորքին մեջ**», նաեւ մանկավարժական վեպ է: Խորհրդահայ գրականությունը ունի խորհրդահայ դպրոցի մասին գրված գործեր, որոնց բոլորին միավորում է մի ընդհանուր բան՝ գաղափարական պարտադրանքից եկող գրական կեղծիքը: Եթե խորհրդային դպրոցը այդքան լավն էր, հապա ո՞ւր են նրա դաստիարակած քաղաքացիները, ուրեմն որտեղի՞ց է գողերի, սրիկաների, ավազակների եւ կողոպտիչների այս ահռելի ու անհաշիվ բազմությունը: Եվ վերջապես դա ի՞նչ դպրոց է, որտեղ մարդը տասը տարի իր մայրենի լեզուն եւ գրականությունն է սովորում, եւ այդ տասը տարուց հետո դեռ մարդ են վարձում շրջանավարտ աշակերտին մի քանի ամսում գոնե կիսագրագետ թելադրություն սովորեցնելու համար: Կարծեմ, խոսքերն ու դատողություններն ավելորդ են:

Կարպիս Սուրենյանը գրել է մանկավարժական վեպ՝ ամենաբարձր իմաստով, այնպես, ինչպես վայել կլիներ լուսավոր ժամանակների լուսավորիչների գրչին: Եթե հանգամանքները այլ կերպ դասավորվեին, ինքը, ինչպես որոշել էր, մեկներ Բրյուսել ուսանելու եւ վերադառնար իբրեւ ուսուցիչ աշխատելու Մելգոնյան դպրոցում, ապա, չգիտեմ, մենք կունենայի՞նք գող Սուրենյան թե չէ, բայց որ իսկապես տաղանդավոր եւ խոշոր մանկավարժ կունենայինք, պարզից էլ պարզ է:

Դպրոցը ավարտելուց հետո Սարկավագյանը մի տարի պաշտոնավարում է Մելգոնյանում, այլեւս «պարոն» է իր երեկվա կրտսեր դասընկերների համար: Բրյուսել գնալը չի հաջողվում, եւ նա վերադառնում է Աթենք, ծնողների մոտ: Մելգոնյանի լուսավոր աշխարհը փոխարինվում է դառն ու տագնապալի իրականությամբ: Ընտանիքի ծանր կյանքը պատերազմի տարիներին, եղբայրը՝ երկու տարի համակենտրոնացման ճամբարում, Բրյուսել գնալու եւ համալսարանական կրթություն ստանալու իղձերի անկատար մնալը, առաջին պաշտոնավարումը «դպրի» աշխարհում եւ առաջին բախումը կյանքի արտաքին երեսի՝ կեղծիքի հետ... Մի կարճ ժամանակ պաշտոնավարում է մի ինչ-որ գրասենյակում՝ բախվելով կյանքի հակասություններին ու ներքին բարդությանը: Հետո ներգաղթի՝ հայրենադարձության հնարավորության լուրը... Սկիզբը ինչպե՞ս եղավ, ինչ ապրումներ ունեցան մարդիկ, սփյուռքը ինչպե՞ս է վերաբերվել Հայաստան գալու մտքին, վերջապես, ինչպե՞ս եկան... Ինչ կատարվեց մարդկանց հոգում. փողոցից փողոց տեղափոխվելը դյուրի՞ն է, որ երկրից երկիր, այն էլ՝ քաղաքական մի համակարգից մի այլ ռեժիմի երկիր գնալը դյուրին լինի... Բայց մարդիկ եկան... Մենք ա՞ս բան գիտենք այս ամենի մասին, մեր գրականությունը արձանագրել-պատկերե՞լ է այս բոլորը: Ինչեւէ: Կարպիս Սարկավագյանի պաշտոնավարելը կարճ է տեւում, որովհետեւ 1946 թվականին «երկրորդ կարավանով» ընտանիքով ներգաղթում է Հայաստան...

▼▼▼

Եթե «Օրագիր» առաջին մասը կարելի էր կոչել նաեւ «Տվայտանքներ ըստ Մելգոնյան դպրոցի», ապա այս երկրորդ մասը, որ նույնպես ինքնին առանձին ու ամբողջական ստեղծագործություն է, կարելի է կոչել «Տառապանքներ ըստ հայրենադարձության»:

Մենք հայրենադարձների առջեւ մեղավոր ենք: Մենք իզուր չասացի. եւ՝ պարզ ժողովուրդը, եւ՝ խորհրդային Հայաստանի իշխանությունները ու խորհրդային ռեժիմը: Մարդկանց տեղահան արեցին, երկրե երկիր բերեցին եւ մատնեցին կատարյալ անտերության: Ոչ միայն իրենք՝ հայրենադարձ հայերը, այնուամենայնիվ չէին պատկերացնում, թե ինչ երկիր էին գալիս, մենք էլ՝ տեղացիներս, չէինք պատկերացնում, թե ովքե՞ր են գալիս, ի՞նչ ճակատագրի, ի՞նչ հոգեբանության եւ նկարագրի տեր մարդիկ են գալիս եւ որտեղից: Անշուշտ, կային մարդիկ, ինչ հոգեբանության եւ նկարագրի տեր մարդիկ են գալիս եւ որտեղից: Անշուշտ, կային մարդիկ, որ շատ լավ գիտեին հայկական սփյուռքի գոյացման պատմությունը, Արեւմտյան Հայաստանի կորուստն ու Հայոց Մեծ եղեռնը: Արեւմտյան Հայաստանից՝ Վանից, Մուշից, Ալաշկերտից, Սասունից, այլ վայրերից հրաշքով փրկվածներ եւ Արեւելյան Հայաստան հասած մարդիկ կային, որոնք այլեւս ապրում էին Հայաստանում: Բայց Արեւմտյան Հայաստանի եւ Եղեռնի մասին խոսելը, համենայն դեպս՝ հրապարակավ, խստիվ արգելված էր, առնվազն հակասովետականություն եւ նացիոնալիզմ պիտի համարվեր: Արեւմտահայ գրականություն գրեթե չէր հրապարակվում, Մեծարենց, Վարուժան, Սիամանթո միայն 50-ական թվականների վերջերին հրատարակվեցին: 1915-ից ի վեր ժամանակներ էին անցել, սերունդներ էին փոխվել, հիմա 1946 թվականն էր: Եվ Հայաստանի մարդիկ, համենայն դեպս՝ քաղաքային բնակչության մի զգալի մասը, հոգեբանորեն եւ գիտակցականորեն պատրաստ չէր ճիշտ ընկալելու եւ արժանավայել վերաբերվելու հայրենադարձությանն ու հայրենադարձներին: Մյուս կողմից՝ պատերազմը նոր էր ավարտվել, տեղացիները ապրում էին մեծ կորուստների եւ մեծ թշվառության մեջ, գյուղերում մարդիկ ուղղակի ծայրահեղ չքավոր էին: Լեռնային գյուղերում մարդիկ ուղղակի սովի էին մատնված, երեխաները պարզապես սովամահ էին լինում: Եվ ահա գալիս են հայրենադարձները՝ Հայաստանի մարդկանց հագուկապից տարբերվող իրենց ինչ թե շատ ճաշակավոր հագուկապով, իրենց կենցաղով, նիստուկացով, սովորություններով, այլ երկրից բերած հոգեբանությամբ եւ մարդկային հարաբերություններով... Բնական է, որ հակասություններ պիտի լինեին: Հակասությունը՝ հակասություն, բայց չինովնիկների ու երբեմն նույնիսկ պարզ մարդկանց վերաբերմունքը այս մարդկանց կյանքը հաճախ վերածում էր մղձավանջի:

Մեր գրականությունը պարտք ունի հայրենադարձության առաջ: Հայրենադարձության մասին գրքեր գրվեցին, բայց գրվեցին խորհրդային ռեժիմի եւ գաղափարախոսության տեսանկյունից: Իրական կյանքի ճշմարտությունը այդպես էլ չերեւաց այդ տխուր հորինվածքների էջերում: Այո, հայրենադարձները եւ՝ շաբաթներով անձրեւների տակ մնացին, եւ՝ ախոռներում պատսպարվեցին, եւ՝ անսիրտ ու անհոգի վերաբերմունք տեսան: Եղան մարդիկ, որ չդիմացան մղձավանջին եւ ինքնասպանությամբ վերջ տվին իրենց կյանքին, ինչպես օրինակ, տաղանդավոր նկարիչ Պետրոս Կոնտրաջյանը: Շատերը հոգեկան ծանրագույն ապրումներ ունեցան եւ նույնիսկ հոգեբուժարան ընկան: Սարկավագյանը գրում է խորհրդային չինովնիկների դաժան, անհոգի ու անմարդկային վերաբերմունքի մասին: Միայն թե, ըստ իս, Սարկավագյանը մի փոքր սխալվում է՝ կարծելով,- առաջին տարիներին դա բնական է ու հասկանալի,- թե միայն հայրենադարձներին են այդպես վերաբերվում: Բանն այն է, որ սովետական եւ մանավանդ սովետահայ չինովնիկի, պաշտոնյայի համար ոչ մի տարբերություն չկար ու չի եղել, իր համար մեկ էր, թե ով կընկնի ձեռքը՝ հայրենադարձը, թե՞ տեղացին: Ավելի տարափելի գիշատիչ, ավելի ահավոր ու ոժգալի արարած, ավելի անմարդկային կենդանի, քան սովետական չինովնիկը, բնությունը դեռ չի ստեղծել: Սա ես չեմ ասում, սա ասում է մեծատաղանդ Վասիլի Շուկշինը: Եվ այդ չինովնիկը կա այսօր էլ, նույնությամբ եւ նույն կերպարով ու նկարագրով եւ, թվում է, տեւելու է այլեւս անվերջորեն:

Հայաստանում փորձությունները շատ-շատ էին ու երբեմն անսպասելի: Նախ, աշխատանքի Ակադեմիայի տնտեսագիտական մասնաճյուղում, հատուկ հարցաթերթիկ եւ հատուկ բաժին, բայց եւ կյանքում առաջին հոնորարը՝ խարտեզագրության համար: Երեւանի Սեւ շուկան իբրեւ մի անհասկանալի եւ անիմանալի վայր, եւ Օղերայի բակում, Նիկողոս Թահմիզյանի հետ միասին, առաջին հանդիպումը, առաջին բախումը ոչսախոս հայ քաղքենիության հետ... «Մոխրագույն կոստյումով» ոչսախոս հայը հայրենադարձ երիտասարդներին ուղղակի սպառնում է՝ «Սիբիր ախորել կը տամ ձեզ, սրիկաներ...»: Ախորը դեռ հեռու է, 1949-ի հունիսի 14-ի օրը դեռ չի հասել, բայց տագնապն ու վտանգը կան, օդի մեջ են, կյանքի եւ իրականության մեջ են, եւ սպառնալիքը, ախորից առաջ, ի վերջո, բարձրաձայն հնչում է...

Անշուշտ, լավ բաներ էլ կային Հայաստանում, եւ շատ լավ բաներ: Հողամաս են տալիս Կոզեռնի տարածքում՝ սեփական տուն կառուցելու համար, պետությունը վարկ է տալիս, թեեւ ոչ այնքան, որքան անհրաժեշտ էր մի պարզ տուն կառուցելու համար: Շատ հուզիչ է այս տան կառուցման պատմությունը: Առհասարակ, շատ հուզիչ բան է, երբ հայը տուն է կառուցում: Մեր գյուղում, երբեմն տեսնում եմ, մի նորաստեղծ ընտանիք տուն է կառուցում իր ձեռքերով՝ երիտասարդ ամուսինը պատն է շարում, երիտասարդ կինը՝ դեռատի մի արարած, օգնում է նրան՝ ջուր, ցեխ է հասցնում, մեկ-երկու մանր երեխա դես ու դեն են վազվզում, ոտքի տակ են ընկնում: Դա ամենամեծ երջանկությունն է: Այդ տուն կառուցողն է երկիր պահողը: Եվ նա պետք է լինի իր երկրի լիիրավ տերն ու քաղաքացին եւ ոչ թե ճորտն ու սրուկը:

Այս բոլորը գրքի առաջին մասի մեջ են, առաջին մասի ավարտն են կազմում, թեեւ կարծում եմ՝ ճիշտ կլիներ, որ երկրորդ մասում լիներն, կամ, ավելի ճիշտ, լիներն իբրեւ միջերգանք՝ երկրորդ մասին անցնելու համար:

Հայաստանյան իր կյանքի կարեւորագույն իրադարձությունը, անշուշտ, 1947-ին Հայաստանի պետական երգչախմբի երգիչ դառնալն է: Սարկավագյանի համար սկսվում է նոր կյանք եւ նոր իրականություն: Այս աշխատանքը նրան հնարավորություն է տալիս մշտապես լինելու երաժշտության մեջ, երաժշտության աշխարհում ու նաեւ՝ շրջագայելու Հայաստանով մեկ, տեսնելու եւ ճանաչելու Հայաստանը:

Խորհրդային իրականության տառապանքներն ու տվայտանքները, ընտանիքին բաժին ընկած փորձությունները բերում են կյանքի խոր ճանաչողության: Ճշմարտությունը բացվում է սեւ վիհի պես, բայց ելք կամ վերադարձ չկա:

Տես էջ 6

Մամանակություն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Լուծարված «Սեւանի սառցակոմբինատ» ՓԲԸ-ի լուծարումից հետո մնացած շարժական գույքը

N	Գույքի տեսականունը	Քանակը (հատ)	Գնահ. արժեքը /դրամ/	Նուազ. ընդ-թացքում վերջին աճուրդի մեկ. գինը /դրամ/	23.07.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	07.08.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	22.08.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	06.09.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	24.09.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	09.10.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	24.10.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	08.11.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/
1	Հրեջ կայան	1	6800	1700	724							
2	էլ. վահանակ	1	9040	2260	963							
3	Կառաց կցող սարք	1	10150	2538	1081							
4	Մեխանիկական ածուռնիչ	1	11340	2835	1207							
5	Գազի անալիզատոր ՈՒԳ-2	1	7110	1778	758							
6	Հուղանջատիչ ՕՄՄ-100	1	8300	2075	883							
7	Հուղանջատիչ ՕՄՄ-101	4	2080	520	224							
8	Սնոնիակային պոմպ 3Տ4Ա2Գ	4	19700	4925	2096							
9	Սարեպոում «Սնուր»	1	54390	13598	5783							
10	Վահանակ 100x600x500	3	17880	4470	1904							
11	Օդածիր սարք (վինտիլյատոր)	1	18040	4510	1920							
12	Տրի պոմպ К20 302	2	2480	620	266							
13	Դուռակոչային սարք	1	8330	2083	887							
14	էլ. կալորիֆեր	3	6630	1658	707							
15	Կաթնահարիչ	1	10160	2540	1082							
16	Մեսաոյա հարթակ	4	12930	3230	1376							
17	Տասնյակ պանել. վահանակ 1	1	62600	15650	6656							
18	Տասնյակ պանել. վահանակ 2	1	23210	5803	2470							
19	Տասնյակ պանել. վահանակ 3	1	42870	10718	4559							
20	Տասնյակ պանել. վահանակ 4	1	16480	4120	1754							
21	Տասնյակ պանել. վահանակ 5	1	15280	3820	1627							
22	Տասնյակ պանել. վահանակ 6	1	31340	7835	3333							
23	Տասնյակ պանել. վահանակ 5.9	1	7410	1853	790							
24	Կոնդենսատոր վահանակ ԿԿՈՒ-0.38	2	16850	4213	1793							
25	Օդաէրիչ Տ-4708	3	7400	1850	788							
26	Տրանսֆորմատոր /դոյլեր/	2	33220	8305	3532							
27	Եռակի պանել վահանակ 8	1	18260	4565	1944							
28	Քառակի պանել վահանակ 8	1	30260	7565	3218							
29	Մեկ պանելային վահանակ 7	1	12410	3103	1321							
30	Սառ հասաց 3136-41	1	55360	13840	5886							
31	Ռոբոտոն	1	15790	3948	1681							
32	Մեսաոյա բաք	2	20760	5190	2209							
33	Սառնարանային խցի դուռ	1	36740	9185	3907							
34	Սեյֆ К/С	1	8300	2075	883							
35	Գրաֆիթնա «Ռոբոտոն»	1	15812	3953	1683							
36	Մեսաոյա բաք	1	20760	5190	2209							
37	Մեսաոյա բաք	1	20760	5190	2209							
38	Գրասեղան 2 տուփա	1	3970	993	423							
39	էլ. հաշվիչ	7	15350	3838	1634							
40	Առաջ. անոթ 60լ/հ	3	34838	-	18517	16666	15000	13500	12150	10935	9842	8858
41	Խոհանոցային գլխ LSU	1	48710	-	25888	23300	20970	18873	16986	15288	13760	12384
42	էլ. զոդող սարք	1	19650	-	10445	9401	8461	7615	6854	6169	5553	4998
43	էլ. սպիկ ՊԷ - 2Մ	1	8300	-	4412	3971	3574	3217	2896	2607	2347	2113
44	Կոմպրեսոր «ՊՄԳ-1» կոմպլեկտ	1	14640	-	7783	7005	6305	5675	5108	4598	4139	3726
45	Սնջաթիլ ՊՆ-46-02	2	3236	1618	690	621	559	504	454	409	369	333
46	Սնջաթիլ Դ22սՀ-13	32	3040	1520	648	584	526	474	427	385	347	313
47	Սնջաթիլ 4С-01	15	4155	2078	885	797	718	647	583	525	473	426
48	Սնջաթիլ դատչ ֆ. 16	15	2220	1110	474	427	385	347	313	282	254	229
49	Տրանսֆորմատոր յուղ ԳԱԶ-52	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
50	Պլաստինկա 16/5	10	100	50	23	21	19	18	17	16	15	14
51	Պլաստինկա Բ-90-01-50	73	2117	1059	453	408	368	332	299	270	243	219
52	Առանցկակալ 267	2	192	96	43	39	36	33	30	27	25	23
53	Առանցկակալ 75-0867	7	91	46	21	19	18	17	16	15	14	13
54	Առանցկակալ 204	19	3800	1900	810	729	657	592	533	480	432	389
55	Առանցկակալ 304	5	1000	5000	2127	1915	1724	1552	1397	1258	1133	1020
56	Առանցկակալ80-20	1	200	100	45	41	37	34	31	28	26	24
57	Առանցկակալ 30-309	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
58	Առանցկակալ 180-60	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
59	Առանցկակալ 22-08	2	96	48	23	21	19	18	17	16	15	14
60	Առանցկակալ 75-07	1	200	100	45	41	37	34	31	28	26	24
61	Առանցկակալ 16-07	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
62	Առանցկակալ 54-25	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
63	Առանցկակալ 206	13	91	46	21	19	18	17	16	15	14	13
64	Փական Ֆ-15	5	1385	693	297	268	242	218	197	178	161	145
65	Փական Ֆ-15	8	2040	1020	436	393	354	319	288	260	234	211
66	Փական միաց. սարք Ֆ-50	10	5500	2750	1170	1053	948	854	769	693	624	562
67	Փական 40	8	2008	1004	429	387	349	315	284	256	231	208
68	Փական 32	4	1568	784	336	303	273	246	222	200	180	162
69	Փական 100	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
70	Փական 15	8	736	368	159	144	130	117	106	96	87	79
71	Փական 20	10	2120	1060	453	408	368	332	299	270	243	219
72	Առանցակալ	9	2313	1157	494	445	401	361	325	293	264	238
73	Կախել	15	1380	690	296	267	241	217	196	177	160	144
74	Կիսասոնի	16	3616	1808	770	693	624	562	506	456	411	370
75	Սնվ. դող. սարք էլ. - 103	4	1568	784	336	303	273	246	222	200	180	162
76	Սնիվ էլ. -103-500x160-375	12	3612	1806	770	693	624	562	506	456	411	370
77	Սնիվ 400x125x240	2	3888	1944	828	746	672	605	545	491	442	398
78	Դուխացուցիչ М-35-75	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
79	Միաց կոմոդրես. հատար	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
80	Սնջաթիլ Դ220А-13	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
81	Սնջաթիլ Դ220А-13-0.5	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
82	Ռեստոր/զտիչակ	5	1660	830	356	321	289	261	235	212	191	172
83	Փական ՌՈՒ-65	4	1568	784	336	303	273	246	222	200	180	162
84	Փական ՌՈՒ-100	3	111	56	25	23	21	19	18	17	16	15
85	Փական ՌՈՒ-25	44	2596	1298	554	499	450	405	365	329	297	268
86	Փական ՌՈՒ-150	2	278	139	61	55	50	45	41	37	34	31
87	Փական ՌՈՒ-40	8	2496	1248	533	480	432	389	351	316	285	257
88	Փական ՌՈՒ-32	12	192	96	43	39	36	33	30	27	25	23
89	Փական Ֆ-80	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
90	Փական Ֆ-100	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
91	Ներսադրած փական x25	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
92	Ներսադրած փական 100	1	1050	525	225	203	183	165	149	135	122	110
93	Ներսադրած փական 40	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
94	Ներսադրած փական 50	1	550	275	119	108	98	89	81	73	66	60
95	Ավտոմատ փական ВС200	18	3420	1710	729	657	592	533	480	432	389	351
96	Միացի բլոկ ԱՈՒ-200	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
97	Միաց	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
98	Տրի պոմպի աբխ. անիվ	4	188	94	42	38	35	32	29	27	25	23
99	Սնոնիակային պոմպ	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
100	Ռեստի հարթացուց.	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
101	Փականի միացման սարք Ֆ-150	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
102	Սարեպոում ТТМ-4А	1	1478	739	316	285	257	232	209	189	171	154
103	Ներքնակ. վերելակի հատար, փոքր	31	1302	651	279	252	227	205	185	167	151	136
104	Ներքնակ. վերելակի հատար, մեծ	31	1488	744	318	287	259	234	211	190	171	154
105	էլ.ջարմիչ	2	464	232	101	91	82	74	67	61	55	50
106	Առանցակալ	4	4800	2400	1022	920	828	746	672	605	545	491
107	Փական Ֆ-50	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
108	Փական Ֆ-25	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
109	Փական	5	35	18	9	9	9	9	9	9	9	9
110	Առանցակալ	13	2483	1242	530	477	430	387	349	315	284	256
111	Փական Ֆ-20	4	368	184	81	73	66	60	54	49	45	41
112	Փական Ֆ-15	4	368	184	81	73	66	60	54	49	45	41
113	Փական Ֆ-100	4	12000	6000	2552	2297	2068	1862	1676	1509	1359	1224
114	Փական Ֆ-25	2	130	65	30	27	25	23	21	19	18	17

→

Սանմասնորեցում

115	Փական Ֆ-65	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
116	Փական Ֆ-100	2	6000	3000	1277	1150	1035	932	839	756	681	613
117	Ավտոմաս սարք	17	2040	1020	436	393	354	319	288	260	234	211
118	Հրեջ ոմնոցակ	44	1364	682	292	263	237	214	193	174	157	142
119	Հրեջ սարք	9	2034	1017	434	391	352	317	286	258	233	210
120	Կոմպրես. դռան փական	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
121	Ցեռնաչափ ՑՀԿՄ	5	1475	738	315	284	256	231	208	188	170	153
122	Էլ. ջեռնաչափ ԷԿՄ24-ՈՒ	4	1480	740	316	285	257	232	209	189	171	154
123	Էլ. ջեռնաչափ Ց316ՐՀ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
124	Ցեռնաչափ Մթ 3Ա-ՈՒ	19	2318	1159	495	446	402	362	326	294	265	239
125	Ցեռնաչափ Մթ 3Ա	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
126	Լոգոմետր Ա-64	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
127	Դռան ծգան	8	184	92	41	37	34	31	28	26	24	22
128	Դռան բռնակ	5	460	230	99	90	81	73	66	60	54	49
129	Լամպ ԱԲ-40	376	2256	1128	482	434	391	352	317	286	258	233
130	Բարձրախոս	1	277	139	60	54	49	45	41	37	34	31
131	Ցոպաչափ հրեջ	54	4968	2484	1058	953	858	773	696	627	565	509
132	Վերելակ անկ երկաթ	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
133	Անջատիչ	5	460	230	99	90	81	73	66	60	54	49
134	Վառոդակ էլ. ՊՍ-30	64	5888	2944	1254	1129	1017	916	825	743	669	603
135	Բռնակ դռան /կամոլ/	3	276	138	60	54	49	45	41	37	34	31
136	Կոակվատիչ	4	188	94	42	38	35	32	29	27	25	23
137	Կատրեռն	10	1750	875	373	336	303	273	246	222	200	180
138	Փականներ PUQ150x250	18	3168	1584	675	608	548	494	445	401	361	325
139	Փական արտածմ.	4	368	184	81	73	66	60	54	49	45	41
140	Կախովի կողպեք	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
141	Էլ. զանգ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
142	Անջատիչ	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
143	Կախովի կողպեք	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
144	Շտամպ	4	92	46	22	20	18	17	16	15	14	13
145	Ֆաներա	5	85	43	20	18	17	16	15	14	13	12
146	Վահանակ	8	1664	832	356	321	289	261	235	212	191	172
147	Խողովակ 255	54	1404	702	300	270	243	219	198	179	162	146
148	Հակագազի սարք	5	750	375	162	146	132	119	108	98	89	81
149	Մեսաղյա ցանկ	15	2205	1103	470	423	381	343	309	279	252	227
150	Շվիլերի ոլոր /զգաստվկա տարբեր չափսի/	100	7400	3700	1575	1418	1277	1150	1035	932	839	756
	Առագաստ առարկաներ											
151	Սան. պայուսակ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
152	Պաստոյան գլխարկ.	5	900	450	193	174	157	142	128	116	105	95
153	Սուրճ	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
154	Ռեցինի գոտի	23	1104	552	237	214	193	174	157	142	128	116
155	Աղբարկղ ծալիր	7	280	140	61	55	50	45	41	37	34	31
156	Հակագազ	97	14550	7275	3095	2786	2508	2258	2033	1830	1647	1483
157	Բաղարան	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
158	Սուրճ	2	400	200	87	79	72	65	59	54	49	45
159	Բանալիների հավաքածու	1	1100	550	235	212	191	172	155	140	126	114
160	Սեղան մեկ տումբանի	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
161	Երկաթե պահարան	1	5000	2500	1064	958	863	777	700	630	567	511
162	Երկաթ. սեյֆ	1	20000	10000	4253	3828	3446	3102	2792	2513	2262	2036
163	Աթոռ	1	94	47	22	20	18	17	16	15	14	13
164	Սեղան երկու տումբանի	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
165	Սեղան մեկ տումբանի	3	6000	3000	1277	1150	1035	932	839	756	681	613
166	Աթոռ	3	234	117	52	47	43	39	36	33	30	27
167	Հաշվիչ/միայնից/	5	90	45	21	19	18	17	16	15	14	13
168	Աթոռ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
169	Հաշվիչ/միայնից/	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
170	Երկաթյա բաք 2.5խ.մ	1	277	139	61	55	50	45	41	37	34	31
171	Մեսաղյա դազգահ	1	277	139	61	55	50	45	41	37	34	31
172	Երկաթյա պահարան 54Պ	1	2125	1063	454	409	369	333	300	270	243	219
173	Աղբարկղ	2	94	47	22	20	18	17	16	15	14	13
174	Կախիչ	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
175	Վառոդույրի կախիչ	15	645	323	139	126	114	103	93	84	76	69
176	Մեսաղյա դազգահ	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
177	Երկաթյա սեյֆ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
178	Երկաթյա պահարան	12	60000	30000	12756	11481	10333	9300	8370	7533	6780	6102
179	Վաննա	2	370	185	81	73	66	60	54	49	45	41
180	Երկաթյա դազգահ	1	370	185	81	73	66	60	54	49	45	41
181	Գրի պահարան	1	3000	1500	639	576	519	468	422	380	342	308
182	Աթոռ	3	183	92	41	37	34	31	28	26	24	22
183	Երկաթյա պահարան	1	5000	2500	1064	958	863	777	700	630	567	511
184	Հեռախոս	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
185	Կախիչ	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
186	Բազկաթոռ	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
187	Հաշվիչ/միայնից/	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
188	Աղբարկղ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
189	Կոմուտատոր	1	4158	2079	886	798	719	648	584	526	474	427
190	Վառոդույրի կախիչ	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
191	Սեղանի երկու տումբ.	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
192	Տումբոչկա	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
193	Կախիչ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
194	Տումբոչկա	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
195	Աթոռ	4	8000	4000	1701	1531	1378	1241	1117	1006	906	816
196	Տրի կոլբա		462	231	100	90	81	73	66	60	54	49
197	Սեղան լաբերատոր		277	139	61	55	50	45	41	37	34	31
198	Կշեռք տեխ.	1	277	139	61	55	50	45	41	37	34	31
199	Հակագազ	1	554	277	119	108	98	89	81	73	66	60
200	Սեղանի երկու տումբ.	1	185	93	41	37	34	31	28	26	24	22
201	Գրադարան	1	739	370	160	144	130	117	106	96	87	79
202	Հաշվիչ/միայնից/	2	184	92	41	37	34	31	28	26	24	22
203	Բաք երկաթյա	1	554	277	119	108	98	89	81	73	66	60
204	Մեսաղյա դազգահ	1	463	232	101	91	82	74	67	61	55	50
205	Էլ. սահագուցիչ/կայուտիֆել/	1	8291	4146	1765	1589	1431	1288	1160	1044	940	846
206	Պոմպ c798	1	647	324	139	126	114	103	93	84	76	69
207	Հակագազ Բ-2	3	93	47	22	20	18	17	16	15	14	13
208	Սառնարան. սարք	1	2038	1019	435	392	353	318	287	259	234	211
209	Երկաթյա տնակ	1	92	46	22	20	18	17	16	15	14	13
210	Հակագազ	8	464	232	101	91	82	74	67	61	55	50
211	Պոմպ 45/30	1	739	370	160	144	130	117	106	96	87	79
212	Խոհանոց. գլոб ՊԱ-5	1	5359	2680	1142	1028	926	834	751	676	609	549
213	Էլ. սահագուցիչ	1	1386	693	297	268	242	218	197	178	161	145
214	Էլ. սահագուցիչ	1	610	305	132	119	108	98	89	81	73	66
215	Սեղան նեղաչ.	2	554	277	119	108	98	89	81	73	66	60
216	Յուղի պոմպ Բ-110	2	464	232	101	91	82	74	67	61	55	50
217	Տրի պոմպ	4	280	140	61	55	50	45	41	37	34	31
218	Տնակի ծածկոց	1	370	185	81	73	66	60	54	49	45	41

Աճուրդները կանցկացվեն դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:00-ին «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երևան,Դ.Անհաղթի 23 /4-դ հարկ):

Աճուրդով չվաճառված գույքի թեկնածուական գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 10 տոկոսի չափով: Տվյալ լոտի աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը չի անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար ծրագրեն աճուրդն նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երևան, Դ.Անհաղթի 23 /4-դ հարկ) ներկայացրել

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը՝ առաջին աճուրդի մասնակցության վճարի չափն է՝ 20 դրամ, ծուխագրման հաշիվն է՝ թիվ 1 ազգային գանձարանական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025 հաշիվը (յուրաքանչյուր հաջորդ աճուրդի համար աճուրդի նախավճարը հաշվարկվում է տվյալ աճուրդի մեկնարկային գների միջին թվաբանականի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան նվազագույն մեկնարկային գին ունեցող գույքի մեկնարկային գնի 50 տոկոսը),
- իրավաբանական անձինք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է 5000 դրամ,աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդների) տոմսի գինն է 3000 դրամ:

Մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը: Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տպիս է իր հանձնառությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին: Յուրաքանչյուր գնորդ կարող է գույքի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով: Աճուրդավարը աճուրդը շարունակում է այնքան ժամանակ քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ թեկնածու: Գույքի առավելագույն արժեքն առաջարկած թեկնածուն, աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո, համարվում է աճուրդի հաղթող եւ պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսն ու վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար եւ ստորագրել աճուրդի մասին արձանագրությունը: Վերը նշված պարտավորությունները չկատարելու դեպքում նրա մուտքած մասնակցության վճարը չի վերադարձվում եւ նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից եւ դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

Աճուրդի մասին արձանագրությունը ստորագրելուց հետո, որպես աճուրդում հաղթող ճանաչված մասնակից, նրան տրվում է վճարման հանձնարարագիր՝ ծնացած վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում՝ 10 օրվա ընթացքում վճարելու համար: Սահմանված ժամկետում նշված վճարումը չկատարելու դեպքում իր կողմից վճարած մասնակցության վճարը եւ իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով գումարը հետ չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:

Գույքին ծանոթանալու համար զանգահարել (261) 2-72-20 հեռախոսահամարով: Գույքի գտնվելու վայրը՝ ք.Սեւան, Գագարինական:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

Լրացուցիչ տեղեկությունների համար (յուրաքանչյուր աճուրդի նախավճարի չափի մասին) կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունն, զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխությունների ու լրացումների մասին տեղեկատվությունը կհրապարակվի այն մասով, ինչպես կատարվել է աճուրդների մասին սույն հրապարակային ծանուցումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ԿՈՐԵԼ Է

«Քաղաքաշինություն» ՊՁ-ի պետռեգիստրի թիվ 027746 վկայականը (գրանցման համարը 286.140.02331) գրանցված 06.08.1996 թ.: Համարել անվավեր:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Գիրք եւ ժամանակ

Դ էջից

Մարդիկ իրենց զգում են ինչպես թակարդում: Բայց թակարդը միշ է, վրա է հասնում 1949-ի հունիսի 14-ի օրը՝ հայասանյան ամսոի դժնդակ օրը: Մեր գրականությանը նայեմ՝ չի էլ եղել, այդ ամսոը չի՛ եղել: Մեր մարդասիրական գրականությունն ինչ է գրել 1937-ի ողբերգության մասին, ինչպե՞ս է պատկերել հայոց երկրորդ Մեծ եղեռնը... Մկրտիչ Արմենի «Պատվիրեցին հանձնել ձեզ» պատմվածաշարը, մասամբ՝ «Ժիրայր Գլենց» վեպը, Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարերը», «Գիշեր» անգոյգ պատմվածքը, «Սեւ մարդը» եւ մի քանի այլ գործեր, Վալտեր Արամյանի ընտիր պատմվածքները... Ուրի՞շ: Ուրիշ չկա: Դուրս է գալիս, որ 1937-ի մասին եւ առհասարակ խորհրդային ռեժիմի բռնատիրական ոճրագործության մասին գրել են միայն բռնադատվածները: Մնացյալ գրողների համար ո՛չ առանց այն էլ թշվառ հայ գյուղացիության ոչնչացումը՝ այսպես կոչված կուլակաթափումն ու կոլխոզացումը, ո՛չ 1937-ը (թեպետեւ խորհրդային կյանքի ամեն տարին յուրովի 1937 էր), ո՛չ 1949-ի ամսոը չեն էլ եղել: Փոխարենը՝ այդ տարիների մասին կեղծ ու խաբեբա գրական հորինվածքներ: Ի՞նչ է, ամեն ինչ այլեւս անդարձ վերջացա՞վ... Մեր մեղքը սա՛ է հայրենադարձության առաջ: Մարդիկ ի՞նչ նվիրումով, ի՞նչ երազներով Հայաստան եկան, այստեղ նրանց լցրին սուլիմինյան վագոնները եւ ֆեցին Սիբիր: Մի՞ մեղքի համար, ո՞ր հանցանքի համար: Իսկ հետո երբ համընդհանուր ներումն հայտարարեցին՝ «հանցակազմ չլինելու պատճառով», ներողություն խնդրեցի՞ն: Մեղավորները խվեցի՞ն իրենց մեղքերը: Հե՞ դիտի հա, Հայաստանի գրողների միություն եւ ժողովրդի անունից ամբիոններից ստրածմլիկ ու վերամբարձ ճառեր ասող եւ տրավորիչ հեծկլտացող մրցանակակիր եւ ոչ մրցանակակիր պանծալի գրողներ...

Գրողական ձիրքն ու խոսքը պարզ խոտի նման ամեն տեղից ելք են փնտրում, խոտի նման կարող են ճեղքել քարն ու աղաղաժը: Եվ Սարկավագյանի մեջ արթնանում է գրողը: Գիշերները, առայժմ միայն իր համար, վեպ է գրում՝ «Նաեւ այստեղ եւ այսօր»: Հետո մի ուրիշ վեպ՝ «Դոն Ախպար» խորագրով: Բայց Նեռի ժամանակներ էին, հսկող անքուն եւ արթուն աչքեր կային, մտքանդ մտածող եւ բարձրաձայն չասող անգիր գիտեին, էլ ո՞ր մնաց թե՝ վեպ... Իսկ որ կասկածելի բառ ու նախադասություն գտնեն... Ֆինբաժնի տեսուչն էլ անվերջ գնում է ու գալիս... Ի՞նչ է ուզում, ի՞նչ է որոնում՝ չգիտես: Եվ, **«Տեր Աստված, շառից, փորձանքից հեռու»**: Եվ կյանքից ու իրականությունից վախեցած ու սարսափահար մարդը իր ձեռքով այրում է իր վեպերը:

Բայց այս ցավոտ վիճակը եւ առհասարակ հայրենադարձության պատմությունը շարունակություն ունի, ինչպես որ գրի էջը՝ երկու երես: Ժամանակ է անցնում, եւ հայրենադարձ հայերը, ֆանատիկ հնարքներ բանեցնելով, ինչպես որ ֆրանսահայերը 60-ականների սկզբին, ելք են որոնում, հնար են գտնում Հայաստանից հեռանալու, եւ հեռանում են: Ժամանակ է անցել, սերունդ է փոխվել: Հեռանում են ոչ միայն հայերը, այլեւ զավակները: Հեռանում են, երբեմն կազմակերպելով նաեւ իրենց հայաստանցի խնամի-կնքահայր-բարեկամների հեռացումը, մարդկանց, որոնք երբեփցե ո՛չ Ամերիկայի երեսն են տեսել, ո՛չ Ֆրանսիայի եւ ո՛չ այլ որեւէ երկրի... Սա նույնպես շատ ցավոտ, նույնիսկ՝ ողբերգական խնդիր է, բայց եւ վերլուծելի եւ բացատրելի իրողություն: Շատ հետաքրքրական կլիներ մի իսկական, ստույգ, ոչ խորհրդային ու կեղծ, վիճակագրություն անել՝ պարզելու համար, թե 1946-ին եւ դրանից հետո ներգաղթած ընտանիքների քանի՞ տոկոսն է հեռացել Հայաստանից: Եվ, մանավանդ, ինչո՞ւ: Մեր գրականությունը այս մասին ոչինչ չի ասում, ոչինչ չի ասում նաեւ ազգային-հանրային միտքը, չկա խորունկ վերլուծությունն ու պատասխանը ցավոտ հարցի: Կարոլիս Սուրենյանը նույնպես այս մասին չի խոսում, թեպետ ասում է, օրինակ, որ սիրելի ընկեր Նիկողոս Թահմիզյանը հիմա Հայաստանում չի ապրում Ինչեւէ:

Տարիներ են անցնում: Նեռը այլեւս չկար: Թվում է՝ ինչ-որ բան այնուամենայնիվ փոխվում է կյանքում: Նորից գրիչ եւ գրականություն: Առաջին տպագիր գործը Հայաստանում, Ավետիք Իսահակյանի դրվատանքը, Ռաֆայել Արամյանի եւ այլոց ընկերական ջերմ քաջալերանքը... Սարկավագյանը այլեւս Սուրենյան է, գրող Կարոլիս Սուրենյան:

Գրքի լավագույն հատվածներից մեկը հորը նվիրված էջերն են: Հայ մարդու այդ տեսակը բացառիկ է՝ մարդկային եւ բարոյական բարձր սկզբունքների հետեւող, հոգեկան առանձնակի մաքրություն ունեցող, գլուխը կախ լուռ աշխատավոր, որ չի սիրում իր ապրումներն ու զգացումները ցուցադրել, բայց ներքուս ոչ մի բանի հանդեպ անտարբեր չէ: Այդպիսին են եղել, որ կարողացել են դիմանալ, ապրել, դիմակայել ամեն տեսակի փորձությունների՝ ապավինելով Բարձրյալի կամքին եւ հայի իրենց ճակատագրին... Հրաշալի գրված էջեր են դրանք, սխանչելի է հայրը՝ ճակատագրին հպատակված, Սեբեհիրից Աթենք, Աթենքից Հայաստան հասած, բազում փորձություններ տեսած հայ պարզ արհեստավորը... Եվ հրաշալի է ինքն էլ, դեռեւս Սարկավագյան, Կարոլիսը՝ իր առաջին տպագիր պատմվածքով հոր դասատուին ու վերաբերմունքին տպատելիս...

Գրքի այս մասն էլ հրաշալի հերոսներ - գործող անձինք ունի՝ հայ ժողովրդական երգի անգերազանցելի վարպետը՝ աղանացի Թաթուլ Ալթունյանը իր մի հատիկ նետած **«օլդու» «փոքրամարմին, չորուկ, վոլտերյան դեմքով, արտաքուստ զվարճախոս, բայց խորքում շատ լուրջ՝ մանավանդ ազգային խնդիրներով մտահոգ»** էդվարդ Խոճիկը, Ռաֆայել Արամյանը՝ **«միշտ էլ դեմքին կա՛մ ոգեւորված, կա՛մ զարմացած կիսաժպտուն արտահայտությամբ էջմիածնեցի Ռաֆոն՝ բարեհոգի, ռոմանտիկ, իմ ճանաչած գրողներից միակ համակրելին»**, Արամ Տեր-Հովհաննիսյանը՝ **«կարճահասակ, ջլուտ, սպիտակահեր, դեմքը թոչնանման, աչքերը լայնադիր, միշտ լուրջ, անժպիտ մարդ էր Արամ Տեր-Հովհաննիսյանը, առօրյայում հեզաբարո թվացող, բայց ներքուստ ջղային, իսկ գործի մեջ, երբ իր ձեռքով փակում էր փորձասենյակի դուռը, ցատկելու նման կանգ-ձասենյակի դուռը, ցատկելու նման կանգ-ձասենյակի դուռը, ցատկելու նման կանգ-

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Գիրք եւ ժամանակ

Ե էջից

Նրանք բոլորն էլ ոչ թե մեղավոր, այլ պարզապես հանցագործ են հայ գրականության եւ մշակույթի առաջ:

Գրողը մտադրվել էր թարգմանելու Դոստոեւսկու հինգ թե վեց մեծ վեպերը (վերաթարգմանելով «Ոճիրն ու պատիժը» եւ «Արյունը»): Սակայն իր այդ մեծ մտահղացումը չէր իրագործվելու: Պատմելով այս մասին, գրողը էջեր է նվիրում թարգմանական աղետսի գործին եւ նրբություններին՝ պարզելով իր մոտեցումներն ու ըմբռնումները: Ինձ թվում է՝ դրանք շատ կարեւոր էջեր են թարգմանության գործի ուսումնասիրության, թարգմանության դժվարին գործին լծվող գրողների ու թարգմանիչների համար: Գրողն ընդունում է Պետհրատի առաջարկը՝ թարգմանելու Ջոն Գոլսուորդիի «Ֆորսայթները»՝ **«վիթխարի վիպաշար, երկու եռագրություն՝ վեց վեպ, չորս միջերգանք վեպերի միջեւ»**: Իսկապես որ տաղանդավոր գրողի ստեղծագործական ամառն է. գրում է **«Արետրդիներ»** հիրավի արեւով լեցուն, լուսավոր գիրքը եւ, մոտ հինգ տարում, թեեւ ընդմիջումներով եւ դադարներով, ավարտում է «Ֆորսայթների» թարգմանությունը: Իսկ տաղանդավոր եւ հսկայածավալ աշխատանք: Ու դեռ պտոյտներ Հայաստանում՝ այսօր Թեղենյաց վանք, վաղը, ավտոբուսով, Արթիկ՝ Լմբատավանք, երրորդ օրը՝ Հայաստանի մի այլ ծայրը՝ Մակարավանք ու Գոշավանք, չորրորդ օրը՝ մի այլ ուղղությամբ... Հայաստանի բնությունն ու հայ կառուցողական ոգին մշտապես թովում են գրողին: Եվ դեռ կամա թե՝ ակամա այլ բնույթի շրջագայություններ, այսօր, ասենք, հնդիկ գրողների, վաղը՝ ֆրանսիացի գրողների, երրորդ օրը՝ հյուսերի մի այլ խմբի հետ (այս պարագային իբրեւ ներկայանալի հայ գրող Կարոիս Սուրենյանը միշտ հիշվում է եւ անփոխարինելի է): Եվ այս բոլորի հետ՝ նաեւ այլ գրություններ, այլ գրական աշխատանքներ, էսսեներ, հոդվածներ...

«Օրագիր. 1943-2001» գրքի երրորդ մասը կարելի է համարել նաեւ ուղեցույց գրական ու գրողական աշխատանքի: Տասնյակ ու տասնյակ էջեր են նվիրված գրական-ստեղծագործական աշխատանքի յուրահատկություններին: Կարոիս Սուրենյանի ամբողջ գիրքը, եւ մասնավորապես այս երրորդ մասը շատ կարեւոր է ստեղծագործական վիճակի եւ ստեղծագործության հոգեբանության ուսումնասիրության համար: Գրողի ներկայացրած պահերն ու հոգեվիճակները, մի կողմից, կապվում են իրականության, առարկայական հանգամանքների եւ իրողությունների հետ, մյուս կողմից՝ բացահայտում են ստեղծագործող անհատի ներաշխարհի յուրահատուկ կողմերը, ստեղծագործական վիճակի եւ ընթացքի առանձնահատկությունները: Այս առումով էլ Կարոիս Սուրենյանի գիրքը մեզանում առանձնացող գիրք է: Ռոմանը նման գրականության ընտիր, գրեթե դասական օրինակներ ունեն՝ Կոնստանտին Պաուստովսկու «Ոսկե վարդը», Յուրի Օլեշայի «Ոչ մի օր առանց տողի» ոչ սովորական վեպը...

Գրողը իր գրքի երրորդ մասը ավարտում է 1979 թվականով: Ինչո՞ւ: Պատճառաբանությունը չգիտեմ: Արդյոք գալիս է իր գրքերի ժամանակը՝ **«Ոգու ամրոցներ», «Երանության կղզին»** եւ այլն, եւ գրողը գլխովին տարված է միայն դրանցով, եւ օրագրային իր գրառումները այս տարիներին զուտ անձնական են... Դժվար է ասել, Կարոիս Սուրենյանը այն գրողը չէ, որ իր գրականության մեջ մնա զուտ անձնականի սահմաններում:

Ըստ ամենայնի, այստեղ դեր է խաղացել ասելիքի ավարտվելը: Գրողը ինչ ցանկացել է ասել՝ ասել է: Մնացյալը պատկանում է դեռեւս գրասեղանի զզոցում մնացող օրագրերի հարյուրավոր էջերին...

▼▼▼

Գրքի չորրորդ մասը կարող էր կոչվել «Տվյալներ ըստ մեր ժամանակի եւ այսօրվա կյանքի»:

Վիթխարաչափ գրքի երեք մասերը ընթերցողի մեջ հարց կարող են առաջացնել՝ անհատը, իր ներաշխարհը, իր գրականությունը, երկրի ռեժիմը՝ լավ, բայց նվազ չէ, արդյո՞ք, գրողի քաղաքացիական վերաբերմունքը զուտ հայկական կյանքի եւ իրականության հանդեպ: Գրքի չորրորդ մասը ասես պատասխանում է այդ տարակուսին, ամբողջությամբ լցված ու շաղախված լինելով հայության եւ հայկականության խնդիրներով:

Վաղուց է ասված, որ հայ լինելը ճակատագիր է, եւ հին հույները գիտեին, որ ասվածներն անգամ չեն կարող խուսափել ճակատագրից:

Գրքի չորրորդ մասի առաջին էջը նա սկսում է 2005 թ. օգոստոսի 21-ով, իր ծննդյան ութսունամյակի օրով, ...որպեսզի մի քանի էջ հետո վերադառնա հայոց նոր թվականության ճակատագրական 1988 թվականը: Զարմանալի, ուղղակի անհավատալի կլիներ, որ Կարոիս Սուրենյանի նման գրողը մի կողմ մնար այն ամենից, ինչ անցավ մեր ժողովրդի գլխով 1988-ից ի վեր: Եվ գրողը դիտմամբ, հատկապես բաց է թողնում 1979-ից հետո եկող տասնամյակի օրագրությունը, որպեսզի դառնա 1988-ից ի վեր մեր հոգսերի, մեր տառապանքների, մեր տվայտանքների, մեր մոլորությունների, մեր հույսերի, մեր հաղթանակների, մեր անպարտելի ոգու եւ մեր ազգի հոգեկան ու ոգեկան ուրույն նկարագրի պատմագիրն ու կենսագիրը:

Իր մանկության աշխարհին, իր ծննդավայրին առժամանակ վերադարձած՝ շրջագայությամբ Աթենքում գտնվող գրողին ցնցում են Հայաստանում կատարվող իրադարձությունները: Եվ նա ամեն ինչ անում է շուտափույթ Հայաստան վերադառնալու համար: Իսկ մեր մեծ աղետի լուրը նրան հասնում է Կիպրոսում, հեռուստացույցի էկրանից՝ «Բիբլիական աղետ Հայաստանում»: Եվ գրողի մեջ արթնանում է մեծ դիմակայությունը՝ Բիբլիական աղետի դիմաց՝ Բիբլիական հույս:

Հայաստանում գրողը մեր ծանր օրերի ու տարիների ժամանակագիրն է, նախկին օրագրություններից շատ բան բնականաբար ետնախորք է մղվել: Եվ իր մանրամասն գրառումների մեջ հառնում է մի ամբողջ ժողովրդի հոգեկան բարձր նկարագիրը՝ մարդ մնալ բոլոր փորձությունների մեջ եւ դրսեւորել ցեղի ներուժն ու ոգեկան բարձր հատկությունները: Եվ իզուր չեն թվում զանազան անցուդարձերի, տարբեր իրադարձությունների մանրամասն նկարագրությունները, առանձին միջադեպերը, մթնշավոր դիպվածները, պատահական թվացող ճանրամասները:

Մեր կյանքի այդ տարիների մասին գրվել է եւ դեռ գրվելու է: Եվ նյութը ոչ ոք չի սպառելու, որովհետեւ անհուն էր ժողովրդի կրած տառապանքը, ժամանակը՝ չար ու ճակատագրական: Բայց մի բան է լրագրողական նկարագրությունն ու թեկուզ վավերական արձանագրությունը, մի այլ բան՝ գրողական վերլուծող եւ ամփոփող, տարալուծող եւ ընդհանրացնող հայացքը: Անշուշտ, ժամանակ պետք է անցնի կամ թե ժամանակը պետք է շտապ-շտապ նստվածք տա, պետք է ասիճանաբար ցրվի իրականության խաբկանքային մշուշը, որպեսզի ամեն ինչ երեւա հստակ ու անառարկելի:

Զարմանալիորեն փոխվում է գրողի խոսքի տոնայնությունը գրքի այս վերջին մասում: Ներքին կիրք կա խոսքի թվացյալ հանդարտության մեջ, հայության հարցերի եւ խնդիրների բուռն ու հախուռն արծարծում, առաջացած տարիքին եւ մանավանդ իր մարդկային ու գրողական նկարագրին անհարիր թվացող սեւեռյալ հետեւողականություն առանձնապես մեր ժողովրդի պատմական ճակատագրի եւ ազգային նկարագրի առանձին խնդիրների հետ կապված:

Բայց այդ ամենը միշտ էլ եղել է իր գրականության մեջ, հետեւաբար նաեւ իր էության ու նկարագրի մեջ, միայն թե չընդգծված ձեւով, իբրեւ սեռջրյա հոսանք, իբրեւ էության ներքին անտրոհելի մաս: Եվ պատահական չէ, որ գրքի այս մասում համեմատաբար քիչ են մարդիկ եւ անունները՝ մեկ-երկու ընկեր եւ բարեկամ, եւ, իհարկե, մտերիմ ընկեր Վաղիմ Մելիխեթյանը, գրական-մշակութային մի քանի հանդիպում եւ... վերջ: Մնացյալը Հայաստանն է՝ իր բախտով ու ճակատագրով, իր պատերազմով ու իր արդար ցասումով, իր առօրյայով եւ ծայրահեղ ծանր կյանքի տարիներով... Եվ այս ամենի խորքից դուրս է լողում-պատկերվում է մի հոյակապ հայրենիք, իր տահմաններն է տարածում մի ազնիվ ու արժանապատիվ հայրենասիրություն, որ խոհական հայ մարդու իսկական էությունն է՝ մարդկայնություն առանց պատրանքների:

Թվում է՝ գրքի չորրորդ մասը իր բովանդակությամբ ու իր արծարծած խնդիրներով շատ հեռու է Մելգոնյան դպրոցի այն Սարկավագյան տղեկի հուզավառ երազներից ու ներաշխարհից: Չէ, ամենեւին էլ այդպես չէ: Թվում է՝ գրողը շատ է հեռացել իր ասած **«հարցերի հարցից»**: Բայց իսկապես, ո՞ւր մնաց **«հարցերի հարցը»**, եւ ո՞րն է պատասխանը **«հարցերի հարցի»**: Մինչեւ պատասխանին հասնելը չեմ կարող գայթակղությունս զսպել եւ չբերել գիրքը եզերող-փակող վերջին էջերից խորհրդանշանակ, իմաստավոր, գեղեցիկ եւ խորունկ մի հատված: Գրողը նորից բնության մեջ է, բնության հետ, հազար թելերով կապված այդ բնությանը եւ մայրամուտի մեջ, թվում է, դուրս է գալիս-գնում է միասնանալու բնությանը, դառնալու նրա այլեւս անտրոհելի, անմահ, անխորտակ, անկործանելի, անկորնչելի մի մասը: **«Արեւը բավական իջել է արդեն, գնամ իմ սիրելի մատենում իրիկնային «լույս զվարթ» բարեւս ասելու: Ահա, իր բարեձեւ կազմվածքի պչրանքով, իր զմրուխտ կանաչի մեջ հայրենավոր հակինթ-հակինթ կլոր փայլում մասուրների կարմիրով ժպտում է նա, ոչ միայն արեւին, ահա ժպտաց ինձ էլ, ճանաչում է իր մտերիմին: Իր եռեւում լեռնադաշտերի այն հեռատանն է՝ իրիկնացած ավելի խոր կապույտ երկնակամարի տակ: Փամբակի լերկ լեռնաշղթան ձախին, ցերեկվան արեւի տակ միշտ դեղնավուն, իրիկնային նուրբ մանուշակագույնի երանգն է հագել իր դեղինի վրա, սպվերոտած ձորերն ասես ի հայտ են եկել վերից վար մուգ կապույտ պատմուճանված, ու ամբողջ լեռնաշղթան կարծես քանդակայնացել է: Սարոնին ահա այն ամենամեծ գյուղն է Դդմաշենը, 7-դ դարի տաճարը ծոցում, մի քանի պատուհան, գյուղում, վերջալույսի դիմաց փայլփլում են ոսկի աստղերի նման: Ինչ լռություն, խաղաղություն ամեն կողմ, կովի բառաչներ միայն լսվում են ներքեւից՝ ծաղկաձորից:**

Այստեղ արդեն, ահա, արեւն իջավ Թեղենիսի ետեւ, մատենին մարեց իր հակինթների փայլը, իրիկնային հովից մեղմ թրթռաց: Իսկ լեռնադաշտերի ամբողջ խաղաղ հեռատանը դեռ լուսավոր է այնտեղ՝ մայրամուտի արեւից թունդ ծիրանագույն դարձած: Մայրամուտի՞ արեւ: Դա էլ իր խորհուրդն ունի, հայրիկ, ինչպես արշալույսի արեւը, որի խորհուրդն էիր ցույց տալիս ինձ մանկությանս: Քիչ հետո մութն է իջնելու այս խաղաղության վրա, բայց վաղը կրկին ծագելու է արեւը...»:



Այո, **«քիչ հետո մութն է իջնելու այս խաղաղության վրա, բայց վաղը կրկին ծագելու է արեւը»**, այո, վաղը նոր օր է բացվելու եւ, այո, վաղը կրկին ծագելու է արեւը...

Եվ ո՞ւր մնաց **«հարցերի հարցը»** եւ գրողի պատասխանը այդ մեծ հարցին: Հինգ թե վեց տարեկան երեխայի սրտի հմայված զարմանքի ժամը իր առաջին, մեծ, իսկական Արեւածագին, այդ Արեւածագի արթնցրած ուրախությունը՝ արդելու հրճվանքը, կյանքի հեքիաթը, մարդու ներքին գեղեցկությունը, որ կարող է տեւեւտեւում է,- իր ողջ կյանքի ընթացքում մինչեւ իր մայրամուտի արեւը, որն էլ իր խորհուրդն ունի...

Եվ ահա պատասխանը «հարցերի հարցի»՝

«Եվ ուրախության այդ ներքին ժամը մաքուր, պայծառ մնաց սրտիս մեջ իմ ամբողջ կյանքում, որքան էլ այդ հարցերը սպվերում էին հոգիս: Մաքուր այն ուրախությունը, թեկուզ խավարի մեջ մի շողն իսկ, որով լուսահայտվում է կյանքի, ապրելու նախնական բուն ճշմարտությունը՝ անհունորեն թանկագին: Որով մարդը ի բնե օժտվում է գոյության գալով այս աշխարհում, որքան էլ առեղծվածային լինի թե՛ աշխարհը, թե՛ իր գոյությունը դրա մեջ: Ու իրիկնային ժամին, մի փիչ թախծերանգ ուրախության ժամին սիրտս ջերմացած, իմ սարահարթից ահա իջնում եմ զվարթ ընթրիքի եւ զրույցի՝ մարդկանց հետ, մարդկանց կարոտ, իմ ազգակից թե օտարազգի, այստեղ, այս ստեղծագործական տանը, իմ ծաղկաձորում: Կյանք է: Ուր էլ լինի, ինչպես էլ որ է՝

ՃԻՇՏԸ ԿՅԱՆՔՆ Է...»:

Պատասխանը մի կյանք է, հարուստ, ճիշտ եւ հոգեւին ապրված, ստեղծագործությամբ եւ ներքին գեղեցկությամբ, առօրյա կյանքի հեքիաթային գեղեցկությամբ եւ մերձավորների սիրով լեցուն մի կյանք... Այստեղ ամեն ինչ հասնում է իր լումին, եւ շրջանը փակվում է՝ ճիշտը կյանքն է եւ միակ ճիշտը կյանքն է...

Աշխարհաճանաչ գրող, գիտնական, փիլիսոփա, մտածող, սովետական ռեժիմի ամբողջ ճանրությունը կրած եւ վտարանդի դարձած, ապա երկու տասնամյակ անց Ռուսական վերադարձած Ալեքսանդր Զինովեւը 2005 թվականին «Լիտերատուրնայա գազետա»-ին տված մի հարցազրույցում նշանակալի խոսքեր է ասել. «Ամեն ինչ է եղել՝ մղձավանջային նյութական պայմաններ, ձերբակալություններ, պատերազմի բերած ծանրագույն կյանք: Եվ միեւնույն է՝ իմ այդ ժամանակվա ծանր կյանքը ես չէի փոխի ոչ մի այլ կյանքի հետ»:

Ցեմ կարծում, թե Կարոիս Սուրենյանը ուզենար երբեւիցե իր ապրած կյանքը փոխել մեկ ուրիշ կյանքի հետ: Այս հոյակապ գիրքը այդ է վկայում ու հաստատում:

▼▼▼

Կարոիս Սուրենյանի **«Օրագիր. 1943-2001»** գիրքը Ոգու կայացման պատմություն է, մի Հայ մարդու պատմություն, Աստծո եւ Բնության հանդեպ մարդ արարածի՝ իմացական սիրո հատած մարդու պատմություն: Գրքի առաջին իսկ էջերից ասիճանաբար ուրվագծվում է զգացական ու իմացական նուրբ ու խոր անհատի նկարագիրը, որն իր մեջ ունի ինչպես իր ցեղի, ազգի, այնպես էլ համընդհանուր-մարդկային գծերը: Այդ անհատը երկար, երկար մի ճանապարհ է անցնում, եւ այդ ճանապարհը մեր ժողովրդի մի հատվածի ճանապարհն է, նրա բախտն ու ճակատագիրը:

Գրքի հերոսը իր կյանքի ճանապարհին երկու ուղեկից ունի՝ Գիրքը եւ Երաժշտությունը: Երկու թեմա, երգության երկու դրսեւորում անցնում են գրքի առաջին էջերից մինչեւ վերջին էջը՝ Միտքը եւ Սիրտը, Մտածումը եւ Զգացումը, Գիրքը եւ Երաժշտությունը: Դրանք են ձեւավորում Մարդանհատին, ոչ թե կյանքի մակերեսին սահող, մակերեսը քերող, պարզ նյութափոխանակությամբ զբաղված - միայն դրան ընդունակ արարածին, այլ Աստծո նմանությամբ կերտված-ստեղծված, Աստծո եւ Բնության գեղեցկությանը հաղորդ բարձր եւ վսեմագույն անհատին: Եվ պարզ արհեստավորի որդին է, որ թիտի անցնի իր ճանապարհը՝ առաջին Արեւածագից-Արեւագալի ոսկելույս երգերից մինչեւ Մայրամուտի արեւը, մինչեւ Մայրամուտի լույսը...

Հայ գրավոր եւ բանավոր մշակույթի գլխակոծան անկումի մեր այս ժամանակներում Կարոիս Սուրենյանը գրել է հայոց լեզվի լավագույն գրքերից մեկը: Թեւաթափ անող իրականության մեջ, երբ գռեհկությունն ու անճաշակությունը զավթել են գրականության եւ արվեստի բոլոր ոլորտները, երբ մեր շուրջը կործանվում է գրեթե ամեն բան, լույս է տեսնում Հայ գիրն ու Հայոց լեզուն էն կատարյալ գեղեցկությամբ ներկայացնող գիրք: Կարոիս Սուրենյանի գրքում ծավալվում եւ տարածվում-ընդարձակվում է մի հրաշք լեզու, որ ընթերցողի առջեւ բացում է մեր լեզվի բացառիկ հարստության վսեմական գեղեցկություններն ու հարուստ շերտերը... Մարդ մտածում է, թե այդ ինչ գեղեցիկ, հզոր եւ ուժեղ երկիր ու հայրենիք է, ինչ կարող ու զորեղ ժողովուրդ է, որ այդպիսի լեզու ունի, որ այդ լեզվով է արդում եւ ստեղծագործում: Կարոիս Սուրենյանի գիրքը արդարացնում է մեր այսօրվա գրական կյանքի գոյությունը:

Գիրքն ու երաժշտությունը մարդ են կրթում-դաստիարակում-ձեւավորում, Հավատն ու Տեղային ինքնագիտակցումը ազգ են կերտում, Ոգին է միայն, որ եթե փչի կավի վրա, կարող է մարդ ստեղծել: Իսկ ո՞վ է ստեղծում ազգի նկարագիրը, ազգի ոգին, ո՞վ է, որ կարող է կարդալ իր ազգի ճակատագրի խորհրդավոր գրերը: Հնուց անտի եւ միշտ՝ իսկական գրողը եւ ճշմարիտ արվեստագետը, իր ժողովրդի մերժված ու հալածված զավակը, չճանաչված ու չգնահատված Մարգարեն, անտեսված Տեսանողը, արհամարհված նվիրյալը, միայնակ ու մերժված անհատը... Միայնակ, բայց կյանքի ու մարդկանց, գրականության եւ արվեստի, մշակույթի, Ոգու՛ հետ: Այսպես է, որ այս գիրքը դառնում է Ոգու պատմություն: Մեր արդի արձակի գրեթե ամայի տափաստանում, մեր մտավոր խեղճության, մեր գավառական հավակնոտության, մեր սնարդարձ հիմարության, մեր աղտիմաց թվադության, մեր հուսահատ պարապության մեջ Կարոիս Սուրենյանի **«Օրագիր. 1943-2001»** գիրքը երեւույթ է, իրադարձություն...

Հայ մարդը այս գրքի էջերում պարզապես անցնում է իր կյանքի ճանապարհը՝ վաղ պատանեկությունից մինչեւ ծերություն, առաջին Արեւածագից-Արեւագալի ոսկելույս երգերից մինչեւ դեռի Մայրամուտ թեքվող արեւը, մինչեւ Մայրամուտի լույսը:

Մայրամուտի՞ արեւը, Մայրամուտի՞ արեւը՝ իր շոյող ջերմությամբ, ցրվող ու փափուկ լույսով, որ ոսկեզօծում է ամեն ինչ ու դարձնում մտերմական ու սիրելի, անցնող օրվա-ժամանակի իր խորհրդով եւ երկարող ճառագայթների մի այլ զորությամբ, երկարող սպվերների մի այլ գեղեցկությամբ...

«...Եկեալս ի մտանել արեգականն տեսայ զլոյս երեկոյիս...»:

Մայրամուտի՞ արեւը, մայրամուտի արեւի լույսը, երեկոյի՞ լույսը...

Մայրամուտի արեւի խորհրդավոր զորությունն ու գեղեցկությունը, որ այս գիրքն է...

14-16 հուլիսի 2007 թ.

Փարիզ

Հանդիպում

90-ականների վերջերին հասարակական գիտակցության մեր ընկալումների ու արժեքների տեղաշարժերը երբ ավելի առարկայացան եւ հոգեւոր-ինտելեկտուալ դաշտը ակնհայտորեն նահանջել սկսեց, գտնվեցին սակավաթիվ մարդիկ, որ գոյացող վակուումի մեջ փորձեցին ստեղծել նոր վիճակներ: (Ջանքերն ուղղված էին միջավայրի հոգեւոր էկոլոգիայի առողջացմանը): Այդ քչերից էր Արա Գուրզադյանը: Նա համախոհ ընկերների հետ նախաձեռնեց եւ 1999-ից սկսեց հրատարակել «Ռուբիկոն» գեղարվեստական-մշակութաբանական հանդեսը: Մասնագիտությամբ ֆիզիկոս՝ Արա Գուրզադյանը հումանիտար բարձր պատրաստվածություն ուներ, երկար տարիներ զբաղվել էր մշակույթի, արվեստի տեսական հարցերի ուսումնասիրությամբ, բնագրային բազմաթիվ թարգմանություններ էր կատարել. առաջին անգամ հայերեն ներկայացրել Ռուդոլֆ Շտայների «Ազատության փիլիսոփայություն» եւ Վասիլի Կանդինսկու «Հոգեւորն արվեստում» աշխատությունները (Հրայր Ստեփանյանի եւ Սերգեյ Խաչիկոզյանի հետ), որոնք լույս տեսան «Սարգիս Խաչենց» հրատարակչությամբ, որի ստեղծագործական աշխատանքային խմբի մեջ էր ինքը: Հասարակության վերափոխիչ գաղափարներ կրող մարդը անտարբեր չէր կարող մնալ կրթության գործին: Երկար տարիներ նա աշխատել է Գեղագիտության ազգային կենտրոնում, Հայկական բաց համալսարանում հիմնադրել կերպարվեստի ֆակուլտետը:

Ստեղծագործությունը Արան համարում էր «գոյության արդարացումը», ու ինքը մշտապես ինքնարարման, ինքնաստեղծման պրոցեսում էր: Նկարչությունը իր ներքին պահանջն էր. ամենաներդաշնակ ստեղծագործ ինքնադրսեւորումը: Երեւանում նկարչական աշխատանքների իր առաջին ցուցահանդեսի բացման օրն ասաց. «30 տարվա գիտակցական կյանք կա սրա հետեւում»: Այդպես էր եւ՝ «Ռուբիկոնի» պարագայում: Նման բովանդակությամբ, գաղափարական, աշխարհայացքային մոտեցումներով հանդես Հայաստանում առաջին անգամ էր լույս տեսնում: Ինտելեկտուալ հետաքրքրություն ունեցողների համար սա հանդիպումների փնտրված վայր էր՝ ներքին երկխոսություն սկսելու հնարավորություններով Գյոթեի, Ա. Կամյուի, Ա. Ժիդի, Կանդինսկու, Մատիսի, Պիկասոյի, Միրոյի, Պ. Վալերիի, Ռ. Շտայների, Էմերսընի, Մանդելշտամի, Վլ. Սոլովյովի, Մարկ Շագալի, Ջժուան-ցզիի եւ համաշխարհային մտքի շատ խոշոր երեւույթների հետ:

«Ռուբիկոնի» համար ամենայուրահատուկն ու բնորոշը՝ Արայի ներքին, հոգեւոր լիցքի ներկայությունն էր: Այն էներգիայի, որ չհեռացավ իրենից հետո էլ, հոգեկան հաղորդակցության, սիրո այն խորհուրդ-կենսանյութի, որն ապրում էր իր մեջ, որը եւ մինչեւ հիմա էլ շարունակվում է փոխանցվել: Իմացաբանության իր տեսական որոնումները, հոգեւոր վերապրումներն ու փորձը, «ներքին սիրո ֆունկցիան» ուղղված էր մարդու գերագույն նպատակին՝ ազատության գաղափարի ֆենոմենի ըմբռնմանն եւ դրա անհատական իրացմանը: «Ճշմարտության որոնումը, մարդու ամենանախնական այն բնազդը, զարգացման այն փուլում, երբ ճանաչողությունը հղիացնելով երեւակայությունը՝ վեր է ածվում ստեղծագործության, ասիճանաբար դառնում է ճշմարտածնություն, որը եւ իրական ազատության նախադայմանն է», գրում է «Ճշմարտության էթիկենտրոնում» խմբագրական հոդվածում («Ռուբիկոն», 1999, թիվ 1): Իսկ ազատությունը իր կարծիքով ծնվում է զոհաբերումից: Իր ապրած կյանքը այդպիսի զոհաբերում էր. «... Եթե մահը պարզապես ազատագրում է ձգողականությունից, ապա հարությունը ձգողականությունը դարձնում է անկշռելիություն»:

«...Հարությունը ըստ իս ամենամեծ ստեղծագործությունն է, որ չի կարող չբեղմնավորել ստեղծագործական կեցության մնացյալ ոլորտները: Սակայն այդ ամենը կապված է մահվան առեղծվածի հետ, այդ իսկ պատճառով էլ վսանգավոր է: Լույսի եւ սվերի արվեստը մեծամորֆոզվում է մահվան եւ հարության արվեստի: Սա նոր սկիզբ է, նոր հեռանկարներով» (Արա Գուրզադյան «Մակերեսներ», 2001):

50 տարին նոր բոլորած, ստեղծագործական ուժերի ծաղկուն վիճակում նա հեռացավ կյանքից: ...Տարածություն՝ անծանոթ, որի գինը կեղեքող լռությունն է, բառի (օդի) պակասից խեղդվելու պես, որը երբեմն-երբեմն հնարավոր է՝ տա հոգեապրումի թանկ զգացում՝ ակնթարթի հանդիպում... «հայցք հայցքից» հետո..., լռություն՝ մի ուրիշ «կերպարանքով»: Սա՞ է մխիթարությունը:

Բայց մխիթարություն է, որ նման մարդկանց սկսած գործը չի ընդհատվում: «Ռուբիկոնը» շարունակվեց. Սերգեյ Ստեփանյանը, որ Արայի վերջին զուգակիցը եղավ, շարունակեց նրա գործը: «Ռուբիկոնի» այս տարվա սեպտեմբերյան համարը Արայի հիշատակին է նվիրված, միանգամայն տարբեր մյուսներից. շատ հուզիչ է՝ իր ապրած կյանքի, օրերի պատառիկներից ասես կենդանի մի հուշ՝ հոդվածներ, նկարներ՝ ձեռագրային վկայություններ, օրագրային գրառումներ, բանաստեղծություններ, ներքին կենսագրություն, «հոգու տրամադրություն» ինչպես բնորոշել է խմբագիրը՝ Սերգեյ Ստեփանյանը, որ նաեւ «Սարգիս Խաչենց» հրատարակչության գլխավոր խմբագիրն է եւ դասավանդում է արտասահմանյան (անտիկ) գրականություն Երեւանի պետական համալսարանում: Անցած տարի հայերենով առաջին անգամ իր թարգմանությամբ լույս տեսան Ի. Կանտի «Զուտ բանականության քննադատություն» աշխատությունը եւ Պլատոնի «Երկերի» առաջին հատորը՝ գերմաներենից եւ հին հունարենից: Կանտի այս ֆունդամենտալ աշխատության թարգմանությունը Սերգեյը սկսել էր 8 տարի առաջ՝ 25 տարեկանում. «Կանտի գրի վրա աշխատանքները ինձ թույլ տվեցին գերմաներեն սովորել: 3-րդ կուրսում ռեֆերատ պիտի ներկայացնեի՝ Կանտի գրի մեկ բաժնին վերաբերող: Ինչպես Կանտն է ասում՝ իրեն արթնացրեց Հյումը, ինձ արթնացրեց Կանտը: Ես ուղղակի համաձայն չէի որոշ մտքերի հետ, սպիտված եղա կարդալ ամբողջ գիրքը եւ հասկացա, որ պետք է թարգմանել հայերեն»: Ի դեպ, Սերգեյ Ստեփանյանը ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1991-ին ընդունվելով ժուռնալիստիկայի բաժինը՝ մեկ տարի սովորելուց հետո թողել է, մեկնել ծառայության, 1992-94-ին մասնակցել է Նախիջեւանի սահմանամերձ հատվածներում ընթացող պատերազմական գործողություններին: 1994-ին ընդունվել է Ազգ հումանիտար համալսարան, անհատական դասընթացներ անցել պրոֆ. Լեւոն Աբրահամյանի մոտ, մասնագիտացել գերմանական դասական փիլիսոփայության մեջ: Ուսումը փորձել է շարունակել Գերմանիայում, սակայն ակադեմիական կրթության վկայականի բացակայությամբ ստիպված է եղել վերադառնալ եւ վերականգնվել բանասիրական ֆակուլտետում, ստացել է լեզվաբանության մագիստրոսի կոչում:

Ճանապարհ-սկիզբ եւ շարունակություն

- Սերգեյ, ինչպե՞ս եք գնահատում «Ռուբիկոնի» դերը ժամանակի՝ իրեն բաժին ընկած նեղ կտրվածքում (հնարավորություններ, հետաքրքրություններ), արդյոք դրսի՝ եվրոպական իրականության մեջ էլ լուրջ մշակույթն այսպես անտեսվում է:

- Անհրաժեշտաբար պետք է փաստել, որ եվրոպական իրականության մեջ «Ռուբիկոնի» եւ դրանից շատ ավելի բարձր մակարդակի եւ շատ ավելի լայն մասշտաբների, հնարավորությունների՝ թե՛ նյութական, թե՛ մարդկային ներուժի իմաստով երեւույթներ եղել են, կան եւ կլինեն: Վերադառնալով «Ռուբիկոնին»՝ կարող եմ ասել, որ նեղ շրջանակը, ընդհանուր «լուսանցքային» գոյությունը կամ «ոչ ակտուալությունը» պայմանավորված է այն իրականությամբ, որի մեջ ապրում ենք. այդ իրականության շրջանակներում չի տեղավորվում եւ դրա կողմից պահանջված չէ: Եվ առհասարակ լայն ընթերցանության համար չի կարող լինել մի հանդես, որ հետաքրքրում է ինտելեկտուալ, գեղագիտական, իմացաբանական հետաքրքրություններ: Չտրվենք վեղուծությանը, թե ինչու է իրականությունն այսպիսին, փաստենք վիճակը: Մեր նպատակն է խորացնել «Ռուբիկոնի» հնարավորությունները, որպեսզի հանդեսը փակ համակարգ չէ՝ ինքնաբերաբար գործող: Սա միջավայր է, մարդիկ են, որոնք գալիս են, բերում իրենց նյութը, թարգմանությունները, հետաքրքրությունները, եւ ասիճանաբար այն վերածվում է հանդիպումների ավելի ընդլայնված վայրի: Այսօր նյութերի այնքան առատություն կա, որ չենք հասցնում ամբողջացնել, որպեսզի անհրաժեշտություն կա դրանք հանգեցնել մեկ ընդհանուր կոնցեպցիայի:

- Ինչպիսի՞ փոփոխություններ է կրել «Ռուբիկոնը», ինչ նոր մոտեցումներ ունեք:

- Հանդեսը այժմ հակված է դեպի ավելի իմացաբանական տեքստերը, մերձեցել է փիլիսոփայությանը, ծավալների առումով նախկինի համեմատությամբ հեռացել գեղագիտությունից, արվեստից:

«Ռուբիկոնի» ամեն համար պետք է ունենա հստակ մեկ թեմատիկ առանցք, նյութերի 60 տոկոսը պիտի որոշակի դիալոգի մեջ լինեն իրար հետ, ինչպես օրինակ բառի եւ լռության, բառի եւ պատկերի խնդիրներին առնչվող համարը: Այժմ երաժշտական համար ենք պատրաստում, ունենք հարցազրույցներ, էսսեներ, երաժշտագիտական տեքստեր: Ունեցել ենք մեկ փորձ՝ Արթուր Ավանեսովի հարցազրույցը ժամանակի երաժշտական վերջին հանճարի՝ Պիեռ Բուլեզի հետ՝ պարբերաբար ստեղծագործական շփումների, զրույցների արձանագրություն: Այսինքն միտում ունենք ընդլայնվելու՝ մի կողմից թեմատիկ, իմացաբանական հարցեր, մյուս կողմից շփում՝ արտերկրի հետ: Պատրաստվում է մեկ համար՝ արտասահմանի մեր հայրենակիցների հետ հարցազրույցներ՝ Կարոլիս Քորյան, Գրիգոր Պըլեյան, Մարկ Նշանյան: Սա մի տարբերակ է դեպի դուրս, որպեսզի նրանք կարված են արտասահմանյան այժմյան փորձի հետ: Իրենք գտնվում են պրոցեսի մեջ, մի բան, որից դուրս ենք մենք:

«Ռուբիկոնի» աշխատանքների երկու մոտեցում եմ ցանկանում ինձ թույլ տալիս: Առաջինը՝ դիմում եմ մասնագետներին, այդ 60-70 տոկոսանոց առանցքային թեմային վերաբերող առաջարկներով, որ ենթադրում է նյութի եւ լեզվի իմացություն, որպեսզի աշխատել մասնագիտությամբ զուտ բանասերի հետ, ինձ համար անընդունելի սկզբունք է եւ երկրորդ՝ հնարավորին չափ օգտագործել այն մարդկանց պոտենցիալը, որոնք ինքնուրույն հետաքրքրություններ ունեն:

- Հանդեսի վերջին համարը բոլորովին տարբերվում է նախորդներից եւ դա հասկանալի է, ինչպիսին էր մոտեցումը:

- Կարեւոր էր, եւ առաջաբանում էլ դա գրել եմ, չկենտրոնանալ իր անձի վրա: Ինձ համար հետաքրքրական էր տրամադրության հասկացությունը, որ հնարավորություն էր տալիս, արդյունքում, որ հնարավորություն էր տալիս, ակնկալ էր այդպիսի գործունեության համար: Կարող ենք օբյեկտիվ պատճառներ նշել՝ նյութական, մարդկային ռեսուրսների առումով գործը կանգնեցնելու, բայց գուցե պակաս կարեւոր չէ, շարունակելու, բայց գուցե պակաս կարեւոր չէ, եւ գուցե ավելի՝ այն լիցքը, որ Արան էր դրել այդ գործի հիմքում, որը եւ ըստ էության շարունակություն հաղորդեց, նոր եկողը ստիպեց պատասխան հարցեր հողի վրա: Ովքեր Արայի հետ կենդանի հաղորդակցության հնարավորություն են ունեցել, չեն կարող չտեսնել այս նյութերի մեջ երեւացող Արային: Ինքը քիչ է գրել, իմ խնդիրն էր ներկայացնել այն գործերը, որտեղ երեւար ոչ միայն տեսաբան Արան, ինչպիսին էր նա «Ռուբիկոնի» սաբան Արան, ինչպիսին էր նա մանիֆեստում, նաեւ օրագրային Արային, բանաստեղծական Արային (պայմանականորեն, եթե բանաստեղծություններ համարենք դրանք):

- Ժամանակը որքան անցնում, լռությունը այնքան թանձրանում է:

- Այդ լռության հիմքում կարող են լինել այնպիսի պատճառներ, որ այժմ ես գուցե չկարողանամ ռացիոնալ վերլուծել: Դրանք գուցե իռացիոնալ հողից են: Արդյոք մենք առհասարակ հաղորդակի՞ց ենք այլ մեծ երեւույթներին: Չարենցի մասին գրվո՞ւմ է կարեւոր կոնցեպտուալ ինչ-որ բան, արդյոք այդ հեղինակները չեն գտնվում նույն մոռացության մեջ, պարզապես քննարկվում, վերլուծվում են ընդամենը արտաքին մակարդակով: Լռության մեջ կորչում են շատ բաներ: Պինդարոսի մի խոսքը հիշեմ. «Եթե մեր գործերը չեն գովերգվել, մնում են խավարի մեջ»: Սա ասել է հույնը 6-դ դարում՝ մ. թ. ա., երբ հունական մշակույթը ծաղկում էր ապրում: Չիսսելով երեւույթների մասին՝ մենք ի սկզբանե ինքներս մեզ դատապարտում ենք խավարի: Բայց դա գուցե ընդամենը ժամանակի հարց է:

- Հա, ի դեպ՝ Ձեր ժամանակի հագեցվածության մասին: Ինչպե՞ս եք կարգավորում այդ հարցը եւ եթե կարելի է՝ ապագայի ծրագրերի մասին: Ինչն եք ավելի կարեւորում:

- Այս առումով Պլատոնի մեկ գիրքը ինձ համար շատ ավելի կարեւոր է, որպես անհատական աշխատողի: Երբ աշխատում եմ կոլեկտիվի հետ, դա բաժանվում է բոլորիս միջեւ, սուբյեկտիվ կարեւորություն դնելը սխալ կլինի: Արդեն ավարտել եմ Պլատոնի «Երկերի» երկրորդ հատորի թարգմանությունը եւ ծանոթագրության աշխատանքները, եկող տարվա սկզբին հավանաբար լույս կտեսնի: Պլատոնի հատուն շրջանի դիալոգներն են սրանք, որ ամեն ժողովուրդ չի, որ իրեն թույլ է տվել թարգմանել, բարդագույն տեքստեր, բարդագույն բովանդակություն, բարդագույն հյուսվածք, որ դիալեկտիկական ժանրի մեջ գրված գործեր են: Սա առանցքային է եւ շատ կարեւոր քայլ Պլատոնի լոտացման գործում, որի գոյության առկայությամբ հնարավոր է որոշակի հերմենեւտիկական աշխատանքներ տանել սեփական լեզվի հետ: Զուգահեռ շարունակվելու է Հեգելի «Տրամաբանության գիտություն» աշխատության թարգմանությունը:

Թարգմանություններից դուրս կան նաեւ ուրիշ հետաքրքրություններ: Դրանք հոդվածներ են, որոնք, իհարկե, պարբերաբար գրում եմ. պատրաստում եմ գիրք «Խոսքի եւ լռության մետաֆիզիկա» խորագրով, որ խորհրդածություն է՝ կազմված խոսքի եւ լռության հետ, որոնց մետաֆիզիկական հակադրման եւ համադրման արդյունքում մենք կարող ենք նորովի որոշակել մարդու հասկացությունը: Այժմ աշխատում եմ ատենախոսական թեզի վրա՝ «Քրիստոնեական մոտիվները Հյոլդեռլինի ստեղծագործության մեջ» թեմայով:

- Ժամանակին առիթ եք ունեցել լինել եվրոպական համալսարանական միջավայրում, ուսանել այնտեղ, ի՞նչ էական տարբերություններ կան մեր եւ իրենց համակարգերի միջեւ եւ ինչպե՞ս կարող ենք մեր կրթական կառույցը վերափոխել, առողջացնել:

- Եվրոպականը (գերմանական) կայացած կառույց է, որ չնայած թերություններին՝ շարունակում է գիտություն զարգացնել եւ ունի կրթական ժառանգական մեծ փորձ. հենց այդ պրոցեսն է, որից մենք դուրս ենք մնացել: Ամենակարեւոր փաստը՝ մենք պետք է մոտենանք հարցադրումներին: Ամեն օր դրա մասին, հավատացեք, մտածում եմ, գուցե չկա այսօր պատրաստի բանաձեւ, որովհետեւ փոխել պետք է ամեն ինչ: Փոփոխություններն այն օրը կսկսվեն, երբ լսարաններում արվեն հարցադրումներ:

- Իսկ մարդկային պոտենցիալը: Չէ՞ որ հենց դրա կարիքն է զգացվում:

- Որքեսզի լինեն այդ մարդիկ, որ կարողանան նման հարցադրումներ անել, պետք է պրոցես լինի, աշխատանք պիտի լինի, աշխատանքի մեջ են նրանք ձեւավորվելու: Պատրաստի՝ դրսից ոչ մեկը չի գալու ու չի դասավանդելու: Անկախությունից ի վեր ես չգիտեմ գոնե մեկ բարձր ցենզ ունեցող գիտնական, որ եկել եւ դասավանդում է համալսարանում: Դրսից սպասելն անիմաստ է: Եվ մեծ ճշմարտություն կա դրա մեջ, այս հողից պիտի ծնվեն, արթնանան նրանք:

- Քո անձնական փորձը հաստատո՞ւմ է այս կարծիքը:

- Ինձ համար այդ պրոցեսը մեկ օր սկսել է «Սարգիս Խաչենց» թարգմանական ծրագրով: Շատ ավելի վաղ 5-դ դարում եղել է Մեսրոպյան փորձը, եւ որի շնորհիվ գուցե նաեւ դեռ գոյատեւում ենք:

- Այդման կարեւորո՞ւմ եք թարգմանական մշակույթը:

- Դա հենց առաջին ճանաչողական ակտն է: Ընդհանրապես գոյությունը մեծ թարգմանություն է՝ առաջին օրվանից սկսած. Ծննդոց գրքում էլ այդպես է ասված: Սա աստվածային գործի մարդկային թարգմանության առաջին փորձն է: Ես չեմ շոշափի մեթոդները, որ գոյություն ունեն, կարեւոր տակտատները թարգմանական սկզբունքների, որ շարադրել են Էկոն կամ Բենիամինը: Մեր պարագայում ամեն ինչ կարծես սկսվում է զրոյից, ոչ մի նախափորձ չկա:

Առաջին անհրաժեշտ քայլը, որ պետք է արվի թարգմանության պրոցեսում՝ հետեւելն է սեփական լեզվին, բնականաբար բովանդակությունը պետք է հասկանալի լինի, բայց հետեւել ինչպես է քո լեզուն աշխատում բնագրի հետ: Թարգմանությունը տվյալ լեզվի համար ունի ճանաչողական նշանակություն, ըստ այդմ էլ գոյաբանական (գոյաբանությունը եւ ճանաչողությունը միմյանցից չեն զատվում), որովհետեւ ամեն համարարիկ գոյություն հենց ճանաչողության պրոցես է:

Զրույցը ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆԻ

Վերիուշ

Ա էջից

էր եւ «կտավի» մակերեսի վրա երեւան էին գալիս ճաքեր, այդ ճաքերը, ըստ նկարիչին, կավե մակերեսը վերածում էին իսկական նկարի: Նկարիչը միջամտո՞ւմ էր այդ ճաքերու հառաջացման, թե ամեն ինչ մնում էր պատահականության, այդ մասին նկարիչին չկարողացա հարցնել: Բայց արդյունքը ուշագրավ էր: Ռոֆֆելլեր հիմնարկությունը գնել էր նկարիչի այդ գործերեն՝ թանգարանի համար: Հանկարծ նկարիչը ինձ հարց տվեց անսպասելիորեն՝ ես ինչպե՞ս իրեն չեմ հիշում: Հանդիպման առաջին պահից, կարծես, մի տեսակ ուրիշ էր ինձի հանդեպ իր նայվածքը: Ցավում եմ, որ չեմ հիշում, ըստ: Չէի հիշում: Փարիզը չե՞ս հիշում, ասաց, Համազասպյանին

Էդվարդ Միրզոյանի հետ

կական սովորության կենացներ էին խմվում: Ուրախ եւ անկաշկանդ մթնոլորտ էր: Բայց այդ օրվա իմ հիշողությանս մեջ մնացած է Մարկոսը, որ հուզված՝ արցունքները չէր կարողանում պահել: Ինձի շատ ծանոթ հայրենադարձի եւ հայրենակարոտի արցունքներ էին, հայրենի հողի վրա ըլլալու ուրախության արցունքներ: Այդ տեսակ արցունքներ այսօր մի՛ փնտրեր: Այդ տեսակ արցունքները հիմա անցած են Կարմիր գիրքին մեջ:

Կամաց-կամաց սկսեցինք իմանալ արվեստագետ Մարկոս Գրիգորյանի մասին. իր ստեղծագործությունների ցուցահանդես, հետո՝ Գրականության եւ արվեստի թանգարանում իր մեծարժեք հավաքածուի ցուցահանդեսը, որ ինքը նվիրած էր հայրենիքին: Ասաց, որ հավաքածուն ինքը միլիոն ծախ-

... ՄԱՐԿՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ

հետ հյուրանոցում: Հանկարծ հիշեցի, որ ինքը այդ չորսից մեկը պետք է ըլլար: Ինքը Մարկոս Գրիգորյանն էր: Ժամանակը կարճ էր: Լուիզը՝ մեր պահապան հրեշտակը, մեզ պետք է առաջնորդեր չէինք գիտեր ուր: Դա 1984 թիվն էր, մեր Փարիզի կարճ հանդիպումեն հինգ տարի անց:

Ժամանակը անցնում էր, եւ ահավասիկ երրորդ անգամ 1986-ին, կարծեմ, Մարկոս Գրիգորյանին անակնկալ հանդիպեցի այս անգամ իմ տանս մեջ: Մի «ֆեֆ» էի կազմակերպել կարծեմ պետական մրցանակի արժանանալուս առթիվ: Մի երեսուն հոգի հյուրեր կային մեր տանը՝ ընկերներ, նաեւ անվանի ծանոթներ, որոնց մեկ մասը դժբախտաբար չկան, կրնամ հիշել: Լավ մթնոլորտ կար: Հյուրերը եկել էին ուրախանալու: Կինս՝ Մարին, հյուրասիրության ճոխ սեղաններ էր պատրաստել: Ես սեղաններեն մեկու գլուխն էի նստել, Սիլվան՝ մի կողմս, Հրանտը՝ մյուս: Կարո՞ղ եք պատկերացնել, որ ես ինչ մագնիսական դաշտի մեջ էի ընկել, երկու ամենասուր սլաֆ լեզուներով: Բայց մթնոլորտը բարի էր: Սիլվան, վերջապես, Սիլվան էր: Երբ ձուկ հյուրասիրեցին, Սիլվան հարցուց՝ ինչ ձուկ է: Իշխան է, ասացի: Սեանի՞: Ոչ, ասացի, բայց ընտիր է: Պետք չի, ասաց: Բայց մի փիչ հետո պատառաքաղով իմ պնակես կտոր մը բերանը դրավ: Համով է, ըսավ: Կուզեմ, ըսավ: Այդ օրը ներկաներեն հիշեմ Ալեքսան Մասվելիչը, Ռուբեն Զարյանը, Սիմոն Գրաբարյանը՝ մեծանուն հունագետ, պատմաբան եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի իրական աշակերտ եւ գործը շարունակող թարգմանիչ, Սիրավը Հենրիկ, հիմա չեմ հիշում... եւ նկարիչ Սարգիս Մուրադյանը եւ «անկոչ» հյուր մը՝ Մարկոսը Գրիգորյան:

Շատ ուրախացա, որ Սարգիսը, որ Մարկոսին հին ընկերն էր, նրան իր հետը բերել էր մեր տունը: Իրապես ուրախացա այդ անակնկալ հանդիպումեն: Որովհետեւ չէի իմանում, որ ինքը Հայաստանում է: Չեմ հիշեր՝ այդ գիշեր ինչ եղավ, ինչ չեղավ: Համով ուտելիքներ կային, խմիչքներ կային եւ ըստ հայ-

ծանր վիրահատությունից հազիվ փրկվել էր մահից:

Եվ ահավասիկ մեր վերջին հանդիպման մասին: Իմացա, որ Մարկոսը հիվանդանոցում է եւ վիրահատվել է: Այս անգամ արդեն սարսափելի էր լուրը: Շահենին ըսի: Ըսավ, որ գիտի այդ մասին: Ուրեմն, ասացի, գնանք տեսության: Մարկոսը մեզ ընդունեց՝ վեր կենալով պառկած տեղից, նստելով անկողնի եզրին: Մի քանի օր է հիվանդանոցում էր, արտաքինից դատելով կարծես լուրջ բան չի կար: Ահավասիկ ինչ որ պատմեց մեզի, գրում եմ: Գիշերը առանձին էր իր մենատանը: Երկու ավազակներ կարողանում են թափանցել իր բնակարանը գիշերվա ժամը երկուսին: Ուշքի է գալիս բազկաթոռին նստած, ձեռքերը կապված, արյունլվիկ: Քնացած ժամանակ երկաթով հարվածում են գլխին, ուշքը գնում է, քարշ են տալիս բազկաթոռին, ձեռքերը կապում, հեռախոսներու լարերը կտրում: Սկսում են կտանջները եւ ծեծը եւ խոշտանգումները 83 տարեկան մարդուն՝ նոր ծանր վիրահատությունից դուրս եկած: Ծեծում են դաժանորեն: Վառված պատիրոսով վառում են ոտքերը (ինչպես 37 թվին սուրբ Հրաչյա Աճառյանի հանճարեղ անմահ գլխին վրա չեկիսը հանգցրել է իր պատիրոսը): Մարկոսը չի հայտնում մեծ գտածի տեղը: Որովհետեւ տանը պարզապես գողերու փնտրած դրամը գոյություն չուներ: Ամբողջ տունը տակնուվրա են անում եւ գազազած ծեծում են: Եվ այս դժոխքը

Մարկոս Գրիգորյան, Նելսոն Ռոքֆելլեր

տեւում է մինչեւ առավոտյան ժամը վեցը: Վերջը ձեռքի կապը թուլացնում են եւ հեռանում: Մարկոսը մի կերպ ազատվում է կապանքներից եւ խոհանոցում գտնվող հեռախոսով, որը ոճրագործները չէին նկատել, լուր է ուղարկում եւ շատ օգնությունը գիտի հասցնում է վիրաբույժի մոտ: Այդ պահուն նողկանքով մտածում էի, որ այդ ոճրագործները հայե՞ր են՝ ծնած մորից, հայ մոր կաթ կերած, նրանք չե՞ն ունեցել հայր, տատ, պապ: Փողի համար մարդ կարո՞ղ է ճիվաղ դառնալ:

Մարկոսը պատմեց այնքանը, որ ձեզի պատմեցի, եւ անցավ բուն նյութին, սկսավ պատմել իր տվայտանքներուն եւ մտահոգություններու մասին. արդեն չէր խոսում իր մարմնին հասցված վիրավորանքի մասին, կարծես մոռացել էր իր վերքերուն ցավերը: Ուրիշ ցավերու մասին էր խոսում՝ իր հայրենակիցներեն իրեն հոգիին հասցված վիրավորանքներուն մասին էր խոսում: Իրեն ասում էին, որ Գրականության եւ արվեստի թանգարանի սրահները, ուր 15 տարիներե ի վեր «ժամանակավորապես» ցուցադրվում էր հայ ժողովուրդին իր նվիրաբերած հավաքածուն, պետք է ազատեր: Ընթացքին արդեն երեք մինիստր կոչեցյալներ եկել եւ գնացել էին, բայց ոչ մեկուն չէր հետաքրքրել այդ հավաքածուին ճակատագիրը: Մարկոսը այդ մասին էր խոսում Շահենին եւ ինձի հետ, օգնություն էր խնդրում: «Մի բան մտածեցեք»,- ասում էր՝ ցիմանալով, որ հիվանդանոցից դուրս գալուց մի շաբաթ անց աչքերը փակելու էր հավիտյան:

Ոճրագործին շատ մե՞տք է իմանալ, որ ում է սպանում, ինքը եկել է գողնալու: Կրնաք ըսել, բոլոր երկիրներում էլ ոճիրներ պատահել եւ պատահում են: Գողեր, մարդասպաններ միշտ եղել են եւ կան: Բայց ի՞նչ անուն տանք այն վիրավորանքներուն, որոնց ենթարկվեցավ Մարկոսը, այն վերաբերմունքին, որուն արժանացավ հայրենի իշխանություններուն կողմե, «մշակույթի գործիչներու» կողմե: Ինքը ընդամենը փոխադարձ սեր էր սպասել, ինչպես ամեն սիրահար: Սիրահարը կրնա դժբախտ ըլլալ մերժումի հանդիպելով: Սերը զոռով չըլլար: Բայց կարծեմ մերժվիլը ավելի հետաքրքրվիլ. քան թե 15 տարի արդիլ անտարբերության մեջ՝ հուսալով եւ սպասելով, բայց չգտնելով փոխադարձ սեր:

Մարկոսը այս աշխարհեն գնաց առանց իր սպասած սիրո պատասխանը ստանալու: Ինչո՞ւ չէին ասում երեսին, որ՝ քեզ ո՞վ ըսավ, որ գաս, չե՞ս տեսնում, որ ոչ սեր ունենք մեր ուրին մեջ քեզի հանդեպ, ոչ ալ տեղ քու հավաքածուին համար, մեզ պետք չէ, հավաքե եւ տար ուր ուզում ես:

Կարծեմ օտարութենեն հայրենիք վերադարձողին գիտակցված կամ անգիտակից ակնկալածը փոխադարձ սերն է: Եթե հայրենադարձը այդ սերը չի գտնում, ուրեմն նույնն է, որ հայրենիք չի եկել. հայրենիքը դառնում է նույն օտարությունը:

Դժբախտ Մարկոսը հայրենիք եկավ, որ իր դժվար կյանքը ավարտի հայրենիքում, եւ կյանքին վերջին շաբաթը հիվանդանոցից տուն վերադառնալուց հետո երեւի մտածում էր, ենթադրում եմ, որ այս ո՞ւր է ընկել, ինչ էր երազել եւ ո՞ւր էր զարթնել:

Այստեղ ակամա հիշեցի մեր մեծագույն բանաստեղծ Վահան Թեքեյանին «Հաշտեհարդար» բանաստեղծութենեն մի քանի նախադասություններ.

Հաշտեհարդար. ինչ մնաց, կեանքէն ինծի ինչ մնաց.

Ինչ որ տուի ուրիշին, տարօրինաՂ, այն միայն...

Ինչ որ գնաց ուրիշին՝ վերադարձաւ անուշցած

Ու զօրացած՝ հոգիիս մէջ մնալու յափտեան...

Ինչ հուզումով էինք կարդում Մելգոնյան գիշերօթիկում պատանիներս Վահան Թեքեյանին: Եվ այս պահուս էլ ականջիս մեջ է Կալենցին խոսքը. «Լավ որ մարդը (Վ. Թեքեյանը) ողջ չէ եւ չի տեսնում, որ պաշտելի հայրենիքում ինչ տեսակ առեւտուր է գնում այսօր»:

Մխ, չեմ իմանում ինչ ասեմ: ■

ԲՍԲԵՐ

Բռունցքն ու գրիչը...

Բ էջից

Խմբագրի ծանոթագրությունները

1.- Գրիգոր Շենյան- հրատարակիչն ու խմբագիրը Լոս Անջելեսում լույս տեսնող «Նոր կեանք» շաբաթաթերթի: Ծագումով Լիբանանից, որտեղ հարել է 73 դաշնակցությանը, սովորել է հոդվածներ առավելաբար դաշնակցական թերթերում: Մ. Նահանգներ հաստատվելուց հետո հիմնադրել է «Նոր կեանքը», հավաքագրելով նույնպես նախկին լիբանանահայ հայտնի հրապարակագրերի՝ Տիգրան Թոսպաս, Տիգրան Ոսկունի, երգիծանկարիչ Մասիս Առարատյան եւ այլք: Եղել եւ մնում է 77 առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ու նրա խաղաղասիրության ամենաջերմ պաշտպանը, որի համար 1997-ին ենթարկվել է դաժան խոշտանգման, ենթադրաբար դաշնակցականների կողմից:

2.- Մինաս Թյուլեյան- դաշնակցական հայտնի հրապարակագիր: Խմբագրել է ՀՅԴ Եգիպտոսի պաշտոնաթերթ «Յուսաբերը», ապա Բոստոնի «Հայրենիքը»: Հայտնի է իր քունոտ հոդվածներով ընդդեմ ՌԱԿ-ի, ՀԲԸ-Միության, Խ. Հայաստանի, Վազգեն Ա կաթողիկոսի եւ էջմիածնականների: Մնայունը իրենից «Դար մը գրականութիւն» աշխատությունն է, հարուստ գրական եւ գողական տեղեկություններով:

3.- Դեմքը պատահել է 1979-ին-, Բեյրութի Թեքեյան կենտրոնում, «Զարթօնք»-ի բազմավաստակ խմբագրատեսե Գերսամ Սիսոնյանի սենյակում: Երեք երիտասարդներ, ՌԱԿ «Պայքար» ակումբից, կանացի գոպպաներով դեմքերը ծածկած, ատրճանակներ ձեռքերին անակնկալ մուտք են գործել խմբագրատեսի գրասենյակ, որտեղ այդ պահին եղել են նաեւ Գ. Սիսոնյանի օգնական Հակոբ Ավետիքյանը, կենտրոնի տնօրեն Սահակ Միքայելյանը եւ խմբագրատեսի որդին՝ Շահե Սիսոնյանը: Խմբագրատեսից պահանջել են ոտքի կանգնել եւ ձեռքերը դնել սեղանին, իսկ Հ. Ավետիքյանին եւ Ս. Միքայելյանին քաշել են դուրս, խփել եւ սպառնացել, որ հաջորդ անգամ սպանելու են, եթե նրանց մեկ էլ տեսնեն խմբագրատանը: Ըստ հավաստի տվյալների, հարձակումը կազմակերպել է ՌԱԿ տեղի անդամներից, մասնագիտությամբ դեղագործ Փանոս Թիթիզյանը, սովորակայության բարդույթով տառապող մի մարդ, փողոցային բարեր կուսակցություն բերած խառնակիչ: Այժմ բնակվում է Լոս Անջելեսում:

4.- Վահագն Տեփոյան- ռազմավար հայտնի գործիչ, հրապարակագիր, գյուտարար:

5.- Հակոբ Ծուլիկյան,- լեզվաբան, անգլերենի մասնագետ: 1963-ին հայրենադարձվել է Եգիպտոսից: Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի դասախոս, «Ազգ» օրաթերթի հիմնադիր կազմից, հայտնի իր սաստիկ թարգմանություններով:

6.- Bête noire. Ֆրանսերեն, բառացի՝ «սեւ գազան», փոխաբերաբար գործածվում է իբրեւ «աչքի փուշ», «թշնամի»:

7.- Գնել արք. Ջերեջյան.- հայտնի եկեղեցական, ճառախոս եւ խմբավար: Նախապես Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության, հետագայում Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբան: Եկեղեցական տագնապի բուռն օրերին լուրջ պայքար է մղել Անթիլիասի անջատականների դեմ: Կյանքի վերջալույսին եղել է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ:

8.- Դեմքը պատահել է 1994-ին: Կես գիշերին երկու երիտասարդներ «Ազգ»-ի խմբագրի բնակած շենքի մուտքին դառնակալ սպասելիս են եղել խմբագրությունից Հ. Ավետիքյանի վերադարձին: Օգտվելով շտամուտում տիրող մթությունից՝ նրանցից մեկը հենց վերելակում բռունցքի ուժգին 2 հարված է հասցրել Ավետիքյանի դեմքին ու փախել: Դռանից ոտք մեկ ամիս առաջ շատ ավելի դաժան ծեծի էր ենթարկվել «Առավոտ» թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը: Վերջինս, որ այդ օրերին հեռուստատեսությամբ «Դեմ առ դեմ» հեղինակային սիրված ծրագիրն էր վարում, հաղորդումներից մեկում հյուր է հրավիրում Հ. Ավետիքյանին վերջինիս ծեծից հետո, ինչը «Իրավունք» թերթի միշտ սրամիտ «ընկեր Փանջունուն» առիթ է տալիս դառնորեն հեգնելու այդ հանդիպումը՝ «Ծեծ առ ծեծ»: Ավելի, տարիներ անց «Իրավունքի» խմբագիր Հովիկ Գալաջյանը երկու անգամ ենթարկվեց նույն ճակատագրի, երկրորդը՝ հենց օրերս:

Դժբախտաբար, հայրենական մամուլի ներկայացուցիչների դեմ ոտնձգությունների ու հաշտեհարդարների շարքը սրանով չի սպառվում: Մոտ երկու տասնյակ լրագրողներ անցնող 16 տարիներին հարձակման են ենթարկվել ու ծեծվել մեծամասամբ չբացահայտված հանգամանքներում: Խմբագրատներ են հրդեհվել, նույնիսկ՝ ջարդուփշուր արվել: Անշուշտ, ամենաճակատագրականը եղել է տաղանդավոր լրագրող Տիգրան Նադալյանի սպանությունը:

Հ. Ա.

Լիբանանյան շարունակական ճգնաժամ

Լիբանանում տեղի ունեցած քաղաքական հերթական սպանությունից հետո իրավիճակը երկրում էլ ավելի է սրվել: Իր հակասիրիական հայացքներով հայտնի «Փաղանգներ» (Ֆալանգիստ) կուսակցության անդամ, 66-ամյա փաստաբան Անտուան Ղանիմի սպանությունը ցնցել է ողջ Լիբանանը: Այս սպանության առիթով տարբեր մեկնաբանություններ եւ դատապարտման խոսքեր են հնչել, ինչպես լիբանանի քաղաքական, այնպես էլ միջազգային տարբեր շրջանակներից: Լիբանանի խորհրդարանի մեծամասնության առաջնորդ Սաադ Հարիրին կատարվածի մեջ մեղադրում է Սիրիային, այդ սպանության կազմակերպիչներին բնութագրելով որպես փորոգի եւ սուր մարդկանց: Պաշտոնական Դամասկոսն արդեն հանդես է եկել հայտարարությամբ՝ դատապարտելով Ղանիմի սպանությունը եւ հերքելով իր կապը այդ իրադարձության հետ: 2005-ին՝ Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրի սպանությունից հետո սա արդեն 6-րդ քաղաքական սպանությունն է, որը տեղի է ունենում այդ երկրում եւ ամեն անգամ ահաբեկիչների թիրախ են դառնում հակասիրիական տրամադրություն ունեցող քաղաքական գործիչները: Կարող ենք ասել, որ Հարիրիի սպանությունից հետո, փաստորեն, Մեծավոր Արեւելքի այդ փոքրիկ երկիրը գտնվում է քաղաքական շարունակական ճգնաժամի մեջ: Այդ իրավիճակից դուրս գալու բոլոր փորձերը հանդիպում են թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքական ուժերի դիմադրությանը:

«Մայրիների» հայտնի հեղափոխությունից ու սիրիական բանակի հեռացումից հետո թվում էր, թե Լիբանանում նոր, ժողովրդական շարժման հիմքի վրա կայունության ժամանակաշրջան կսկսվի, սակայն իրականում հաստատվեց այն փաստը, որ երկիրը բաժանված է երկու մասի: Հարավային Լիբանանը գտնվում է «Հզբոլլահի» վերահսկողության տակ, իսկ բողոքի շարժմամբ իշխանության եկած Սինիորայի կառավարությունը վերահսկում է միայն երկրի հյուսիսային մասը: Հենց այս իրավիճակն էր նաեւ նոր խուզելա-լիբանանյան պատերազմի պատճառը, ինչի հետեւանքով ավերվեց Լիբանանի ողջ հարավը, երկիրը մի քանի տասնյակ միլիարդ դոլարների վնաս կրեց, զոհվեցին հարյուրավոր անմեղ քաղաքացիներ: Պատերազմի ավարտից հետո, անցած մեկ տարին նույնպես հանգիստ չէր, ընդդիմադիր «Հզբոլլահ» եւ «Ամալ» շարժումների ակտիվիստները բողոքի գործողություններ սկսեցին, պահանջելով Ֆաուդ Սինիորայի կառավարության հրաժարականը: Պատճառը վերջինիս կառավարության համաձայնությունն էր ՄԱԿ-ի հովանու ներքո միջազգային դատարան ստեղծելու, որը պետք է հետաքններ Ռաֆիկ Հարիրի սպանությունը: Հիշեցնենք, որ չնայած ներքին հզոր ճնշումներին Ֆուաադ Սինիորայի կառավարությունը դիմացավ եւ վարչապետը հրաժարվեց թողնել զբաղեցրած պաշտոնը: Սակայն նույնիսկ այս իրադարձություններից հետո էլ, իրավիճակը Լիբանանում շարունակում էր լարված մնալ: Նկատենք նաեւ, որ վերջին սպանությունը տեղի է ունենում Լիբանանի քաղաքական կյանքի համար կարեւորագույն մի շրջանում, երբ երկրի խորհրդարանը պետք է ընտրի նոր նախագահ, եւ բացի այդ պետք է սկսի գործել ՄԱԿ-ի ստեղծած՝ Ռաֆիկ Հարիրիի սպանությունը հետաքննող միջազգային դատարանը:

Անտուան Ղանիմը երկիր էր վերադարձել ընդամենը մի քանի օր առաջ եւ պետք է մասնակցեր նախագահի ընտրություններին: Գործող նախագահ Էմիլ Լահուդի լիազորությունները ավարտվում են եւ հասկանալի է, որ իշխող՝ «Մարտի 14 շարժում» կոչվող դաշինքը ցանկանում է այդ պաշտոնին տեսնել իր թեկնածուին: Նշենք, որ Լիբանանի խորհրդարանը կազմված է 128 անդամներից, իսկ Հարիրիի դաշինքն այնտեղ ընդամենը 68 ձայն ունի, այսինքն՝ ընդամենը 3-ով ավելի անհրաժեշտ մեծամասնությունը ստանալու համար: Նոյեմբերի 23-ին լրանում է Էմիլ Լահուդի նախագահության ժամանակը եւ խորհրդարանի խոսնակ Նաբիհ Բերին փորձում է փոխզիջման միջոցով ընդհանուր սեղանի շուրջը նստեցնել հակամետ թեւերին՝ մի ընդհանուր թեկնածուով հանդես գալու համար:

Հիշեցնենք, որ Լիբանանում, ըստ սահմանադրության, նախագահի պաշտոնը վերապահված է մարոնիտ քրիստոնյաներին, հետեւաբար միայն այդ համայնքը ներկայացնող քաղաքական գործիչը կարող է հավակնել այդ պաշտոնին: Ներկայումս նախագահի աթոռին հավակնում են Սաադ Հարիրիի թեւը ներկայացնող Բուտրոս Հարբը եւ Լավին Լահուդը, ինչպես նաեւ ընդդիմության աջակցությունը վայելող գեներալ Միշել Աունը: Չի բացառվում նաեւ Լիբանանի բանակի ներկա հրամանատար Միշել Սուլեյմանի մասնակցությունը նախագահական այս մրցավազքին:

Ինչեւէ, մինչեւ նախագահական նոր ընտրությունները մնացել է մոտ 1 ամիս եւ փորձագետները չեն բացառում, որ այդ ժամանակաշրջանը կարող է ամենածանր լինել շարունակական ճգնաժամի մեջ գտնվող Լիբանանի պատմության համար:

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Ո՞վ» հարցը մնում է առեղծվածային

Հետաքրքրական ներքաղաքական փոփոխություններ է ստեղծվել Ռուսաստանում Վիկտոր Զուբկովին վարչապետ նշանակելուց հետո: Բնական է, որ երկրի կյանքով մտահոգված թե շահագրգռված ամեն մի անձի հուզում է ամենակարեւոր հարցը՝ կես տարի հետո ո՞վ կգլխավորի Ռուսաստանը: Եթե երեկ, մինչ Զուբկովի ի հայտ գալը, կարելի էր գոնե խորհել երկու առաջին փոխվարչապետներ Սերգեյ Իվանովի ու Դմիտրի Մեդվեդեւի անձի ու նրանց գործողությունների շուրջը, ապա Վլադիմիր Պուտինի անակնկալ քայլից հետո հավակնորդի խնդիրը հայտնվել է պատային իրավիճակում: Բացարձակ անորոշություն:

Պուտինն արդեն հայտարարում է, որ կա հինգ թեկնածու՝ հիշյալ երկուսը, Զուբկովը, Նարիշկինը, Յակունինը: Սրանք՝ նրա մասնանշածները: Ամենայն հավանականությամբ նախագահական ընտրություններին կմասնակցեն նաեւ կուսակցական լիդերները՝ Զյուգանովը, Ժիրինովսկին, Յավլինսկին եւ ուրիշներ: Բայց սրանք խիստ «հնաբույր» են՝ շրջափակ ազդեցությամբ եւ հաղթանակի ոչ մի շանս չունեն: Կասպարովի մակարդակի «մի խումբ» աղմկարարների հարցն առհասարակ չի քննարկվում:

Մյուս կողմից, իսկ ինչքանո՞վ են իրական առաջին հնգյակի հնարավորությունները, երբ ցուցակը, ելնելով պրակտիկայից, ամեն պատեհ առիթով կարող է համալրվել նոր թեկնածուով: Իվանովն ու Մեդվեդեւն առնվազն զուրկ պիտի լինեն ինքնասիրությունից, որպեսզի գոնե ներքուս վիրավորված չզգան Պուտինի իմպրովիզացիայից: Իրադրությունի իմպրովիզացիայից: Իրադրությունի խրթինությունն է, որ անձայթ խրթինությունն է, որ անձայթ ռեժիսորը Ռուսաստանում ոչ ոք չի կարող Ռուսաստանում կոահել երկրի ներկայիս ղեկավարի գործողությունների հավանականությունն ու տրամաբանությունը: Կարելի է մտածել նաեւ այսպես՝ դե, ինչ տարբերություն, առջեւում ընտրություններն են եւ ժողովուրդը կգերադասի որեւէ մեկին ու վերջ: Բայց սա էլ ինքնին տեղի չի ունենա, որովհետեւ ժողովուրդը կընտրի նրան, ում մատով ցույց կտա Պուտինը: Իսկ նա առայժմ չի շտապում:

Բնականաբար, «թեժ» իրադարձության բերումով առայժմ ուշադրության կենտրոնում է նորընտիր վարչապետ Վիկտոր Զուբկովը: Եվ ինչ էլ ասեն Վիկտոր Զուբկովը: Եվ ինչ էլ ասեն Վիկտոր Զուբկովը, ընտրվելով նախագահ, կարող է որոշ ժամանակ անց «վերադարձնել» գահը Պուտինին, կամ Պուտինը կարող է նշանակվել վարչապետ ու իրականում նախագահի դեր խաղալ եւ այլն, եւ այլն:

Ռուսաստանում թեւակոխում է խորհրդարանական ու նախագահական ընտրությունների ակտիվ փուլը եւ, իհարկե, անխուսափելի կդառնան քաղաքական բեկումները, անակնկալները, աղմկոտ իրադարձությունները: Սակայն այդ բոլոր ներկայացումների ռեժիսորը կլինի Պուտինը, եւ ամեն ինչ կընթանա այն ճանապարհով, որ ուղեցույց կդարձնի երկրի բարձրագույն վարկանիշն ունեցող քաղաքացին: Իսկ եթե նկատի ունենանք այդ պետական այրի շախմատային մտածողության անկանխատեսելիությունը, ապա ստացվում է, որ առաջադրվող վարկածները սոսկ, ինչպես հիմա մոդա է ասել, վիրտուալ խաղեր են քաղաքականությամբ զբաղվող թե հետաքրքրվող մարդկանց համար:

Նույնքան հետաքրքրական է, որ Հայաստանում լրիվ հակառակ պատկերն է. հայրենյաց երկրում բոլորը գիտեն, թե ում կողմն է նախագահի «միակ» համակրանքը: Սակայն հազիվ թե որեւէ մեկն ասի, թե որ տարբերակն է գերադասելի՝ ռուսաստանյա՞ն, թե՞ հայաստանյան:

ՌՈՒԲԵՆ ՀԱԲՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

ԱՄՆ-ը պաշտպանեց Ստրաս-Կանի թեկնածությունը ԱՄՀ ղեկավարի պաշտոնում

ԱՄՆ-ը հավանություն է տվել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ղեկավարի պաշտոնում Եվրամիության առաջադրած Դոմինիկ Ստրաս-Կանի թեկնածությանը: «Ես կոչ եմ անում դրական որոշում ընդունել Ստրաս-Կանի թեկնածության առթիվ: ԱՄՆ-ը վստահ է, որ հենց այդ մարդը կկարողանա բարեփոխումներ անցկացնել եւ ԱՄՀ-ն դարձնել առավել կայուն եւ ուժեղ կազմակերպություն», երեկ հայտարարել է ԱՄՆ ֆինանսների նախարար Հենրի Օլսոնը:

Սպասվում է, որ ԱՄՀ նոր ղեկավարը կընտրվի մինչեւ սեպտեմբերի վերջը: Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ Ստրաս-Կանից բացի առաջադրված է նաեւ Չեխիայի կենտրոնական բանկի նախկին նախագահ Յոզեֆ Տոշովսկու թեկնածությունը, որին կողմ է Ռուսաստանը:

ԱՄՀ նոր ղեկավարի ընտրության հարցը ծագեց այն բանից հետո, երբ 2007-ի հուլիսին հրաժարական տվեց նախկին ղեկավար Ռոդրիգո Ռատոն: Պաշտոնապես նա հեռանում է հոկտեմբերին, իսկ մինչ այդ տնօրենների խորհուրդը պետք է իրավահաջորդ ընտրի:

Ավանդաբար ԱՄՀ ղեկավարները եվրոպացիներ են, սակայն ԱՄՆ-ի աջակցությունը բաց կարեւոր է համարվում այս կամ այն թեկնածուի ընտրության դեպքում:

Պ. Ք.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Աբխազիա գնալը՝ պատժելի...

1-ին էջից

- Կան արդյոք կոնկրետ տվյալներ Հայաստանի քաղաքացիների ներդրումների մասին:

- Նման տվյալներ ես չունեմ: Մենք ունենք տվյալներ Ռուսաստանի քաղաքացիների, այդ թվում՝ հայկական ծագմամբ, ներդրումների մասին: Հիմնականում Ռուսաստանի քաղաքացիներն են, պաշտոնական կառույցները, որոնք սեփականացնում են Աբխազիայում որոշ օբյեկտներ: Ի դեպ, վաճառում են այդ սեփականությունը Աբխազիայի ներկայիս իշխանությունները, որոնք իբր սեփականաշնորհում են իրականացնում՝ վաճառելով նաեւ սեփականատեր չունեցող օբյեկտներ:

- Նման խնդիր կա նաեւ Հարավային Օսիայում:

- Հարավային Օսիայում, ես գիտեմ հաստատ, Հայաստանի քաղաքացիները չեն մասնակցում ներդրումներին: Այնտեղ Ռուսաստանը նույն քաղաքականությունն է վարում, բացի այդ, տարածքը բավականին փոքր է:

- Նման իրավիճակում, որն Գաչեչիլաձե, ինչ կարող են անել հայկական իշխանությունները:

- Հայկական իշխանություններն արդեն որոշ միջոցներ ձեռնարկել են, եւ մենք երախտապարտ ենք դրա համար: Բավականին պատասխանատվությամբ են մոտեցել, մեր ուղարկած նամակը փոխանցվել է Առեւտրաարդյունաբերական պալատին, Արդյունաբերողների եւ գործարարների միությանը, նաեւ մամուլին: Հայաստանի իշխանություններն այս հարցում վարում են լոյալ, համարժեք քաղաքականություն:

- Պրն դեսպան, շարունակվում են Հայաստանի այն քաղաքացիների ձերբակալությունները, որոնք երբեւէ եղել են Աբխազիայում կամ Հարավային Օսիայում եւ հետո գնում են Վրաստան: Արդյոք նախազգուշական միջոցներ չե՞ն ձեռնարկվում:

- Հենց «Ազգում» դեռեւս անցյալ տարի մենք խոսեցինք այդ մասին: Այսինքն՝ դեռեւս անցյալ տարվանից ենք զգուշացրել Հայաստանի քաղաքացիներին: Բացի այդ, սահմանը խախտելու մասին Վրաստանի քր.օր.-ի այդ հոդվածը գոյություն ունի 1996-ից, բայց դրան տրվում էր տեղեկատվական բնույթ: Բայց սկսեց աշխատել 2004-ից: Եվ հատկապես Վերին Լարսի՝ 2006-ի հուլիսին Ռուսաստանի կողմից միակողմանի փակվելուց հետո այդ խախտումների թիվը շատացավ, նաեւ ավելի հստակ ու խիստ սկսեցին աշխատել մեր անցակետերը, անձնագրային ստուգումը: Հայաստանի կառավարությունն էլ արեց ամեն ինչ զգուշացնելու իր քաղաքացիներին եւ ՈՂ հայկական ծագմամբ քաղաքացիներին իր հյուպատոսարանների, դեսպանատան միջոցով: Բնականաբար, բոլորին զգուշացնել չի հաջողվում:

- Պրն. հյուպատոս, որոշ տեղեկություններով, այդ ձերբակալությունները երկրորդ խախտում են արձանագրում: Ինչ է դա նշանակում:

- Առաջին անգամ խախտում է տեղի ունեցել, երբ անցել են Աբխազիա կամ Հարավային Օսիա: Վրաստանի համար պաշտոնապես անցակետ են համարվում Բագրատաշենի, Գուգութիի, Բավրայի, Կարմիր կամրջի, Սարփիի, Վալեի սահմանային կետերը, նաեւ ծովային Բաթումի եւ Փոթիի անցակետերը: Բացի այդ, կան Վերին Լարսի եւ Կազբեկի անցակետերը, որոնցից Կազբեկում փակ է ռուսական կողմը, եւ մարդիկ ուղղակի չեն կարող հասնել վրացական սահմանին: Ներկա դրությամբ բոլոր վրացական պաշտոնական անցակետերում անձնագրում այդպիսի նշում ունեցողներին չեն թողնում Վրաստան: Հենց սահմանին այդ մարդիկ զգուշացվում են, որ Վրաստան մտնելու դեպքում նրանց կարող են ձերբակալել: Երկրորդ անգամ խախտում են կատարում, երբ հայտնվում են Վրաստանի տարածքում ոչ այս անցակետերով: (Դեսպանի հավելմամբ, վրացական սահմանապահ մարմիններին է փոխանցվել անցյալ տարի մայիսի 3-ին ավիավթարի հետեւանքով զոհվածների Աբխազիայով Ադլեր մեկնած հարազատների, նաեւ անցյալ տարի հուլիսի 8-ին Վերին Լարսի անցակետում փակված մնացած վարորդների անունները, որոնք անցել էին Վրաստանի տարածքից անօրինական համարվող Ներքին Զարամագ անցակետով՝ վրաց իշխանությունների թույլտվությամբ):

- «Ազգը» հրապարակել էր նաեւ իրեն «Վրաստանի հայրենակիցների միություն» ներկայացնող ինչ-որ կազմակերպության հայտարարությունը: Գոյություն ունի՞ նման կազմակերպություն եւ եթե հայտարարվում է 2500 զինյալների մասին, արդյոք այդ առնչությամբ անելիք չունե՞ն վրաց իշխանությունները:

- Այդ մասին տեղեկացել եմ «Ազգի» կայքէջից: Ինքս նման կազմակերպություն չեմ ճանաչում: Հատուկ հարցում եմ ուղարկել Թբիլիսի, թե արդյոք կա՞ գրանցված նման կառույց, երկրորդ, արվե՞լ է նման հայտարարություն եւ ինչ է նախատեսում ձեռնարկել կառավարությունը սահմանադրության խախտման ու պատերազմի կոչ անելու դեմ: Այս դեպքում կկիրառվեն նորմալ պետության բոլոր միջոցները՝ եթե այդ կազմակերպությունը գոյություն ունի կամ արել է նման հայտարարություն: Պետք չէ սա լուրջ ընդունել: Դա ոչ վրացական պետության, ոչ էլ վրաց ժողովրդի մոտեցումն է: Բացի այդ, նման հայտարարություն չի հրապարակվել Վրաստանում, մինչդեռ էլ ինչ իմաստ կոչ անելու: Ինչ է, կոչ են անում հայ ժողովրդին՝: Ես կտեղեկացնեմ հարցման պատասխանի մասին: Անցյալ տարի էլ իբր Ուկրաինայի վրացիներն էին ինչ-որ նման հայտարարություն արել, բայց իրականում հայտարարություն այդ կառույցը բնավ չէր արել:

- Պրն Գաչեչիլաձե, Ձեր կարծիքով, ինչո՞վ է պայմանավորված, որ Հայաստանի եւ Վրաստանի նախագահները միայն ոչ պաշտոնական այցեր են իրականացնում:

- Ինչ կարիք կա պաշտոնական այցելության, երբ ոչ պաշտոնապես կարելի է շատ հարցեր լուծել: Պաշտոնական այցելությունը նշանակում է, որ մոտ 50 մարդ էլ պետական միջոցների հաշվին պիտի մեկնեն այդ երկիր, մինչդեռ մեր նախագահները տարին առնվազն երկու անգամ հանդիպում են ոչ պաշտոնապես: Դա, կարելի է ասել, վստահության, հարաբերությունների ավելի բարձր մակարդակ է: Մեզ մեծ պատվիրակություններ պետք չեն, առկա հարցերը լուծվում են ամենաբարձր մակարդակով հանդիպումներում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/182» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Զաջուտչայ» գետի հունի մաքրում /գ. Ազատանի տարածք/, Արթիկ քաղաքի «Մովրովի» սելավատար հունի հիմնանորոգում/Արթիկ քաղաքի տարածք/, Փանիկ գյուղի սելավատար հունի մաքրում /գ. Փանիկի գյուղամիջյան տարածք/, Մեծ Մանքասար գյուղի սելավատար հունի երկու կամուրջների ե/բ խողովակների փոխում /գ.Մեծ Մանքասարի գյուղամիջյան տարածք/ աշխատանքների** ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 7750.0 ՀՀ դրամ փոխանցել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ. Մարկոսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12.30-ն:

Հանկարծ Գյումրիում չիմանան

Մոսկվայում էր ֆինլանդաբնակ նկարիչ Արամայիս Ավետիսյանը (Արմո): Երեւանի գեղարվեստի ինստիտուտն ավարտելուց հետո նա մոտ երկու տասնամյակ ապրում եւ ստեղծագործում էր Մոսկվայում, համարվում էր տեղի ալիքի ընկնող նկարիչներից մեկը: Գեղադատում էր կոմպոզիցիաներ, դիմանկարներ, բնապատկերներ, ավանգարդ, սիրում էր գրքի նկարազարդումներ եւ այլն: Այդ տարիներից գիտեինք իրար: Այնուհետեւ ամուսնացավ ֆիննուհու հետ, տեղափոխվեց Հելսինկի ու ահա արդեն 20 տարի բնավորվել է այդ հյուսիսային երկրում: Չնայած թեւակոխել է կյանքի յոթերորդ տասնամյակը, մնացել է նույն կենսուրախ, հումորաշաս, տաղանդաշատ ու զգացմունքային գյումրեցին:

- Արմո, դու ինչ սփյուռքահա՞յ ես համարում:

- Չէ, ջանըմ, ձե՞ռ ես առնում, գյումրեցուց ի՞նչ սփյուռքահայ:

- Դու պայծառ գույներ սիրող ազգային նկարիչ ես, խորթություն չե՞ն զգում այդ սառը երկրում:

- Արվեստի տեսակետից բնակության վայրն ինձ համար նշանակություն չունի: Ռուսասանն ավելի սառը երկիր է: Ես Հայաստանում մեր նկարչական ավանդներով ձեւավորված, եթե չասեմ՝ կարծրացած, մարդ եմ եւ ամեն տեղ մնացել եմ նույնը: Եթե ուզում ես իմանալ, իմ արվեստով փորձում եմ տաքացնել նրանց, տարածել մեր գեղարվեստը:

- Սացվո՞ւմ է:

- Պատկերացրու, սացվում է: Ես Ֆինլանդիայի նկարիչների միության անդամ եմ եւ ինձ հաճախ հրավիրում են մասնակցելու տարբեր վայրերում կազմակերպվող ցուցահանդեսների: Հաճելի է, որ տարբերվում եմ մյուսներից եւ գրավում այցելուների ուշադրությունը:

- Դու նկատի ունես Ֆինլանդիայո՞ւմ:

- Ոչ միայն: Ֆիններն ցուցահանդեսներ են կազմակերպում շատ երկրներում: Վերջերս, օրինակ, ցուցադրվում էինք Մարոկկոյի մայրաքաղաք Կասաբլանկայում: Ի դեպ, այնտեղ հետաքրքրական միջադեպ տեղի ունեցավ: Ինձ ասացին, որ իմ աշխատանքները խիստ դուր են եկել Եվրոմիության ներկայացուցչին եւ նա ուզում է ինձ հետ ծանոթանալ: Սովորաբար նման միջոցառումների ժամանակ նկարիչն ինքն է ներկայացնում իր կտավները, ու ես երկյուղած մտածում էի, թե ինչ կարող եմ նրան պատմել իմ կոտրած ֆիններենով կամ անգլերենով: Սակայն եկավ այդ բարձրաստիճան անձը եւ ինձ դիմեց... ընտիր արեւմտահայերենով: Հետո էլ կարդաց Սիամանթոյի եւ Վարուժանի բանաստեղծությունները: Մտերմիկ զուցում էինք, երբ մոտեցավ մեկը եւ ասաց, որ ինքն էլ ֆրանսահայ է: Եվ չնայած միջոցառմանը միայն խաղցրավենիք էին հրամցնում, հնարավոր չէր «մի բան» չխմել:

- Արամայիս Ավետիսյան՝ որ անունը դժվարամարս չէ՞ ֆիններեի ու առհասարակ եվրոպացիների համար:

- Տեղի սրամիտ հայ ընկերներս նույնիսկ ինձ համար կեղծանուն են հնարել՝ Արմոլայնեն: Բայց ես չէի ուզի, որ նույնիսկ կատակի լուրը հասներ իմ հայրենի Գյումրի. նույն օրը խաչ կխաբեն ինձ վրա: Վերջերս Հայաստանի հեռուստատեսությունը մի ֆիլմ էր նկարահանել իմ մասին եւ մի քանի անգամ ցուցադրել: Նորերս Գյումրիում էի. այ մարդ, ուր գնում եմ, մարդկանց դեմքը պայծառանում է՝ դու գյումրեցի Արմոն չե՞ս: Ժառավենը խիստ դուր էր եկել նրանց: Մի օր նույնիսկ փողոցում մոտեցավ անծանոթ մեկը եւ միանգամայն լուրջ տոնով ասաց, որ ես շատ նման եմ Ֆինլանդիայում ապրող գյումրեցի նկարիչ Արմոյին: Թե չէ.. Արմոլայնեն:

- Ֆինլանդիայում կա՞ հայ համայնք:

- Փորձում ենք ստեղծել, բայց կա հոգեբանական մի դժվարություն, որը չենք կարողանում հաղթահարել: Մեծ հայություն չկա, երեւի մի քանի հազար, բայց նրանք հավաքվել են աշխարհի զանազան հայաշատ վայրերից եւ ինչ-որ տեղ տարբերվում են իրարից սովորությամբ, մտածելակերպով, նկարագրով: Ըստ երեւույթին, ժամանակ է պետք ընդհանուր ազգային հայտարարի գալու համար:

- Եկեղեցի էլ չկա՞:

- Ավանդաբար չի եղել, հարաս հայեր էլ չկան, որ ֆինանսավորեն նոր եկեղեցու կառուցումը: Նման հոգեւոր օջախն իրոք կարող էր միավորել բոլորիս: Մեկ-մեկ հավաքվում ենք ռուսական եկեղեցում: Ակտիվ են անձնական շփումները:

- Ինչ կապերի մեջ ես Հայաստանի հետ:

- Կհավատա՞ս, Ֆինլանդիա ոտք դնող հայերն առաջին հերթին ինձ մոտ են գալիս:

- Երեւի ամենաթանձր հայը դու ես, կամ էլ չես կորցրել... խորոված անելու որ մեծ շնորհը: Հիշո՞ւմ ես, Մոսկվայի որ արվեստանոցում հենց շամփուրները դնում էիր կրակի վրա, թաղամասի բոլոր անտեր շները բուրմունքից աղեկտուր ոռնում էին:

- Ֆինլանդիայի շներն, իհարկե, ավելի «քաղաքակիրթ» են (ծիծաղում է): Դե, առանց դրա էլ չի լինի: Այցելում են ինձ նաեւ Հայաստանից եկած պաշտոնյաներ, դիվանագետներ, հասարակական գործիչներ, ինարկում ենք, թե ինչով կարող ենք օգտակար լինել մեր հայրենիքին: Մի անգամ հետաքրքրական զուգադիպություն տեղի ունեցավ: Գյումրու մեր տունը նկարչական «թեռում» ունի: Ահա եւ Հելսինկիում կազմակերպել էինք ցուցահանդես, որին մասնակցում էինք ես, եղբայրս, քույրս եւ եղբորս տղան: Իսկ այդ օրերին Ֆինլանդիայում էր գտնվում Հայաստանից եկած պաշտոնական մի պատվիրակություն, եւ ֆիննական կողմը նրանց... հրավիրել էր մեր միջոցառմանը: Անմոռաց հանդիպում էր, սրտերս լցվել էին...

- Ինչի՞ վրա ես հիմա աշխատում:

- Գուցե տարիների բերն է պատճառը, բայց վերջերս շատ եմ խորհում ցեղասպանության մասին: Ուզում եմ մեծ կտավ ստեղծել այդ թեմայով: Սակայն ինքդ ես հասկանում, որ նյութը շատ խորն է ու զգայուն եւ պետք է սկզբից յուրացնել, նոր գործի անցնել: Առհասարակ մեծ ցանկություն ունեմ անձնապես թե ֆինլանդահայերի միջոցով օգտակար լինել Եվրոպայում եղեռնի ճանաչման գործին: Պարզապես չգիտեմ, թե տեխնիկապես ինչպես կարելի է կազմակերպել: Եթե ձեր թերթը օգնի ինձ այդ հարցում, խորապես շնորհակալ կլինեմ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
Մոսկվա

ՀՈԲԵԼՅԱՆ

Ազգային գրադարանում նշվեց Մոնթե Մելիքոնյանի տարեդարձը

Մեր երկրի 16-ամյա անկախության ֆոնի վրա անընդհատ հիշատակվում են այնպիսի անուններ, ինչպիսին Մոնթե Մելիքոնյանն է: Երեկ Ազգային գրադարանում նրա հիշատակին նվիրված միջոցառմանը ներկա էին բազմաթիվ հյուրեր, որոնց թվում էր նաեւ Դանիել Երաժիշտը: Մոնթե Մելիքոնյանի մասին հնչեցին բազմաթիվ խոսքեր, գնահատականի բառեր, իսկ Դանիել Երաժիշտը ներկայացրեց Մոնթեին նվիրված մի երգ, որը հայտնաբերվել է հեռարձակման հանգամանքներում: Նրա պատմելով, ինքն այդ երգի բառերը գտել է Մոնթե Մելիքոնյանի գրեթե ամենի խաչքարի մոտ ու վերցրել: Երգի հայտնաբերման պատմությունը ներկայացնելուց հետո Դանիել Երաժիշտը երգի առաջին կատարման համար բեմ հրավիրեց լիբանանահայ Գեւորգ Հակոբյանին:

Մոնթեի գործունեությունը որպես ականավոր զորահրամանատարի եւ մարտնչող հրապարակախոսի՝ մամուլում բավականաչափ լուսաբանվել եւ ըստ արժանվույն գնահատվել է: Մոնթեն նաեւ գիտնական էր, հմուտ հնագետ եւ պատմաբան: Միջոցառման սկզբում ներկայացվեցին Մոնթեի կյանքին եւ գործունեությանը վերաբերող նյութեր, լուսանկարներ, իսկ միջոցառման շարունակությունը վերապահված էր զորահրամանատարի անունը կրող վարժարանի սաներին, ովքեր դրվագներ պատմեցին Մոնթեի կյանքից, նրա անցած մարտական ուղուց, իրենց վարժարանի առօրյայից:

Վարժարանի ուսուցիչներից մեկը նկատեց, որ վարժարանում սովորելով ոչ միայն ամրապնդվում է երիտասարդ տղաների ֆիզիկական պատրաստականությունը, այլեւ նրանք հնարավորություն են ունենում կրթվելու եւ դաստիարակվելու Մոնթեի գաղափարներով: Արցախյան պատերազմի մասնակից Տիգրան Հայազունին նշեց, որ Մոնթեի շնորհիվ դրվեց մեր երկրի անկախության հիմնաքարը. «Մոնթեն լեռան պես կանգնած է մեր մեջքին եւ իզուր չէ, որ նա միշտ մեր սրտում է»: Միջոցառման ավարտին հնչեցին Վազգեն Սարգսյանի գնահատականի խոսքերը Մոնթեի մասին. «Մոնթեն ամենա, ամենազգիվն էր աշխարհում: Իր անվան կողքին շատ բնորոշիչներ կարելի է շարադրել՝ անձնուրաց հերոս, ֆանատիկոս, բայց Մոնթեի անձը բնորոշող ամենաուժեղ, ցայտուն երանգն ազնվությունն էր»:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ,

Հայաստանում Ամերիկյան Համալսարան
Գործարար Կառավարման Դպրոց

Դասախոսություն

«Ավիաուղիների Կառավարում եւ Մարկետինգ»

Ներկայացնում է Դոկտոր Ռոբերտ Բրիսսոնը

Երեքշաբթի, Սեպտեմբերի 25, 2007 - 18:00

Հայաստանում Ամերիկյան Համալսարանի Գործարար Կառավարման Դպրոցը հպարտ է ներկայացնել ադրանիանիի մշակման եւ գովազդի գծով գործադիր տնօրեն, Ամերիկյան Ավիաուղիների տնօրենի խորհրդատու, Ամերիկյան Ավիաուղիների՝ մարկետինգի եւ համաշխարհային հաղորդակցման նախկին գործադիր, ինչպես նաեւ ավիացիայի ոլորտում համընդհանուր ճանաչում ունեցող փորձագետ՝ դոկտոր Ռոբերտ Բրիսսոնին:

Դոկտոր Բրիսսոնն իր դասախոսության ընթացքում կքննարկի տրանսպորտի միջոցների ոլորտի հարցեր, որոնք կպարզաբանեն թե ինչու է ավիաուղիների համար դժվար խնդիր հանդիսանում շահույթ ձեռք բերելը: Թե ինչպես կարող են ավիաուղիները բարելավել իրենց ռազմավարությունը եւ սպասարկման որակը, կքննարկվեն Ամերիկյան Ավիաուղիների արձագանքները սեպտեմբերի 11-ի դեպքերի վերաբերյալ:

Մուտքն ազատ է

Դասախոսությունը տեղի կունենա Հայաստանում Ամերիկյան Համալսարանի փոքր դահլիճում, 5-րդ հարկ, անգլերեն լեզվով՝ հայերեն թարգմանությամբ:

Հավելյալ տեղեկությունների համար զանգահարել Գործարար Կառավարման Դպրոց
(010) 512603 հեռախոսահամարով

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/180 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար Աշտարակ քաղաքի Ղ.Փարպեցու փողոցի, Աշտարակ քաղաքի Շահազիզի փողոցի, Աշտարակ-Բազմաղբյուր-Ղազարավան համայնքի ճանապարհների, Օշական համայնքի ճանապարհներ, Ապարանի Գ.Նժդեհի անվան փողոցի հիվանդանոց տանող ճանապարհի, ՊՄՀ Ափնայի համայնքի ճանապարհների, Քուչակ-Ծաղկաշեն համայնքի ճանապարհի, ՊՄՀ Լեռնապարի համայնքի ճանապարհների, ՊՄՀ Ավշեն-Սիփան համայնքի ճանապարհների, Վարդաբլուրի համայնքի ճանապարհների, Ն.Սասունաշեն-Վ.Բազմաբերդ համայնքի ճանապարհի, Բերքառատի համայնքի ճանապարհի, Արեգի Թ.Կրպեյանի փողոցի հիվանդանոց տանող ճանապարհի, ՊՄՀ Ակունքի համայնքի ճանապարհի, Մաստարա-Ծաղկասար համայնքի ճանապարհի, ՊՄՀ Կարմրաշեն-Ոսկեթաս-Զովասար համայնքի ճանապարհի, Մուղնի -Աշտարակ համայնքի ճանապարհի, Ծաղկահովիտի համայնքի ճանապարհի, ՊՄՀ Աղձք-Օրգով-Տեղեր համայնքի ճանապարհի, Լեռնարոտի համայնքի ճանապարհի եւ Կարբիի համայնքային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 5800 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» էրեբունու մասնաճյուղ «Բեջ-Գալ» ՍՊ ընկերության N 2477230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ. Ավետիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12:45-ը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքային օգնության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ քաղաքային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է ՀՀ Արարատի մարզի Մեծամոր համայնքում հողի սեփականաբար ելնելու հայցադիմումի եւ որոշման նախագծերով սահմանվող քաղաքային օգնությունից 85.0 կՎտ ջրատար գրգռագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքային օգնության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի քննումը տեղի կունենա 2007 թ. սեպտեմբերի 28-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքային օգնության կառավարման գործակալություն

Մեխիկոյում երկիրխանություն է

Մեխիկոյում ընթացող ախմաշի աշխարհի առաջնության 6-րդ տուրի կենտրոնական հանդիպումը Լեոն Առնյանի եւ Վլադիմիր Կրամնիկի մրցախաղն էր: Մասնագետների կարծիքով Լեոն Առնյանը կրկին դրսեւորեց իր ոչ լավագույն մարզավիճակը եւ չկարողացավ օգտագործել սպիտակ խաղաքարերի առավելությունը: Իսկ Կրամնիկն առանց երկար մտածելու, համաձայնվեց իր համար ձեռնտու ոչ-ոքին:

Մրցաշարի միանձնյա առաջատար Վիշվանաթան Անանդին չհաջողվեց երկար պահպանել իր տեղը աղյուսակի վերին հորիզոնականում: Լեկոյի հետ պարտիայում մրցակիցները որոշեցին ռիսկի չդիմել եւ շուտով հաշտություն կնքեցին: Խաղաղ ելք ունեցավ նաեւ Գրիշչուկի եւ Սվիդլերի մրցավեճը: Միակ արդյունավետ ելքը գտնվեց Գելֆանդի եւ Մորոզեւիչի մրցախաղում: Իսրայելը ներկայացնող Գելֆանդը հիանալի խաղաց եւ գեղեցիկ հաղթանակ տարավ:

Այդ հաղթանակի շնորհիվ Գելֆանդը վաստակեց 4 միավոր եւ Անանդի հետ գլխավորեց աղյուսակը: Նրանցից կես միավորով հետ են մնում Կրամնիկն ու Գրիշչուկը: Լեկոն ու Առնյանը վաստակել են 2,5-ական միավոր, Մորոզեւիչի ու Սվիդլերի օգտին գտնված է 2 միավոր:

Առաջին շրջանի վերջին՝ 7-րդ տուրում Առնյանը սեւերով կմրցի Սվիդլերի հետ: Տեղի կունենան նաեւ Կրամնիկ-Գելֆանդ, Մորոզեւիչ-Լեկո, Անանդ-Գրիշչուկ պարտիաները:

Ազատ ոճայիններն առայժմ անհաջող են հանդես գալիս

Բավլում ընթացող ըմբշամարտի աշխարհի առաջնության հերթական օրն անհաջող էր Հայաստանի ըմբիշների համար: Մրցագորգ դուրս եկած մեր երեք ըմբիշներից եւ ոչ մեկին չհաջողվեց օլիմպիական ուղեգիր նվաճել:

Մինչեւ 66 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացնում էր Ութենի օլիմպիադայի մասնակից Ժիրայր Հովհաննիսյանը: Առաջին գոտեմարտում նա հաղթեց իրանցի Թահմազիին, այնուհետեւ հաջորդ փուլում պարտության մատնեց ՀԱՀ-ի ներկայացուցչին, բայց հետագայում պարտվեց աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, ռուսաստանցի Ֆարնիեւին ու դուրս մնաց հետագա պայքարից, քանի որ վերջինիս չհաջողվեց մտնել եզրափակիչ: Իրբեկ Ֆարնիեւը կիսաեզրափակիչի ճանապարհին պարտվեց թուրք ըմբիշ Ռամազան Շահինին, որը եզրափակիչում հաղթելով կուբացի Գարսոնին, նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Շատ անհաջող էր մինչեւ 74 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրած Ռուսլան Կոկաեւի ելույթը: Նա առաջին իսկ գոտեմարտում տանուլ տալով թուրք Գյուլհանին, դուրս մնաց հետագա պայքարից: Քաշային այս կարգում ուժեղագույն ճանաչվեց ռուսաստանցի Մախաչ Մուրտազալիեւը, որը վճռորոշ գոտեմարտը շահեց ուկրաինացի Իբրահիմ Ալդատովից:

Մինչեւ 84 կգ քաշային կարգում էլ Վադիմ Լալիեւին չհաջողվեց օլիմպիական ուղեգիր նվաճել: Նա էլ առաջին իսկ գոտեմարտում զիջեց իրանցի Յազդանիին եւ ավարտեց ելույթներն աշխարհի առաջնությունում:

Այսօր մրցագորգ դուրս կգան մեր հավաքականի մյուս երկու անդամները՝ Էդգար Ենոքյանը (96 կգ) եւ Ռուսլան Բասիեւը (120 կգ): Իսկ Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը, որի 2 ըմբիշներ օլիմպիական ուղեգրեր նվաճեցին, երեկ վերադարձավ Երեւան:

Հայ մարզուհիները չկարողացան լրջորեն մրցակցել

Թաիլանդում ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնության հերթական օրն անհաջող էր Հայաստանի ըմբիշների համար: Մրցագորգ դուրս եկած մեր երեք ըմբիշներից եւ ոչ մեկին չհաջողվեց օլիմպիական ուղեգիր նվաճել:

Մինչեւ 66 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացնում էր Ութենի օլիմպիադայի մասնակից Ժիրայր Հովհաննիսյանը: Առաջին գոտեմարտում նա հաղթեց իրանցի Թահմազիին, այնուհետեւ հաջորդ փուլում պարտության մատնեց ՀԱՀ-ի ներկայացուցչին, բայց հետագայում պարտվեց աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, ռուսաստանցի Ֆարնիեւին ու դուրս մնաց հետագա պայքարից, քանի որ վերջինիս չհաջողվեց մտնել եզրափակիչ: Իրբեկ Ֆարնիեւը կիսաեզրափակիչի ճանապարհին պարտվեց թուրք ըմբիշ Ռամազան Շահինին, որը եզրափակիչում հաղթելով կուբացի Գարսոնին, նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Շատ անհաջող էր մինչեւ 74 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրած Ռուսլան Կոկաեւի ելույթը: Նա առաջին իսկ գոտեմարտում տանուլ տալով թուրք Գյուլհանին, դուրս մնաց հետագա պայքարից: Քաշային այս կարգում ուժեղագույն ճանաչվեց ռուսաստանցի Մախաչ Մուրտազալիեւը, որը վճռորոշ գոտեմարտը շահեց ուկրաինացի Իբրահիմ Ալդատովից:

Մինչեւ 84 կգ քաշային կարգում էլ Վադիմ Լալիեւին չհաջողվեց օլիմպիական ուղեգիր նվաճել: Նա էլ առաջին իսկ գոտեմարտում զիջեց իրանցի Յազդանիին եւ ավարտեց ելույթներն աշխարհի առաջնությունում:

Այսօր մրցագորգ դուրս կգան մեր հավաքականի մյուս երկու անդամները՝ Էդգար Ենոքյանը (96 կգ) եւ Ռուսլան Բասիեւը (120 կգ): Իսկ Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը, որի 2 ըմբիշներ օլիմպիական ուղեգրեր նվաճեցին, երեկ վերադարձավ Երեւան:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ Դրամավարկային հաղթականության վարչության Արտաքին տնտեսական հարաբերությունների բաժնի «մակրոտնտեսագետ» թափուր աշխատատեղի համալրման համար:

Աշխատանքի նպատակն է.

Արտաքին հաշվեկշռվածության եւ մրցունակության գնահատման նպատակով իրական փոխարժեքի եւ առեւտրի պայմանների վերլուծություն, կանխատեսում եւ դրանց կարճաժամկետ ազդեցության գնահատում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների եւ գնածի վրա:

Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.

- Վերլուծում է Հայաստանի արտաքին մրցունակությունը (իրական փոխարժեքի եւ առեւտրի պայմանների ուսումնասիրություն):
- Վերլուծում եւ գնահատում է գնածի վրա արտաքին հատվածի ազդեցությունը (մասնավորապես ներմուծման գների): Կանխատեսում է արտահանման եւ ներմուծման գները, դրանք օգտագործում դրամավարկային քաղաքականության ծրագրում:
- Վերլուծում է ՀՀ արտաքին առեւտրային գործընկեր եւ հարեւան երկրների մակրոտնտեսական իրավիճակը եւ գնահատում է ՀՀ արտաքին առեւտրի եւ հաշվեկշռվածության վրա հնարավոր ազդեցությունները:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը

- Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ ՀՀ կենտրոնական բանկում
- Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ ՀՀ կենտրոնական բանկում
- Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ միջազգային տնտեսագիտություն (խորացված), մակրոտնտեսագիտություն (խորացված), միկրոտնտեսագիտություն (միջանկյալ), մաթեմատիկական վիճակագրություն եւ էկոնոմետրիկա (միջանկյալ), դրամավարկային տեսություն (միջանկյալ), բանկային օրենսդրություն եւ նորմատիվային դաշտի տիրապետում (ներածական) , հաշվապահություն (ներածական):

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների ազատ տիրապետում:

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office), վիճակագրական ծրագրերի իմացություն:

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ **2007թ. սեպտեմբերի 28-ը:**

Պահանջվող փաստաթղթերը.

- դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am /«Մեր մասին»/«Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www. cba. am) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկը հրավիրում է սկսնակ եւ երիտասարդ իրավաբանների, որոնց հետաքրքրում է եվրամիության ֆինանսական ծառայությունների ոլորտը եւ որոնք ցանկություն ունեն աշխատել ՀՀ կենտրոնական բանկում՝ եվրամիության ֆինանսական ծառայությունների (բանկային համակարգ, աուդիտագրություն, արժեթղթերի շուկա, վճարահաշվարկային համակարգեր) ոլորտում ուսումնասիրություններ կատարելու համար:

Մասնագետի հիմնական գործառույթները՝

- եվրամիության ֆինանսական ծառայությունների (բանկային համակարգ, աուդիտագրություն, արժեթղթերի շուկա, վճարահաշվարկային համակարգեր) ոլորտի ուսումնասիրությունների կատարում,
- եվրամիության ֆինանսական ծառայությունների (բանկային համակարգ, աուդիտագրություն, արժեթղթերի շուկա, վճարահաշվարկային համակարգեր) ոլորտի եվրամիության իրավական ակտերի վերլուծություն,
- ուսումնասիրությունների եւ վերլուծությունների հիման վրա հաշվետվությունների կազմում,
- եվրամիության եւ ՀՀ ֆինանսական ծառայությունների (բանկային համակարգ, աուդիտագրություն, արժեթղթերի շուկա, վճարահաշվարկային համակարգեր) ոլորտի նորմատիվ իրավական ակտերի համեմատական վերլուծություն,
- եվրամիության անդամ երկրների փորձի ուսումնասիրություն,
- եվրամիության ֆինանսական շուկաներում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում եւ ներկայացում:

Մասնագիտական պարտադիր պահանջներ

- իրավաբանական կրթություն,
- անգլերեն լեզվի գերազանց իմացություն՝ գրավոր եւ բանավոր (անգլերեն լեզվով եվրամիության իրավական ակտերն ու այլ փաստաթղթերն ուսումնասիրելու համար),
- համակարգչային գիտելիքներ՝ MS Office, Internet.

Մասնագիտական այլ պահանջներ

- ՀՀ ֆինանսական ծառայությունների ոլորտի ՀՀ օրենսդրության իմացություն,
- եվրամիության՝ ԵՄ պատմություն, կառույցներ, իրավական համակարգ եւ այլնի իմացությունը ցանկալի է:

Այլ պահանջներ

- հաղորդակցվելու ունակություն եւ թիմային աշխատանքի կարողություն,
- վերլուծական մտածելակերպ,
- նախաձեռնողականություն,
- աշխատանքային ճկունություն,
- պատասխանատվության բարձր զգացում:

Վերոնշյալ պահանջներին բավարարող թեկնածուները ինքնակենսագրությունը (CV), ՀՀ կենտրոնական բանկում աշխատելու եւ նկարագրված գործառույթները կատարելու դդադատաձառները նկարագրող նամակ (Letter of intent)՝ անգլերեն ու հայերեն լեզուներով, ինչպես նաեւ անգլերեն լեզվի լավ իմացությունը հավաստող փաստաթուղթը կարող են ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով կամ բերվել Կենտրոնական բանկ (Երեւան, Վ.Սարգսյան 6) մինչեւ 2007թ. հոկտեմբերի 3-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 56-14-40

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկը հրավիրում է երիտասարդ մասնագետների, որոնք հետաքրքրված են ՀՀ ֆինանսական համակարգով եւ ցանկություն ունեն աշխատել ՀՀ կենտրոնական բանկում՝ արժեթղթերի շուկայի իրավախախտումների եւ ֆինանսական շուկայի չարաշահումների վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնելու համար:

Մասնագետի հիմնական գործառույթները

- ՀՀ ֆինանսական ծառայությունների ոլորտը կարգավորող օրենսդրության խախտումների ուսումնասիրություն,
- ՀՀ արժեթղթերի շուկայի չարաշահումների ուսումնասիրություն եւ վերլուծություն,
- միջազգային փորձի ուսումնասիրություն,
- ուսումնասիրությունների եւ վերլուծությունների հիման վրա հաշվետվությունների կազմում:

Մասնագիտական պարտադիր պահանջներ

- իրավաբանական կրթություն,
- քրեական, քրեական դատավարության եւ վարչական օրենսդրության իմացություն,
- անգլերեն լեզվի գերազանց իմացություն՝ գրավոր եւ բանավոր (անգլերեն լեզվով միջազգային փորձն ուսումնասիրելու համար),
- համակարգչային գիտելիքներ՝ MS Office, Internet.

Մասնագիտական այլ պահանջներ

- Միջազգային, եւ մասնավորապես, Եվրամիության երկրների արժեթղթերի շուկայի ոլորտի օրենսդրության իմացությունը ցանկալի է,
- ՀՀ ֆինանսական ծառայությունների ոլորտի ՀՀ օրենսդրության իմացությունը ցանկալի է,
- Իրավապահ մարմիններում աշխատանքային փորձը ցանկալի է:

Այլ պահանջներ

- հաղորդակցվելու ունակություն եւ թիմային աշխատանքի կարողություն,
- վերլուծական մտածելակերպ,
- նախաձեռնողականություն,
- աշխատանքային ճկունություն,
- պատասխանատվության բարձր զգացում:

Վերոնշյալ պահանջներին բավարարող թեկնածուները ինքնակենսագրությունը (CV), ՀՀ կենտրոնական բանկում աշխատելու եւ նկարագրված գործառույթները կատարելու դդադատաձառները նկարագրող նամակ (Letter of intent)՝ անգլերեն ու հայերեն լեզուներով, ինչպես նաեւ անգլերեն լեզվի լավ իմացությունը հավաստող փաստաթուղթը կարող են ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով կամ բերվել Կենտրոնական բանկ (Երեւան, Վ.Սարգսյան 6) մինչեւ 2007թ. հոկտեմբերի 3-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 56-14-40

ԿՐ մամուլի ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆ

Մրցեցին լրագրողները

«Դե ֆակտո» ամսագիրը շախմատի Հայաստանի ֆեդերացիայի եւ Երեւանի Կենտրոն համայնքի թաղապետարանի հետ համատեղ կազմակերպել էր արագ շախմատի մրցաշար ՁԼՄ ներկայացուցիչների միջեւ: Այն անցկացվեց շվեյցարական մրցակարգով, 7 տուրով:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց եւ մարմարե նավակ պատկերող փոխանցիկ գավաթով ու ՄՄՊ ընկերության «Պարույր Սեւակ» կոնյակով պարգեւատրվեց Սլավիկ Մովսիսյանը, որը վաստակել էր 6 միավոր: Նա լրացուցիչ գործակիցներով գերազանցեց նոկաուտի արդյունքի ցույց տված Վադիմ Մկրտչյանին («Գոլոս Արմենիի»), որը գրաված 2-րդ տեղի համար պարգեւատրվեց 70 հազար դրամով:

Մրցաշարի 28 մասնակիցների թվում էր նաեւ «Ազգի» խմբագիր Պարույր Հակոբյանը, որը 7 հնարավորից վաստակելով 5 միավոր զբաղեցրեց մրցանակային 3-րդ տեղը՝ արժանանալով 40 հազար դրամ մրցանակի:

Կնոջի Արկադի Անդրեասյանի 60-ամյակը

Ինչպես տեղեկացրել ենք, օգոստոսի 8-ին լրացել էր հայկական ֆուտբոլի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Արկադի Անդրեասյանի ծննդյան 60-ամյակը: Եվ ահա սեպտեմբերի 22-ին, ժ. 18.30-ին «Հանրապետական» մարզադաշտում կսկսվի Արկադի Անդրեասյանի մեծարման երեկոն, որ կազմակերպել է «Միկա» ֆուտբոլային ակումբի հովանավոր Միխայել Բաղդասարովը:

Հանդիսության ծրագրում տեղ են գտել ֆուտբոլային երկու հանդիպումներ, յուրաքանչյուրը 15 րոպե տեւողությամբ: Նախ մարզադաշտում կմրցեն «Միկան» ու «Արարատ-73-ը», ապա մեր լեգենդար վետերանների թիմը ուժերը կչափի 70-ականների թիմերի ուժերը: Միակ արդյունավետ ելքը գտնվեց Գելֆանդի եւ Մորոզեւիչի մրցախաղում: Իսրայելը ներկայացնող Գելֆանդը հիանալի խաղաց եւ գեղեցիկ հաղթանակ տարավ:

Այդ հաղթանակի շնորհիվ Գելֆանդը վաստակեց 4 միավոր եւ Անանդի հետ գլխավորեց աղյուսակը: Նրանցից կես միավորով հետ են մնում Կրամնիկն ու Գրիշչուկը: Լեկոն ու Առնյանը վաստակել են 2,5-ական միավոր, Մորոզեւիչի ու Սվիդլերի օգտին գտնված է 2 միավոր:

Առաջին շրջանի վերջին՝ 7-րդ տուրում Առնյանը սեւերով կմրցի Սվիդլերի հետ: Տեղի կունենան նաեւ Կրամնիկ-Գելֆանդ, Մորոզեւիչ-Լեկո, Անանդ-Գրիշչուկ պարտիաները:

Ֆեդերացիայի պատվիրակությունը մասնակցել է Պորտերֆիլդի հուշարկավորությանը

Երեկ Լոնդոնից 30 կմ հեռավորության վրա գտնվող արվարձաններից մեկի հեռուստատեսային աշխարհի հայտնի խաղավար մարզիչ Իան Պորտերֆիլդի հուշարկավորությունը: Ինչպես հայտնի է, Պորտերֆիլդը մահացել էր հոկտեմբերի 11-ին Լոնդոնի հոսպիտալներից մեկում: Նրա հուշարկավորությանը մասնակցել է ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայի պատվիրակությունը՝ ՀՖՖ փոխնախագահ Աշոտ Մանուկյանի գլխավորությամբ:

Deadline for submission: November 9, 2007.

AMERICAN FULBRIGHT PROGRAM

The Public Affairs Section of the Embassy of the United States of America is pleased to announce the annual competition for **Fulbright Scholarships** in the United States for the 2008 2009 academic year.

FULBRIGHT

"The Fulbright Program aims to bring a little more knowledge, a little more reason, and a little more compassion into world affairs and thereby to increase the chance that nations will learn at least to live in peace and friendship."
J. William Fulbright

The Fulbright Visiting Scholar Program awards grants to foreign scholars to lecture and/or conduct post-doctoral research at U.S. universities for an academic year or term. The Fulbright Program was named after Senator J. William Fulbright from Arkansas, who proposed the program in 1946 "to increase mutual understanding between the people of the U.S. and the people of other countries. All grants are approved by the Fulbright Foreign Scholarship Board (12 members), which is appointed by the President of the United States.

BASIC REQUIREMENTS FOR THE SCHOLARSHIP

- Armenian citizenship and residency
- Evidence of employment in the Republic of Armenia
- Ph.D.
- Proficiency in English
- Completed application package
- References
- Good health and physical condition

ELIGIBLE FIELDS ARE:

- Political Science, Economics, Social Science
- International Relations, Journalism and Law
- American Studies (History, Literature, Society & Culture of the United States)
- Chemistry, Public Health and Medicine

APPLICATION PROCEDURE AND COMPETITION SCHEDULE

Applications (hard copy) must be submitted in English. Handwritten, incomplete and late applications will not be considered. Recipients of Fulbright scholarship within the past 5 years will not be considered. All applications, including references, undergo technical and academic reviews. Candidates who satisfy all requirements will be interviewed by the Embassy Fulbright Selection Committee. The Committee will submit the names of the finalists to the Fulbright Board of Foreign Scholarships in the United States by December 15, 2007, for final approval. Selected grantees will be notified of final approval when their affiliations at U.S. universities are confirmed in April 2008.

• Applications may be obtained from the Public Affairs Office of the U.S. Embassy in Yerevan or downloaded from the Embassy web site: http://www.usa.am (Announcements). Completed applications must be submitted to Anahit Khachatryan, Cultural Affairs Assistant, Public Affairs Office, U.S. Embassy, American Avenue 1, Yerevan, who may also be contacted for more information about the scholarship at 464700, ext: 4310 (leave a message on voice mail).

FREQUENTLY ASKED QUESTIONS

- How strict are the deadlines? Deadlines are firm.
- If I was not successful in previous competitions, can I apply again? Yes.
- What are the selection criteria? The following factors are considered: professional qualifications, project proposal (quality, feasibility), how the acquired knowledge will be used upon return, English language competence, need for the project to be undertaken in the United States, personal qualifications, quality of references. Preference will be given to candidates with little or no previous experience in the United States.
- What are the basic benefits? Round trip airfare, monthly stipend, book allowance, and settling in allowance.
- Can family members accompany? Yes, but you will be financially responsible for them.
- Do I have to arrange university affiliation in the United States? It is recommended that you submit a letter of invitation from a U.S. university in your application package. If you don't know where your project can be accomplished, the affiliation will be arranged by one of the Fulbright administering agencies.
- Should I mail references together with the application package? Referrers should fax directly to the Public Affairs Office of the U.S. Embassy (46-47-35 or 46-47-42), or enclose the letters in separate sealed envelopes in the application package.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ՄԲԾՋԲ - 07/25 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության կարիքների համար՝ ՀՀ Կառավարության 31.05.07 թ.ի N 692-Ն որոշումով նախատեսված՝ 2007-ի գարնանային հեղեղումների հետեւանքով խանդված որոշ ավտոճանապարհների եւ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Այունցին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16.00-ն:

www.azgdaily.com

HEINRICH BÖLL STIFTUNG

Հարավային Կովկասում Հայնրիխ Բյոլի անվան հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակը հայտարարում է տարածաշրջանային կրթաթոշակային մրցույթ սոցիալական գիտությունների ոլորտում

Հայնրիխ Բյոլի անվան հիմնադրամը գերմանական անկախ հասարակական հիմնադրամ է, որը համագործակցում է Գերմանիայի Կանաչների կուսակցության հետ:

Հիմնադրամն օժանդակում է հասարակական հասարակության զարգացմանն ուղղված հետազոտություններին, հատկապես գենդերային հավասարության, կանանց իրավունքների եւ բնապահպանության ոլորտներում:

Տարածաշրջանային կրթաթոշակային ծրագրի նպատակը

Կրթաթոշակային ծրագիրը նախատեսում է անմիջականորեն Հարավային Կովկասի տարածաշրջանում գիտական հետազոտությունների անցկացում:

- աջակցել երիտասարդ գիտնականներին կատարելու անհատական, միջդիսցիպլինար գիտական հետազոտություններ Հարավային Կովկասում
- օժանդակել Հարավային Կովկասում բարձրակարգ մասնագետների տարածաշրջանային ցանցի ձեւավորմանը:

Մրցույթի պայմանները

Տարածաշրջանային գիտահետազոտական կրթաթոշակի հայց կարող են ներկայացնել բարձրագույն կրթություն ունեցող եւ Հարավային Կովկասի երկրներում մշտապես բնակվող մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականները (ծնված 1973-1985 թթ.): Երկու օտար (արեւմտաեվրոպական եւ ռուսերեն) լեզուների լավ իմացությունը պարտադիր է: Հայտերն ընտրելիս հատուկ ուշադրություն է դարձվելու թեմաների նորույթին եւ ժամանակակից մեթոդաբանական կողմնորոշմանը, այդ թվում նաեւ հետազոտությունների անցկացման որակյալ մեթոդների կիրառմանը:

Օժանդակություն է տրամադրվելու ստորեւ նշված թեմաների շրջանակներում իրականացվող հետազոտություններին.

1. Կենցաղի պատմություն
2. Այլախոհության եւ ռեպրեսիաների պատմություն
3. Խորհրդային մարդը հետխորհրդային երկրներում. խորհրդային իրականության հետքերը նոր պայմաններում
4. Պետությունը եւ կրոնը 20-րդ դարում
5. Նոր հայացքներ հին կոնֆլիկտների վրա
6. Ինքնությունների կառուցում
7. Միգրացիային առնչվող խնդիրներ
8. Փախստականները հաղթում. գոյատեւման ռազմավարություններ, համայնքների ձեւավորում
9. Յուրայինն ու օտարը հասարակությունում
10. Անհավասարության եւ խտրականության պրոբլեմները
11. Գենդերային դերերի փոխակերպումը
12. Քաղաքային մշակույթ
13. Հաղորդակցումը հաղթում
14. Քաղաքի կառավարման ժամանակակից մեթոդները
15. Քաղաքի սոցիալական եւ տեղեկատվական ենթակառուցվածքը
16. Քաղաքների կայուն զարգացման խնդիրը (սոցիալական, բնապահպանական եւ տնտեսական խնդիրներ)

Կրթաթոշակների տեւողությունը եւ չափը

Կրթաթոշակները տրամադրվելու են 12 ամիսների համար. 01.01.2008 31.12.2008: Կրթաթոշակների գումարը կազմում է ամսական 200 եվրո: Հիմնադրամը նախատեսում է նաեւ լրացուցիչ ծրագիր, որը ներառում է սեմինարներ, ամառային դպրոց, հրապարակումներ եւ այլն:

Ընդհանուր ցուցումներ

- Կրթաթոշակը անհատներին տրամադրվող օժանդակություն է եւ չի կարող օգտագործվել կրթաթոշակային ծրագից դուրս կատարվող նախագծերի ֆինանսավորման նպատակով:
- Մրցույթին մասնակցելու համար հայց ներկայացնող անձի որեւէ գիտական հաստատության հայցորդ կամ ատենախոսից լինելը պարտադիր չէ:
- Ընդհանուր տեղեկատվության եւ մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ հայտաթերթիկների համար կարող եք այցելել Հարավային Կովկասում Հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակի էլեկտրոնային էջ՝ www.boell.ge
- Հայտերի ներկայացման ժամկետը լրանում է 2007 թ. հոկտեմբերի 15-ին, երկուշաբթի օրը, ժամը 12:00-ին:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթեր

1. Տեղեկություններ հետեւյալ տվյալներով՝ անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվը, երկիրը, գիտական աստիճան, գիտական ատենախոսի անունը
2. Հայտաթերթիկ (տես www.boell.ge)
3. Ինքնակենսագրություն (CV)
4. Էսսե (5-ից 8 էջի սահմաններում), որը պետք է ներկայացնի մասնագիտական եւ անձնական մոտիվացիան, այն է.
   1. Ինչու եմ հետաքրքրվում տվյալ թեմայով.
   2. Ինչ գիտեմ ընտրված թեմայի վերաբերյալ.
   3. Կոնկրետ ինչ եմ պատրաստվում իրականացնել եւ ինչ մեթոդներ եմ կիրառելու.
   4. Տարեկան ատենախոսային պլանը.
   5. Երկու երաշխավորագիր գիտնականների կամ այն կազմակերպությունների ղեկավարների կողմից, որտեղ դուք ատենախոսել եք (կոնկրետ ինչ փորձով եւ գիտական ատենախոսով է հիմնավորվում երաշխավորագիրը).
   6. Բարձրագույն կրթության վկայականը (բակալավր, մագիստրոս կամ դիպլոմավորված մասնագետ) գնահատականներով.
   7. Ըստ ընտրության. հրատարակված գիտական աշխատությունների ցանկը եւ, հնարավորության դեպքում, դրանց պատճենները՝ մինչեւ 20 էջ ծավալով:

Վերը նշված փաստաթղթերը (բացի գիտական աշխատություններից) պետք է ներկայացվեն անգլերենով կամ ռուսերենով 3 օրինակից: Թերի, ինչպես նաեւ վերջնաժամկետը լրանալուց հետո եւ էլ. փոստով ներկայացված հայտերը հաշվի չեն առնվի:

Մրցույթի հայտերը ուղարկեք հետեւյալ հասցեով՝
Հարավային Կովկասում Հայնրիխ Բյոլի անվան
տարածաշրջանային գրասենյակ
Ռադիանի փող., թիվ 5, 0179, Թբիլիսի, Վրաստան

ՀՈՎՀԱՆՆԻՍ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՑԱՇԱՐԵԼ՝ 56-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 20.09.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: